Համալսարանի դասախոսների գիտահետազոտական աշխատանքների ամենամյա գիտական հոդվածների ժողովածուն հաշվետու ուստարում ընդգրկվել է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողով» գործակալության կողմից սահմանված գիտական ժողովածուների ցուցակում՝ նախապես «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ի կողմից գրանցվելով պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN) համակարգում և ստանալով համապատասխան համարանիշ:

Շարունակվել են համալսարանում իրականացվել խորհրդատվություններ, բաց դասեր, վարպետության դասեր, քննարկումներ հանրապետության գիտական, ակադեմիական հանրույթի ներկայացուցիչների, ինչպես նաև արտերկրի հեղինակավոր մասնագետների, փորձագետների մասնակցությամբ կազմակերպվել են տարաբնույթ գիտական, ուսուցողական, ճանաչողական, խորհրդատվական միջոցառումներ: Մասնավորապես, հաշվետու ուստարում հանդիպում է կայացել Հայաստանի Հանրապետության արդարադատության այնժամանակյա նախարար Հովհաննես Մանուկյանի հետ: Ռուսաստանի Դաշնության «Ռուսաց լեզու» նպատակային ծրագրի շրջանակում, Ռոսստորուդնիչեստվոյի և Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան համատեղ ջանքերով իրականացվող և արդեն ավանդական դարձած «Ռուսաց լեզվի օրեր» նախաձեռնության շրջանակներում, ռուս գրողներ Սիխայիլ Լերմոնտովի ծննդյան 200 և Աննա Ախմատովայի ծննդյան 125-ամյակների կապակցությամբ համալսարանը հյուրընկալեց Մոսկվայի Մ. Շոլխովի անվան պետական հումանիտար համալսարանի դասախոս Օլգա Անդրեևնա Դավիդովային և Ռուսական նոր համալսարանի Ռուսաց լեզու և հրատարակչական գործ ամբիոնի վարիչ Մարինա Յուրևնա Անտրոպովային, ովքեր բուհի բանասիրական ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար կարդացին դասախոսություններ՝ «Ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում» և «Ակտիվ գործընթացները ռուսաց լեզվում (բառակազմական ասպեկտով)» թեմաներով:

Տեղեկատվական ոլորտի հիմնախնդիրների շուրջ Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի բակալավրիատի և

մագիստրատուրայի ուսանողների համար «Ինֆորմացիայի տեսության և ինֆորմացիայի պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով վարպետության դաս վարեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի Ինֆորմացիայի տեսության և իմացական մոդելների բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Հարությունյանը:

Նարեկագիտության բաց դաս անցկացվեց ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների և ուսանողների, ինչպես նաև Գեղարքունյաց թեմի առաջնորդի մասնակցությամբ:

Համալսարանի ուսանողներին գործատուների ներկայացրած պահանջներին, ակնկալիքներին ծանոթացնելու նպատակով համալսարանում բաց դաս վարեց Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանը, ով աշխատաշուկայի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման պատասխանատու գործում մեծապես կարևորեց բուհերի դերակատարությունը:

Նպատակ ունենալով համալսարանականներին Գերմանիայում կրթության և գիտական հետազոտության հնարավորությունների, կրթաթոշակային ծրագրերի ներկայացումը՝ Հայաստանում գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (Deutscher Akademischer Austausch Dienst - DAAD) ներկայացուցիչները համալսարանում հանդիպում ունեցան ուսանողների և դասախոսական կազմի հետ:

Բուհի աշխատակազմի հետ ուսումնառության վերջնարդյունքների մշակման և գնահատման սկզբունքները, մասնագիտական կրթական ծրագրերի ակնկալվող ելքային արդյունքների ձեռքբերման կառուցակարգերը քննարկելու նպատակով խորհրդատվությամբ համալսարանում հանդես եկան Եվրոպական Միության «Twinning P- Հայաստանի բարձրագույն կրթության հզորացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» ծրագրի փորձագետներ, մշտական խորհրդատու Կարլ Հոլմը և Արևելյան Ֆինլանդիայի համալսարանի ավագ համակարգող, կարճաժամկետ խորհրդատու Թոմի Հափանիմը:

Իսկ Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժնի ռեգիոնալ գործառույթների կառավարիչ Օգսեն Գյուլնազարյանը ուսանողներին ներկայացրեց «Բիզնեսի կառավարում», «Սերվիս և հյուրասիրություն» թեմաներով դասընթացներին մասնակցելու հնարավորությունները: Ակտիվ համագործակցություն է ծավալվել նաև գործարար համայնքի հետ, իրականացվել են հանդիպում-քննարկումներ մարզի գործատուների հետ:

Համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների, մարզի դպրոցականների, այլ շահառուների համար ողջ ուստարվա ընթացքում Հայաստանում Ամերիկյան համալսարանի մասնագետների կողմից նորագույն մեթոդներով կազմակերպվեցին անգլերենի բազմամակարդակ ուսուցման դասընթացներ, իսկ ուսանողների համար կազմակերպվել են լրացական դասընթացներ «Նկարչական ստուդիա», «Դիզայնի ստուդիա», «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» մոդուլների շրջանակում, իրավաբանական կլինիկայում, տնտեսագետների և այլ ակումբներում:

Կարևորելով տարբեր հաստատությունների հետ համագործակցությունը, հաշվետու ուստարում հուշագրեր և նոր պայմանագրեր են կնքվել հանրապետության և

արտերկրի տարբեր հաստատությունների հետ, շարունակվել են աշխատանքները ՀՀ կրթական, գիտական, հետազոտական հաստատությունների հետ՝ փոխշահավետ, բազմաբնույթ համագործակցային հարաբերությունների հաստատման նպատակով:

Տնտեսագիտության տեսական և գործնական խնդիրների, հայ և արտասահմանյան տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող երիտասարդ մասնագետների պատրաստման ոլորտում համատեղ ուժերով կրթական, գիտահետազոտական տարբեր ծրագրերի իրականացման նպատակով համագործակցության հուշագիր է կնքվել Գավառի պետական համալսարանի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի միջև: Իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ ինստիտուտի աշխատակիցների ներգրավմամբ մասնագիտական դասընթացների վարման, համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացման, գիտամանկավարժական գործունեության արդյունքների համատեղ քննարկման և գնահատման ուղղությամբ:

Համալսարանի ուսանողների նախաավարտական և հետազոտողների գիտահետազոտական պրակտիկաները կազմակերպելու նպատակով պայմանագրեր են կնքվել «Անելիք բանկ», «Արդշինբանկ» ՓԲԸ-ների և համալսարանի միջև:

Բարձրագույն մասնագիտական կրթության, գիտահետազոտական գործունեության ոլորտներում տարբեր ծրագրերի իրականացման նպատակով համալսարանի հետ համագործակցության հուշագիր է կնքվել նաև Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Ա. Լ. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի և համալսարանի միջև:

Հիմք ընդունելով կրթության կարևորությունը անձի կայացման, հասարակության առաջընթացի, ՀՀ տնտեսության զարգացման, գործատու կազմակերպությունների մրցունակության բարձրացման, բուհ-գործատու համագործակցության զարգացման, ինչպես նաև երիտասարդների աշխատաշուկայում արագ ինտեգրման գործում՝ համաձայնագիր է կնքվել Հայաստանի գործատուների հանրապետական միության և համալսարանի միջև: Կողմերը պատրաստակամություն են հայտնել միության անդամ կազմակերպությունների և համալսարանի միջև ինստիտուցիոնալ կապերի հաստատման և զարգացման, աշխատաշուկայի պահանջների, կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետության գնահատման գործում ոլորտի վերաբերյալ հետազոտությունների իրականացման, ուսումնական ծրագրերի և կրթական չափորոշիչների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև համալսարանի ուսանողներին ընդգրկել միության կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներում, կազմակերպել լավագույն փորձի փոխանակում, վարպետության դասեր: Աշխատանքները կօգնեն նաև ԳՊՀ համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնին՝ տրամադրելով տվյալներ գործատուների մոտ առկա թափուր տեղերի վերաբերյալ:

ԵՄ Տեմպուսի տարբեր ծրագրերի շրջանակներում եվրոպական առաջատար բուհերի փորձի ուսումնասիրման արդյունքում համալսարանում մշակվեցին և ներդրվեցին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության պլանավորման և մշտադիտարկման նոր ձևաչափեր՝ առանձնացված ըստ բուհի ռազմավարական հնգամյա ծրագրի գործողությունների կատարման, պատասխանատու ստորաբաժանումների, առկա և պահանջվող ռեսուրսների, բյուջեի համապատասխան հատկացումների, հնարավոր խոչընդոտների և արդյունավետության գնահատման

ցուցիչների: Հաշվետվողական նոր կառուցակարգը կօգնի գնահատելու կառուցվածքային ստորաբաժանումների կողմից բուհի զարգացման հայեցակարգի գործողությունների պլանավորման, ինչպես նաև դրանց իրականացման արդյունավետությունը՝ միաժամանակ համադրելու բուհի առաքելության, ռազմավարական պլանավորման հետ տարեկան և հնգամյա կտրվածքով:

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացում առանցքային դեր վերապահելով մարդկային և ֆինանսական ռեսուրսներին և դրանց կառավարումը հաստատության ռազմավարական պլանավորման կարևորագույն խնդիրներից համարելով, ինչպես նաև ուսումնասիրելով միջազգային լավագույն փորձը, առաջնորդվելով բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտով, ինչպես նաև առկա մարդկային և ֆինանսական ռեսուրսների համար բուհում գործող համակարգի հիմնական առաջնահերթություններով՝ հաշվետու ուստարում համալսարանում մշակվեց և հաստատվեց երկու կանոնակարգ.

1. Գավառի պետական համալսարանում մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքներ,

2. Գավառի պետական համալսարանում ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքներ:

Բոլոնիայի գործընթացում իրականացվող շարունակական բարեփոխումներին զուգընթաց համալսարանում կարևորվում է ուսանողների և այլ շահառուների դերը որակյալ կրթական միջավայրի ձևավորման գործում, շեշտադրվում է ուսանողի ինքնուրույնության և քննադատական մտածողության աստիճանի բարձրացումը: Ուսանողների մոտ ուսման և ուսուցման գործընթացների հանդեպ պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացման նպատակով հաշվետու ուստարում մշակվեց և հաստատվեց «ԳՊՀ ուսանողի իրավունքների և պարտականությունների, ուսանողական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ ուղեցույցը», որը թարգմանվեց անգլերեն, և երկլեզու ուղեցույցը տեղադրվեց համալսարանի ինտերնետային կայքի համապատասխան հատվածամասում:

Կարևորելով համալսարանում որակյալ կրթական միջավայրի ձևավորումը, կրթության որակի ապահովումը, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի վերահսկումը, ինչպես նաև դիտարկելով կրթության որակի բարելավմանն ուղղված գործողությունները՝ համալսարանում մշակվեց և հաստատվեց Որակի ձեռնարկը, այն հայերեն և անգլերեն լեզուներով տեղադրելով համալսարանի պաշտոնական համացանցային տիրույթում:

Հաշվետու ուստարում լրամշակվեց և հաստատվեց ԳՊՀ արխիվի կանոնակարգը, ինչպես նաև համալսարանի ուսումնական, տնտեսական, տեխնիկական և այլ ստորաբաժանումների կառուցվածքը:

Շարունակվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական և ուսումնամեթոդական նյութերի տպագրման աշխատանքները, հաշվետու ժամանակահատվածում համալսարանի գիտխորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել ներքոհիշյալ աշխատանքները.

1. Լ.Ղեռնյան՝ «Ժողովրդական ասութաբանության տեսակները և գաղափարաբանությունը» (ուսումնական ձեռնարկ)

2. Վ. Ներսիսյան՝ «Բառակազմական համառոտ ուղեցույց - բառարան»-ը:

Համալսարանի գիտխորհուրդը համապատասխան ընթացակարգի համաձայն՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Լ. Ղռեջյանին շնորհել է դոցենտի գիտական կոչում և ներկայացրել ԲՈՅ-ի հաստատմանը:

Շարունակվել են համալսարանականների այցելությունները մարզի հիմնական և ավագ դպրոցներ: Գավառի պետական համալսարանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների միջև իրականացվող համագործակցության ծրագրի շրջանակում պարբերաբար բուհ են այցելել մարզի տարբեր դպրոցների աշակերտներ, մասնավորապես, Գավառի Գեորգի Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ, Գավառի ավագ, Մեծ Մասրիկի, Ակունքի միջնակարգ, Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան թիվ 1, Ս. Խոստեղյանի անվան թիվ 2 և 3. Խաչատրյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտները: Այդ հանդիպումները կազմակերպվել էին բազմազան ձևաչափերով՝ գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, մասնակցություն ուսանողական գիտաժողովին, ինտելեկտուալ խաղի անցկացում, շրջայց ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանում, այլ ուսուցողական, ճանաչողական, դաստիարակչական, մասնագիտական կողմնորոշմանը նպաստող միջոցառումներ:

Շարունակվել են աշխատանքները մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխությունների իրականացման, կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ՝ հաշվի առնելով ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում նախորդ ուստարում կատարված հարցումների արդյունքները, ամփոփիչ առեստավորման հանձնաժողովների կողմից արված առաջարկություններն ու նկատառումները: Մշակվել են նոր կրթական դասընթացներ, արդիականացվել իրականացվող դասընթացների բովանդակությունը: Հասարակական գիտությունների ամբիոնի կողմից մշակվել և իրականացվել են հետևյալ նոր դասընթացները. Ուսումնառողների գիտելիքների ստուգում և գնահատում, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից՝ Գրապայքարը և նոր գրական լեզվի ձևավորումը, Հակոբ Օշական գրողը և քննադատը, Հետպատերազմյան շրջանի հայ պատմավեպի պոետիկան, Գրաբարյան բնագրերի թարգմանություն, Օտար լեզվի և գրականության ամբիոնի կողմից՝ Թարգմանչական դպրոցներ /հայ, անգլիական, ամերիկյան/, Ֆրանսերեն դասընթացները, Հաշվապահական հաշվառման ամբիոնի կողմից մշակվել է Ծառայությունների ոլորտի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում դասընթացը, որը կիրականացվի ընթացիկ ուստարում, Ֆինանսների ամբիոնի կողմից՝ Ֆինանսական վերլուծություն, Բանկային գործունեության կարգավորում դասընթացները:

«Examination-GSU» համակարգի միջոցով նախապատրաստվել և կազմակերպվել են միջանկյալ և ամփոփիչ՝ հանրագումարային քննություններ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 10 խմբի թեստային քննություն՝ 8 դասընթացների գծով: Ուսանողների շրջանում հարցումների արդյունքները ցույց են տվել, որ թեստային համակարգով քննությունների անցկացումը դրականորեն է ընդունվում ուսանողների կողմից, սակայն արդյունքները դեռ բավարար չեն, դեռևս լուրջ աշխատանքներ կան իրականացնելու, գնահատման մեթոդները ոչ միշտ են համաձայնեցված առարկայական ծրագրերում նախապես սահմանված կրթական վերջնարդյունքներին: Բավարար չափով մշակված չէ դասընթացների թեստերի բազա՝ ուսանողների ակադեմիական շարժունության, շարունակական կրթության

կազմակերպման պարագայում նրանց գիտելիքների համակարգչային ստուգման և գնահատման համար:

Համալսարանը սերտորեն համագործակցել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կերտրոնի, Բաց հասարակության հիմնադրամի, Հայաստանում «ՏԵՄՊՈՒՄ» ծրագրի ազգային գրասենյակի, հանրապետության բոլոր պետական բուհերի, գիտակրթական այլ հաստատությունների հետ:

Աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակության բարձրացման, նրանց հետագա ծառայողական առաջխաղացման, ինչպես նաև հնարավոր գործատուներին շրջանավարտների ակադեմիական և որոշ անհրաժեշտ անձնական տվյալների տրամադրման նպատակով Տեմպուսի «HEN-GEAR» ծրագրի շրջանակներում միասնական հարթակում ներմուծված են ԳՊՀ 600 շրջանավարտների տվյալներ:

Կրթության որակի ապահովման նպատակով համալսարանի և ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների, ծնողական համայնքի միջև հետադարձ կապերի ապահովման, ԳՊՀ-ում որակի մշակույթի շարունակական զարգացման նպատակով պարբերաբար կատարվել են հարցումներ ուսանողների, շրջանավարտների շրջանում, ամփոփվել են արդյունքները, ներկայացվել ԳՊՀ գիտխորհրդի քննարկմանը, գիտխորհրդի կողմից ենթակառուցվածքային ստորաբաժանումներին տրվել են հանձնարարականներ՝ համապատասխան ուղղություններով ցուցանիշների բարելավման նպատակով: Համալսարանում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատման համար անցկացվել են նաև էլեկտրոնային առցանց հարցումներ, ընդհանուր առմամբ հարցումներին մասնակցել է շուրջ 304 ուսանող, 127 շրջանավարտ, 60 դասախոս: Ուսանողների բավարարվածության աստիճանը կազմում է 70% տոկոս:

Համալսարանը ապահովել է մշտական մասնակցություն հանրապետության, ինչպես նաև արտերկրի գործընկեր բուհերում կազմակերպվող տարբեր համաժողովների, սեմինարների, գիտաժողովների՝ նվիրված բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներին, կրթության որակին, ակտիվորեն մասնակցել ծավալված քննարկումներին, ներկայացրել առաջարկություններ:

Հաշվետու ուստարում Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին համալսարանում կազմակերպվեց ամենամյա 17-րդ գիտաժողովը: Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան 74 գիտաշխատողներ, տպագրության է հանձնվել թվով 83 հոդվածներ: Իրականացվող գիտական-հետազոտական աշխատանքների քանակը դեռևս գոհացուցիչ չէ. հոդված-դասախոս առկա հարաբերությունը՝ 0.56 է, ինչը մտահոգիչ է:

Հաշվետու ժամանակահատվածում հետևողական աշխատանքներ են կատարվել բուհում կրթության որակի ուսումնասիրման, վերահսկման և շարունակական բարձրացման, ներքին և արտաքին շահառուների կարծիքների ուսումնասիրման, դրանց վերլուծման և հաշվառման, ինչպես նաև բուհի ենթակառուցվածքային ինքնավերլուծության անցկացման, համապատասխան զեկույցի պատրաստման և ընթացակարգային որոշակի գործընթացների իրականացման ուղղությամբ:

Կարևորելով կրթական միջավայրը, մասնավորապես ուսումնական ռեսուրսները՝ հաշվետու ուստարում ևս շարունակվեցին «E-learning-GSU» համակարգում նոր դասընթացների առարկայական տիրույթների համալրման աշխատանքները՝ հասցնելով դրանց թիվը 2191-ի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այն 1960-ին էր: Թարմացվում և համալրվում են նաև համալսարանի մասնագիտական

Էլեկտրոնային գրադարանի «E-Library-GSU» նյութերը, մուտքի հնարավորություն տալով համալսարանի բոլոր ուսանողների, այդ թվում՝ նոր ընդունված ուսանողների և աշխատակիցների համար, ինչպես նաև օգտակար հղումներ՝ այլ գիտակրթական հաստատությունների էլեկտրոնային գրադարաններից օգտվելու համար: Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ գրադարանների գրքապաշարը համալրվեց նոր գրքերով: Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում գրադարանի ընթերցասրահում պարբերաբար կազմակերպվել են գրքերի ցուցադրություններ՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին, ցուցադրվել են շուրջ 50 հայալեզու և օտարալեզու մենագրություններ, վավերագրեր, փաստաթղթերի ու վկայությունների հրապարակումներ և ուսումնասիրություններ Հայոց Ցեղասպանության մասին:

Հետևողական աշխատանքներ են տարվել բուհում նյութատեխնիկական բազայի թարմացման ուղղությամբ, բարձրացել է համացանցի մատչելիության աստիճանը ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար, կառուցվածքային ստորաբաժանումները համալրվել են արդի տեխնիկական միջոցներով:

Շարունակվել են աշխատանքները հանրության շրջանում համալսարանի կրթական, գիտական, լուսավորչական, դաստիարակչական գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման ուղղությամբ:

Ուսանողները ակտիվորեն մասնակցել են հանրապետության այլ բուհերում կազմակերպվող ուսանողական հանարապետական գիտաժողովներին, մշակութային, սպորտային միջոցառումներին:

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները համագործակցել են տարածաշրջանի և հանրապետության երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ: Բուհում կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ, ինչպես նաև գեղարվեստական միջոցառումների շարք՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին, ազգային տոներին, անվանի գրողներին, ինչպես նաև երախտագիտության հանդեսներ՝ նվիրված պատվավոր բարերարներին, բարեկամներին:

2015-2016 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական զարգացման ռազմավարական ուղղությունները

ԳՊՀ զարգացման և բարեփոխման (2011-2016թթ.) հայեցակարգին համապատասխան՝ 2015-2016 ուստարում ծրագրում ենք իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. 2016-2021թթ ԳՊՀ զարգացման և բարեփոխման հայեցակարգի, ռազմավարական ծրագրի մշակում:
2. 2016-2021թթ ԳՊՀ ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման գործողությունների պլանավորում՝ հինգ տարվա համար: Նախանշված նպատակների իրականացման համար առկա և պահանջվող ռեսուրսների գնահատում, հնարավոր խոչընդոտների նախանշում, դրանց վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների պլանավորում, արդյունավետության ցուցիչների սահմանում:
3. ՀՀ օրենքների, ԿԳՆ կանոնակարգերի, այլ իրավական ակտերի փոփոխություններին ԳՊՀ կանոնակարգային հիմքերի համապատասխանեցման մշտական աշխատանքների իրականացում:

4. Կրթական ծրագրերի բովանդակության, վերջնարդյունքների, ուսուցման և ուսումնառության, ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդների վերանայում և համապատասխանեցում՝ ՀՀ հաստատված մասնագիտությունների նոր ցանկին:
5. Բուհում սահմանված առաջնահերթությունների իրականացման, դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորման և համալրման գործընթացի գնահատման համար ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության նոր համակարգի գործարկում:
6. Կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների:
7. Ուսանողների և դասավանդողների օտար լեզուների իմացության մակարդակի, դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքների շարունակական իրականացում:
8. Համալսարանում պարբերաբար անցկացվող ուսանողական հարցումների արդյունքների, թիրախային խմբերի արձագանքի, ինչպես նաև բազմագործոն (ինքնագնահատում, ղեկավարի կողմից գնահատում) գնահատման արդյունքների հաշվառմամբ՝ դասախոսների փորձնական վարկանիշավորման իրականացում, որը միտված կլինի դասախոսների արդյունավետ աշխատանքի շահադրժանը (մոտիվացմանը):
9. Մասնագիտական կրթության որակի ապահովման և վերահսկման նպատակով նոր կառուցակարգերի, գործիքների մշակման և գործարկման ուղղությամբ հանրապետությունում և եվրոպական կրթատարածքում իրականացվող զարգացումներին իրազեկվելու և մասնակցելու նպատակով մշտական աշխատանքների ծավալում:
10. Համալսարանի կառավարման համակարգի կատարելագործում, ֆակուլտետների, ամբիոնների, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության ակտիվացում:
11. ԳՊՀ գրադարաններում առկա ուսումնական նյութերի թվայնացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:
12. Էլեկտրոնային գրադարանային ֆոնդի, ուսումնամեթոդական պաշարների համալրման աշխատանքների շարունակական իրականացում, ուսանողներին հանձնարարվող ինքնուրույն աշխատանքների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման համար անհրաժեշտ գրականության հասանելիության ապահովում:
13. Ուսանողների, շրջանավարտների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում՝ կրթական ռեսուրսներից, դրանց հասանելիության աստիճանից, ուսումնական գործընթացի իրականացման որակից բավարարվածության գնահատման վերաբերյալ ուսումնասիրությունների, վերլուծությունների և դրանց արդյունքներով պայմանավորված՝ բարելավման աշխատանքների մշտական իրականացում:
14. Կրթության միջազգայնացման նպատակներից ելնելով՝ մասնագիտական կրթական ծրագրերի որակի, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ պատշաճ իրազեկման աշխատանքների իրականացում,

- համալսարանի պաշտոնական կայքի անգլերեն բաժնի տեղեկատվության շարունակական համալրում:
15. Ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության խթանման, դրա երկողմանի ուղղվածության ապահովման նպատակով օտարալեզու ուսումնական փաթեթների, օտարալեզու կրթական ծրագրերի մշակում, կրկնակի աստիճանաշնորհման և համատեղ դիպլոմների շնորհման ծրագրերի իրականացում:
 16. Համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման աշխատանքների ավարտում:
 17. Բուհ-դպրոց կապերի ամրապնդում, իրականացվող միջոցառումների բազմազանեցում, համալսարանի նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազայի, ենթակառուցվածքային հնարավորությունների տրամադրում՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում:
 18. ԳՊՀ միջազգային ծրագրերին և բուհական կոնսորցիումներին անդամակցման ընդլայնում:
 19. ԳՊՀ ամենամյա 18-րդ գիտաժողովի կազմակերպում և իրականացում՝ նվիրելով Հայաստանի անկախության 25-ամյակին:
 20. Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության և թափանցիկության բարձրացում, ֆինանսական տարբեր աղյուրների ներգրավում, հոսքերի ավելացում:
 21. Հանրապետական, տարածաշրջանային և միջազգային գիտակրթական տարածքին ինտեգրման հետևողական աշխատանքների շարունակական իրականացում:

*Ն. Ա. Կուտուզյան՝
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ասոյան Թաթուլ Արտիկի,*
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դեկանի տեղակալ՝ *Բադալյան Մարինե Միքայելի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն

Մասնագիտացումներ՝

բակալավր՝ բանասիրության բակալավր

մագիստրոս՝ բանասիրության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 148

Շրջանավարտների թիվը՝ 28

**ԳՎՎՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Գավառի պետական համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում հասարակության շահառու խմբերին: Տարածաշրջանային բուհ լինելու հանգամանքը նրան դնում է առանձնահատուկ պայմանների մեջ, որը պահանջում է ուժերի լարում, կենտրոնացում, զգոնություն և իրավիճակի սթափ գնահատում ու տիրապետում: Այն, որ Գավառի պետական համալսարանը նաև համագործակցային հարաբերություններ է հաստատել և հաստատում ինչպես հանրապետության, այնպես էլ արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, կատարում է ուսանողների ու դասախոսների փոխանակում, արդեն նշանակում է, որ անհրաժեշտ է ծավալել ջանադիր աշխատանք՝ օգտագործելով նյութատեխնիկական համապատասխան միջոցներ և պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտամանկավարժական ներուժը: Բուհերի վարկանիշավորման սանդղակում բարձր տեղ գրավելը ցույց է տալիս, որ մեր համալսարանում աշխատանքային գործընթացները կազմակերպված ու նպատակամետ բնույթ են կրում, սակայն նկատի ունենալով հասարակական գործունեության բոլոր ոլորտներում տեղի ունեցող սրընթաց զարգացումները՝ մենք պարտավոր ենք անմիջապես արձագանքել փոփոխություններին: Դա նշանակում է նոր կրթական ծրագրերի ներառում ուսումնական գործընթացում, եղածների վերանայում, ուսումնական պլանների և ծրագրերի մշտական վերանայում ու թարմացում, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների ներդրում և օգտագործում, ամբիոնային աշխատանքների ակտիվացում, աշխատանք ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ և այլն: Միաժամանակ անհրաժեշտ է կազմակերպել արված աշխատանքների քննարկում, կատարել վերլուծություն և եզրահանգում, դրանց հաշվառմամբ կազմել զարգացման հայեցակարգ:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում բոլոր հիմնական ուղղություններով 2014-2015 ուսումնական տարում հետևողականորեն իրականացվել են զարգացման հայեցակարգով նախատեսված աշխատանքները:

1. Ընդունելությունը: Հայաստանյան բուհերի թերևս ամենամեծ խնդիրը կապված է ընդունելության հետ: Ուսանողական համակազմի նվազման միտումը իր ազդեցությունն է թողնում ուսումնական գործընթացի վրա: Երեք տարվա կտրվածքով բանասիրական ֆակուլտետում եղել է ընդունելության հետևյալ պատկերը.

	Բակալավրիատ	Մագիստրատուրա	Ընդամենը
2012-2013	76	33	109
2013-2014	30	28	58
2014-2015	23	22	45

Ֆակուլտետում ուսանողների շարժը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Այլ ֆակուլտետներից կամ բուհերից տեղափոխվածներ	4
Այլ բուհ տեղափոխվածներ	1
Այլ ֆակուլտետներ տեղափոխվածներ	1
Վերականգնվածներ	2
Չեռացվածներ	4
Ազատվածներ	3
Տարկետում ստացածներ	2
Ընդամենը	17

2. Առաջադիմությունը: Ուսումնական առաջադիմությունը /տոկոսներով/ ներկայացվում է ըստ բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների՝ 1-ին և 2-րդ կիսամյակների համեմատությամբ:

Ա. Բակալավրիատ

Բաժինը	1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ			Աճը
	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	
Չայոց լեզու և գրականություն	55,56	88,89	80,00	100	100	85,00	
Ռուսաց լեզու և գրականություն	80,00	100	80,00	100	100	100	
Անգլերեն լեզու և գրականություն	77,78	82,35	66,67	100	81,25	76,19	
Ընդամենը	69,57	86,67	73,91	100	89,66	82,61	
Ընդամենը ըստ բակալավրիատի			76,77			88,66	11,89
Ուսանողների թիվը	23	30	46	22	29	46	

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 1-ին կիսամյակի համեմատությամբ 2-րդ կիսամյակում առաջադիմությունը բարձրացել է գրեթե բոլոր բաժիններում ու կուրսերում:

Ստորև ներկայացնում ենք առաջադիմության աճը տոկոսներով՝ միաժամանակ նշելով նաև ցածր առաջադիմության պատճառը կիսամյակներով.

ՉԼԳ1 - 45% - 1-ին կիսամյակում քննությանը չի ներկայացել 4 ուսանող:

ՉԼԳ2 - 11% - 1-ին կիսամյակում քննությանը չի ներկայացել 1 ուսանող:

ՉԼԳ3 - 5 % - 1-ին կիսամյակում քննությանը չի ներկայացել 3, 2-րդ կիսամյակում՝ 2 ուսանող:

ՉԼԳ1 - 20% - 1-ին կիսամյակում 1 ուսանող ստացել է անբավարար:

ՌԼԳ2 - 2-րդ կիսամյակում արձանագրվել է 100%-անոց արդյունք:

ՌԼԳ3 - 20% - 1-ին կիսամյակում քննությանը չի ներկայացել 1 ուսանող:

ԱԼ1 - 22% - 1-ին կիսամյակում քննությանը չի ներկայացել 2 ուսանող:

ԱԼ2 -1% 1-ին կիսամյակում քննությանը չի ներկայացել 3 ուսանող, 2-րդում՝ 1, անբավարար է ստացել 2 ուսանող:

ԱԼ3 - 10% 1-ին կիսամյակում քննությանը չի ներկայացել 7, 2-րդում՝ 5 ուսանող:

1-ին կուրս - 30% 2-րդ կուրս - 3% 3-րդ կուրս - 9%
Ընդամենը ըստ բակալավրիատի՝ 12%:

բ/ Մագիստրատուրա

Մագիստրատուրայում ուսանողների առաջադիմությունը հետևյալ պատկերն է ներկայացնում /տվյալները բերվում են տոկոսներով/:

Բաժինը	Մագիստրոսական ծրագիրը	1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
		1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	Աճը
Հայոց լեզու և գրականություն	Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ	100	100	40	-60
	Հայ գրականության պատմություն	50	100	60	-40
Ռուսաց լեզու և գրականություն	Թարգմանչական գործ	100	88,89	100	0
	Ռուս գրականություն	-	100	-	100
Անգլերեն լեզու և գրականություն	Թարգմանչական գործ /անգլերեն/	100	80,00	57,14	-42,86
Ուսանողների թիվը		22	28	21	
Ընդամենը		86,36	89,29	61,90	- 24,46

1-ին կիսամյակում մագիստրատուրայի 1-ին կուրսում քննություններին թույլատրվել է մասնակցելու «ԺՅԼ և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագրով սովորող 5 ուսանողներից չորսին, որոնցից 2-ն էլ բացակայել են հարգելի պատճառով, իսկ «Հայ գրականության պատմություն» մագիստրոսական ծրագրով սովորող 5 ուսանողներից բացակայել են 2-ը, «Թարգմանչական գործ /անգլերեն/» մագիստրոսական ծրագրով սովորող 7 ուսանողներից 4-ին է թույլատրվել մասնակցելու քննություններին:

Այսպիսով, ըստ մագիստրատուրայի՝ ունենք առաջադիմության հետևյալ պատկերը.

1-ին կիսամյակ /1-ին և 2-րդ կուրսերը միասին/ - 88,00%, նախորդ տարվա 74%-ի դիմաց,

2-րդ կիսամյակ /առանց 2-րդ կուրսերի/ - 61%:

2014-2015 ուստարում բանասիրական ֆակուլտետի առաջադիմության ցուցանիշներն են՝

	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ
Ուսանողների թիվը	149	118
Առաջադիմությունը	80,54%	83,90%

Նախորդ ուստարվա համեմատ առաջադիմությունը համապատասխանաբար աճել է 9% և 2%:

զ/ Ամփոփիչ ատեստավորման քննություններ

2014-2015 ուստարվա քննությունների առանձնահատկությունն այն էր, որ ինչպես շատ բուհերում, այնպես էլ Գավառի պետական համալսարանում բակալավրիատի շրջանավարտները սակավաթիվ էին: Բանասիրական ֆակուլտետը բակալավր շրջանավարտ չթողարկեց: Իրենց մագիստրոսական թեզերը պաշտպանեցին մագիստրատուրայի ուսանողները: Ունենք հետևյալ արդյունքները.

Հայոց լեզու և գրականություն – մասնակցել է 6 ուսանող, 6-ն էլ ստացել են գերազանց,

Ռուսաց լեզու և թարգմանչական գործ - մասնակցել է 9 ուսանող, 9-ն էլ ստացել են գերազանց,

Ռուս գրականություն-մասնակցել է 3 ուսանող, բոլորն էլ ստացել են գերազանց գնահատականներ:

Անգլերեն լեզու և գրականություն - մասնակցել է 9 ուսանող, որից 5 գերազանց և 4 լավ:

Ատեստավորման քննությունները հանձնել է հայոց լեզվի և գրականության բաժնի՝ նախորդ տարիներին ավարտական քննություններին չմասնակցած 1 ուսանող, որը «Հայոց լեզու» առարկայից ստացել է բավարար, իսկ «Հայ գրականության պատմություն» առարկայից՝ լավ գնահատականներ: Ուսանողների կողմից գնահատականների վերաբերյալ բողոքարկում չի եղել: Քննություններից հետո հանձնաժողովների նախագահներն ու անդամները իրենց գոհունակությունն արտահայտեցին աշխատանքային պայմաններից, ուսանողների գիտելիքների մակարդակից: Արվեցին նաև որոշ առաջարկություններ, որոնք ներառվել են ֆակուլտետի զարգացման հայեցակարգում:

3.Կրթական ծրագրեր: Կրթության որակի բարձրացմանը միտված աշխատանքները համալսարանում անընդհատական բնույթ են կրում: Դա նշանակում է, որ պետք է ձեռքը ժամանակի զարկերակին պահել և կյանքի առաջադրած պահանջներն արտացոլել ուսուցման գործընթացում: Դա նաև ստիպում է ուշադրության կենտրոնում պահել ուսպլաններն ու առարկայական ծրագրերը՝ դրանցում ներառելով նորը, վերանայելով, թարմացնելով և ըստ անհրաժեշտության լրացնելով հինը: Նշված նկատառումներով բանասիրական ֆակուլտետի ամբիոնների միստերում պարբերաբար քննարկվել են ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի հետ կապված հարցեր, արվել են առաջարկություններ, որոնք համապատասխան հիմնավորումներով ներկայացվել են ֆակուլտետի խորհրդին՝ քննարկելու և լուծում տալու նպատակով: Այսպես,

մագիստրատուրայի «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» բաժնի 1-ին կուրսում «Շարահյուսական կաղապարները ժամանակակից հայոց լեզվում» առարկայի փոխարեն մտցվել է «Մխիթարյանները և արևմտահայերենի հարցերը» դասընթացը այն նկատառումով, որ այն հնարավորություն է տալիս ուսումնասիրելու արևմտահայերենի ձևավորման և զարգացման ընթացքը, միաժամանակ արժևորելու Մխիթարյան միաբանության դերը հայերենի այդ լեզվաորակի կանոնարկման և ընդհանրապես հայերենագիտության մեջ: Մագիստրոսական ծրագրերից որոշակի հիմնավորումներով հանվել են նաև «Ձեռագրագիտություն և հնագիտություն», «Կիլիկյան հայ մշակույթը և վերածնությունը», «Դասական լեզուներ» դասընթացները, որոնք փոխարինվել են «Հակոբ Օջական», «Հետպատերազմյան շրջանի հայ պատմավեպի պոետիկան», «Անկախության շրջանի հայ արձակը», «Վրացական գրականություն», «Գրաբարյան բնագրերի թարգմանություն» առարկաներով: Առարկայական փոփոխություններ ռուսաց լեզվի և գրականության բաժնում չեն եղել: Անգլերեն լեզվի և գրականության մասնագիտությամբ մագիստրատուրայի 1-ին կուրսում «Տեքստագիտություն» առարկայի փոխարեն մտցվել է «Թարգմանչական դպրոցներ» դասընթացը:

Բակալավրիատում արտասահմանյան գրականությունը ներկայացվել է ըստ շրջանների: Կազմակերպվել են վարպետության դասեր, դասալսումներ, քննարկումներ, որոնք օգտակար են եղել փորձի փոխանակման, մեթոդական պատրաստվածության բարձրացման առումներով:

Ուսումնական պլաններում, առարկայական ծրագրերում և թեմատիկ պլաններում փոփոխությունները կատարվել են՝ հաշվի առնելով կիսամյակային 16- շաբաթյա ուսումնական գործընթացը:

4.Պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Կրթական ծրագրերի իրականացումը ապահովում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, որի մեծ մասը գիտական աստիճաններ և կոչումներ ունեցող, մասնագիտական-մանկավարժական հմտությունների և կարողությունների տիրապետող գիտնականներ են: 2014-2015 ուսումնական տարում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի է արժանացել Ա. Առաքելյանը, բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան է ստացել Ն. Պոտապովան, դոցենտի գիտական կոչում է ստացել բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Ղեջյանը: Ֆակուլտետի դասախոսները ուստարվա ընթացքում մասնակցել են գիտաժողովների, սեմինարների, կազմակերպել են բաց դասեր: Կարևոր հանգամանք է այն, որ ամբիոններում կազմակերպվել են քննարկումներ, որտեղ շոշափվել են հայոց լեզվին ու գրականությանը, հայ մշակույթի տարբեր ոլորտներին վերաբերող թե՛ պատմական, թե՛ արդիական հնչեղություն ունեցող տարաբնույթ հարցեր, ինչպես «Հայերենի դրսևորումը արդի փուլում», «Մշակութային ներթափանցումներ», «Արևելյան և հայ մշակույթների առնչությունները», «Նարեկացին և հոգևոր մշակույթը», «Արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդիրները» և այլն: Կարծում ենք, որ այսպիսի քննարկումներին պետք է մասնակից դարձնել նաև ուսանողներին, մասնավորապես ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային կառույցին:

Ֆակուլտետի դասախոսների հեղինակությամբ լույս են տեսել մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ. Վ. Կատվայան. «Բարբառագիտական ուսումնասիրություններ», Ա. Առաքելյան. «Գերմանական փիլիսոփայական վեպը. Թոմաս Ման», Լ. Ղեջյան. «Ժողովրդական ասութաբանության

գաղափարախոսությունը», Վ. Ներսիսյան. «Բառակազմական համառոտ ուղեցույց-բառարան»: Նրանք նաև մասնակցել են համալսարանում դեկտեմբեր ամսին կայացած ամենամյա գիտաժողովին՝ հանդես գալով հետաքրքիր զեկուցումներով:

5. Ուսանողների հետ տարվող աշխատանքները: Ֆակուլտետում շատ են կարևորվում ուսանողական համակազմի, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքները: Համալսարանական միջավայրի աշխուժությունն ու ակտիվությանը մեծ մասամբ պայմանավորված է ուսխորհրդի, ուսանողական գիտական ընկերության ծավալած գործունեությամբ: Սովորաբար 1-ին կիսամյակում նրանց գործունեության մեջ որոշ պասիվություն է նկատվում, իսկ 2-րդ կիսամյակում դառնում է բավականին ակտիվ: Նշված մարմինների ինչպես համալսարանական, այնպես էլ ֆակուլտետային կառույցներում ընդգրկված ուսանողները մեծ ակտիվություն ու նախաձեռնություն են ցուցաբերել և՛ համահամալսարանական, և՛ ներֆակուլտետային, և՛ միջֆակուլտետային միջոցառումներ կազմակերպելու ու անցկացնելու ուղղությամբ: Այս առումով նշենք «Լավագույն ուսանող» և «Լավագույն կուրս» անվանակարգերով անցկացվող ամենամյա միջոցառումը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի՝ Գեղարքունիքի մարզային կենտրոնի հետ կազմակերպած ծրագրերը, հունամիտար մասնագիտությունների և բանասիրական ֆակուլտետների կազմակերպած համատեղ գիտաժողովը՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին: Միջոցառումներ են անցկացվել նվիրված Հ. Սահյանին, Վ. Տերյանին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյա հոբելյանին, Մայրության և գեղեցկության տոնին: Ֆակուլտետի ուսանողները մասնակցել են Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված պաստառների մրցույթին և արժանացել մրցանակների: Ընտանիքի տարվան նվիրված միջոցառումների շարքում անցկացվեց էսսեների համալսարանական մրցույթ, որտեղ առաջին տեղը գրավեց հայոց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Թագուհի Սահակյանը: Նույն միջոցառումների շրջանակում գրադարանի հետ համատեղ տեղի են ունեցել գրքերի քննարկումներ: Ուսանողների կողմից աննկատ չեն մնում մեր դասախոսների արժեքավոր ուսումնասիրությունները: Մեծ աշխատանք էր տարվել Ա. Առաքելյանի «Գերմանական փիլիսոփայական վեպը. Թոմաս Մանե» մենագրության շնորհանդեսը կազմակերպելու ուղղությամբ: Հետաքրքիր էր նաև բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Ղազարյանի՝ Հայաստանի գրողների միության պատվերով կազմած «Հայ գրողները եղեռնի մասին» բանաստեղծական ժողովածուի շնորհանդեսը: Կարևոր իրադարձություն էր հանդիպումը Հայաստանի գրողների միության նախագահ Է. Միլիտոնյանի և բանաստեղծուհի Ա. Վարդանյանի հետ, որի ընթացքում քննարկվեցին ուսանողությանը հետաքրքրող հարցեր: Ուսանողների ակտիվությունը դրսևորվում է նաև կամավորության սկզբունքով հասարակական կազմակերպությունների /ՀԿ / հետ համագործակցությամբ:

Համալսարան-դպրոց կապի լավագույն արտահայտություն էր Ակունքի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտների կազմակերպած միջոցառումը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, որն անցկացվեց համալսարանում:

Ի վերջո, մեծ ձեռքբերում էր այն, որ «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում լավագույն ուսանող ճանաչվեց բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Լազյանը /2-րդ տեղ/:

6. Բացթողումներ: Բանասիրական ֆակուլտետում աշխատանքները տարվել են 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի համաձայն, այնուամենայնիվ ամեն ինչ չէ, որ հաջողվել է ամբողջովին իրականացնել: Կան բացթողումներ և թերացումներ, որոնք թեև ուսումնական գործընթացի ընդհանուր պատկերը չեն փոխում, սակայն անուշադրության դեպքում կարող են խորանալ և բացասական հետևանքների հանգեցնել: Ներկայացնենք դրանք.

1. ֆակուլտետում կրթության որակի բարձրացման նպատակով ուսուցման գործընթացի տարբեր բաղադրիչների վերաբերյալ ուսանողական հարցումներ և դրանց վերլուծություններ գրեթե չեն կատարվում,

2. բավարար ակտիվությամբ չեն ընթանում աշխատանքները ուսանողներին համալսարանի գործունեությունը կանոնակարգող իրավական փոստթղթերին, ներքին գնահատման և ինքնավերլուծության չափանիշներին ծանոթացնելու ուղղությամբ,

3. քիչ են արդիական թեմաներով բանավիճային միջոցառումները, քննարկումները, գրադարանային հանդիպումները,

4. քիչ են կազմակերպվում ճանաչողական բնույթի էքսկուրսիաներ, հանդիպումներ ճանաչված մարդկանց, գրողների ու գիտնականների հետ,

5. թերություններ կան թեզերի կատարման մեջ, բավարար ուշադրություն չի դարձվում ուսանողների գիտահետազոտական հետաքրքրությունները խթանելու և զարգացնելու վրա:

6. Բանասիրական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը: Նոր ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետը բացթողումները վերացնելու, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, կրթական ծրագրերն իրականացնելու համար բարենպաստ միջավայր ապահովելու նպատակով ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու խնդիր ունի լուծելու: Թե ինչ ուղղություններով են տարվելու աշխատանքները, ներկայացնում ենք ստորև՝ բանասիրական ֆակուլտետի զարգացման հայեցակարգում:

1. Վերանայել և թարմացնել ուսումնական պլանները, կրթական ծրագրերը, հաշվի առնելով գիտության առաջընթացը՝ ներառել նոր առարկաներ ու դասընթացներ:

2. Ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման ֆակուլտետային և ամբիոնային տարեկան ծրագրերի կազմում և կատարում:

3. Ուսանողական հարցումների անցկացում և դրանց արդյունքների վերլուծություն ուսումնական գործընթացը կատարելագործելու և կրթության որակը բարձրացնելու նպատակով: Այս առումով անհրաժեշտ է համագործակցել որակի ապահովման համալսարանական կենտրոնի հետ:

4. Ուսանող-դասախոս կապի ամրապնդում՝ գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողներին գիտահետազոտական աշխատանքների ոլորտ ներգրավելու նպատակով:

5. Ուսանողների խրախուսում միջազգային ծրագրերին մասնակցելու գործընթացում:

6. Ուսանողությանը հուզող արդիական թեմաներով բանավեճերի ու քննարկումների կազմակերպում՝ սովորողների ինքնուրույն մտածելու և որոշումներ կայացնելու ունակությունները զարգացնելու նպատակով:
7. Արդի հայ և արտասահմանյան գեղարվեստական գրականության լավագույն ստեղծագործությունների ընթերցում և տարածում: Ծանոթացում հատկապես հայամետ թուրք գրողների ստեղծագործությունների հետ՝ հաշվի առնելով պատմական անցյալը վերաիմաստավորելու նրանց ջանքերը և այսօրվա աշխարհաքաղաքական իրավիճակը:
8. Շարունակել աշխատանքները ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ:
9. Պատշաճ ուշադրություն դարձնել ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ պահպանելով կատարման ժամանակացույցը:
10. Շարունակել հետևել կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման ընթացքին՝ ուղեցույց ունենալով հաստատված ժամանակացույցը, դրանց ներկայացվող տեխնիկական պահանջները, ապահովելով հիմնավոր կարծիքների առկայությունը:
11. Վերանայել և թարմացնել միջանկյալ, ամփոփիչ, ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերը՝ հաշվի առնելով քննական հանձնաժողովների կարծիքներն ու առաջարկությունները:
12. Պարբերաբար ստուգել կրթական ծրագրերի կատարումը, կազմակերպել դասալսումներ և քննարկումներ:
13. Ակտիվացնել աշխատանքները ուսանողներին իրենց իրավունքներին ու պարտականություններին, համալսարանի գործունեությունը կանոնակարգող իրավական փաստաթղթերին, ներքին գնահատման և ինքնավերլուծության չափանիշներին ծանոթացնելու ուղղությամբ՝ հաշվի առնելով համալսարանի հավատարմագրման գործընթացի կարևորությունը:
14. Շարունակել սերտ համագործակցությունը ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ՝ ուսանողների կրթական կարիքները, նրանց հուզող խնդիրները բացահայտելու և դրանց անմիջական լուծում տալու նպատակով:
15. Կանոնակարգերով նախատեսված պարբերականությամբ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության հրավիրել ֆակուլտետի խորհրդի և ամբիոնի նիստեր՝ ուսումնագիտական գործընթացին վերաբերող հարցերը քննարկելու, գիտխորհրդին առաջարկություններ ներկայացնելու նպատակով:
16. Ակտիվացնել ուսանողներին դեպի համալսարանական էլեկտրոնային կայքերն ուղղորդելու աշխատանքները, խրախուսել էլեկտրոնային հաղորդակցումը՝ օգտագործելով հետադարձ կապի հնարավորությունները:
17. Ակտիվացնել աշխատանքները մարզի կրթական հաստատությունների հետ, կազմակերպել փոխայցելություններ:
18. Կազմակերպել հանդիպումներ ճանաչված մարդկանց, գրողների ու գիտնականների, գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ճանաչողական բնույթի էքսկուրսիաներ, այցելություններ ՀՀ ԳԱԱ Լեզվի և Գրականության ինստիտուտներ:
19. Ակտիվացնել ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքները:

20. Կազմակերպել միջոցառումներ՝ ուսանողների գեղագիտական ճաշակը զարգացնելու նպատակով:

*Թ. Ա. Ասոյան՝
Բանասիրական ֆակուլտետի դեկան*

**ՔՆՆԱՇՐՁԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՉՍԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՁԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանի նախնական ցեղ են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	9	-	4	55.56
2-րդ	9	-	5	88.89
3-րդ	20	-	11	80.00
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	5	1	-	80.00
2-րդ	4	-	1	100.00
3-րդ	5	-	2	80.00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	9	-	4	77.78
2-րդ	17	-	3	82.35
3-րդ	21	-	5	66.67
ԸՆԴԱՄԵՆԸ	99	1	35	79.02
Մագիստրատուրա				
Հ.լեզու և գրականություն /ԺՀԼ և թարգմանչական գործ, 1-ին/	5	-	2	100
Հ.լեզու և գրականություն /ԺՀԼ և թարգմանչական գործ, 2-րդ/	6	-	5	100
Հ.լեզու և գրականություն /Հայ գրականության պատմություն, 1-ին/	6	-	2	50.00
Ռ. լեզու և գրականություն /Թարգմանչական գործ, 1-ին/	4	-	2	100
Ռ. լեզու և գրականություն /Թարգմանչական գործ, 2-րդ/	9	-	6	88.89
Ռ.լեզու և գրականություն /Ռուս գրականություն, 2-րդ/	3	-	2	100
Անգլ. լեզու և գրականություն				

ԳՊՀ 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

/Թարգմանչական գործ /անգլերեն/, 1-ին/	7	-	5	100
Անգլ. լեզու և գրականություն /Թարգմանչական գործ /անգլերեն/, 2-րդ/	10	-	5	80.00
Ընդամենը	50	-	29	89.86

ԱՄՈՒԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	8	-	6	100
2-րդ	9	-	3	100
3-րդ	20	-	6	85.00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	5	-	-	100
2-րդ	4	-	3	100
3-րդ	5	-	3	100
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	9	-	5	100
2-րդ	16	2	4	81.25
3-րդ	21	-	6	76.19
ԸՆդամենը	97	2	36	93.60
Մագիստրատուրա				
Հ.լեզու և գրականու- թյուն /ԺՀԼ և թարգմանչական գործ, 1-ին/	5	-	1	40.00
Հ.լեզու և գրականու- թյուն /Հայ գրականության պատմություն, 1-ին/	5	-	2	60.00
Ռուսաց լեզու և գրականություն /Թարգմանչական գործ, 1-ին/	4	-	4	100
Անգլերեն լեզու և գրականություն /Թարգմանչական գործ /անգլերեն/, 1-ին/	7	-	4	57.14
ԸՆդամենը	21	-	11	64.28

2014/2015 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿԿԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	2	1	3	36	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը` 3

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ` *Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ասոյան Թաթուլ Արտիկի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. Առաքելյան Արա Հրաչիկի - բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Կատվալյան Վիկտոր Լիպարիտի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. Ղազարյան Նորիկ Կարոյի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ղռեջյան Լուսինե Խաչատուրի - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
6. Ղարիբյան Ալինա Ամբիկի - ասիստենտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ալեքսանյան Թամարա Կարապետի - մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Իսկանդարյան Նահրա Մանվելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ասատրյան Ծովինար Ժորայի - բանասիրական գիտ. թեկնածու
4. Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտ. թեկնածու
5. Կարապետյան Գայանե Լևիկի - ասիստենտ
6. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
7. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - ասիստենտ
8. Բագոյան Ալլա Սահակի-դասախոս
9. Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի - դասախոս
10. Ղազարյան Օլգա Ալբերտի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության, հայերենի բարբառների, արդի փուլում լեզվական դրսևորումների ուսումնասիրություն:
2. Արևմտահայերենի պատմության, արդի ժամանակաշրջանում նրա զարգացման և կիրառության հետ կապված հարցերի ուսումնասիրություն:

3. Մխիթարյան միաբանության՝ արևմտահայերենի ձևավորման և մշակման գործընթացում ունեցած ավանդի ուսումնասիրություն:
4. Գրաբարյան տեքստերի ուսումնասիրության և թարգմանության հարցեր:
5. Հայ գրողների ստեղծագործությունների լեզվաճական ուսումնասիրություն:
6. Գեղարքունիքի տարածաշրջանում բանահյուսական-բանահավաքչական աշխատանքների կազմակերպում և ուսումնասիրություն:
7. Արդի հայ գրականության զարգացման միտումների ուսումնասիրություն:
8. Առանձին հեղինակների ստեղծագործությունների գաղափարական և լեզվական ուսումնասիրություններ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսական ձեռնարկ	Ռեսուրսամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	2	-	2	19	

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Կատվայան Վ. Լ.** Հայ բարբառագիտության հարցեր // «Հայաստան» հրատ., Եր. 2014, 232 էջ :
2. **Կատվայան Վ. Լ.** Հինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում // «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Եր., 2014, էջ 77-83:
3. **Կատվայան Վ. Լ.** Միջինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում // «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Եր., 2014, էջ 49-61:
4. **Կատվայան Վ. Լ.** Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ // Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 273-277:
5. **Կատվայան Վ. Լ.** Падежные особенности в диалектном армянском языке // Language and culture (Scientific Journal), N 13, Kutaisi, 2015, էջ 63-67:
6. **Կատվայան Վ. Լ.** Եղեռնը և հայոց լեզուն // Բանբեր հայագիտության, Երևան, 2015, N 1, էջ 103-113:
7. **Կատվայան Վ. Լ.** Ռուսերեն փոխառություններ Բայազետի բարբառում // «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, Եր., 2015թ., էջ 81-88:
8. **Կատվայան Վ. Լ.** Արևելահայ և արևմտահայ լեզվական իրողությունները Բայազետի բարբառում, «Արդի բանասիրության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու /ԿՊՀ/, Երևան, 2015, էջ 130-138:
9. **Կատվայան Վ. Լ.** Կապերն ու շաղկապները Բայազետի բարբառում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17 /2/, Երևան, 2015:
10. **Առաքելյան Ա. Հ.** Ֆր. Նիցշեն և 20-րդ դարի փիլիսոփայական վեպը // «Նիցշեն մշակույթի համատեքստում», Գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, ԵՊՀ հրատարակչություն, էջ 16-29:

11. Առաքելյան Ա. Յ. Գերմանական վեպի պատմության ուսուցման մի քանի հիմնախնդիրների շուրջ //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17 /2/, Երևան, 2015:
12. Ասոյան Թ. Ա. Մ. Սեբաստացին և արևմտահայերենի զարգացման հարցերը //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 17 /2/, Երևան, 2015:
13. Ներսիսյան Վ. Ա. Պատկերավորման և արտահայտչական միջոցները հայկական ժողովրդական հանելուկներում // «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2014, էջ 147-152:
14. Ներսիսյան Վ. Ա. Բառակազմական համառոտ ուղեցույց-բառարան // Ուսումնասովանողական ձեռնարկ, Երևան, 2015, 72 էջ:
15. Իսկանդարյան Ն. Մ. «Պատմական հիշողության խնդիրը Էլիֆ Շաֆաքի աղմկահարույց «Ստամբուլի բիճը» վեպում // ՀՌՀ տարեկան հաշվետու գիտաժողով, Երևան, 2014:
16. Ղռեջյան Լ. Խ. Երդմնազանցությունը «Սասնա ծռեր»-ում և վրացական վիպական բանահյուսության մեջ // Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2014, «Գիտություն» հրատ., էջ 60-65:
17. Ղռեջյան Լ. Խ. Ժողովրդական ասութաբանության տեսակներն ու գաղափարաբանությունը // Մեթոդական ուղեցույց, Երևան, 2014, 44 էջ:
18. Ղռեջյան Լ. Խ. Ավանդականն ու արդիականը հայոց ժողովրդական մշակույթում // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաժողովի նյութեր, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2015:
19. Ղազարյան Ն. Կ. Հայոց բանաստեղծները Եղեռնի մասին // Ժողովածու, Երևան, 2015 թ, 264 էջ:
20. Ղազարյան Ն. Կ. Եղեռնը և հայ բանաստեղծությունը //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու N 17 /2/, Երևան, 2015:
21. Ղազարյան Ն. Կ. Հոգևոր գարնան ավանդույթը «Հաճախապատում ճառք»-ում և «Վարդապետութիւն»-ում //«Էջմիածին», 11 /ԺԱ/, 2014, էջ 60-70:
22. Ղարիբյան Ա. Ա. Գոհարի կերպարի համեմատական քննությունը ըստ «Սասնա ծռեր» էպոսի պատումների // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17 /2/, Երևան, 2015:
23. Խանդանյան Ս. Կ. Դերանուն որոշի առանձնահատկությունները գոյականական բառակապակցություններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17 /2/, Երևան, 2015:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գայանե Ֆրեդիկի Բդեյան, ԳՊՀ պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Մարգարյան Արամ Հայկի - ԳՊՀ պրոֆեսոր
2. Ասրյան Մաղլենա Սերգեյի - ասիստենտ
3. Աբգարյան Ռուզաննա Ֆրեդիկի - դասախոս
4. Հայթյան Սաթենիկ Հայրապետի - ասիստենտ
5. Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի - ասիստենտ

6. Բալագոզյան Անիկ Կարապետի - ասիստենտ
7. Բալագոզյան Կարինե Արամայիսի - ասիստենտ
8. Մովսեսյան Աննա Աշոտի - դասախոս
9. Ռափյան Նանա Լևիկի – դասախոս
10. Տիգրանյան Սաթենիկ Սաշայի - ասիստենտ
11. Նալբանդյան Նարինե Նորայրի – լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Գյուրջայանց Սեդա Միքայելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Հովսեփյան Անահիտ Իլիչի – մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Մկրյան Նահրա Ռաուլի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
4. Բադալյան Մարինե Միքայելի - ասիստենտ
5. Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի - ասիստենտ
6. Պատվականյան Մարինե Արմանի - դասախոս
7. Խաչատրյան Սիրանուշ Արտիկի - դասախոս
8. Թռռչյան Լիլիթ Գրիգորի - դասախոս
9. Ավագյան Սաթիկ Մարտինի - դասախոս
10. Ամիրխանյան Սալվինա Սամվելի – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Քերականության իմաստա-գործառական խնդիրները:
2. Շարահյուսական կառույցի իմաստաբանական մեկնաբանությունը:
3. Անգլերենի, հայերենի և ռուսերենի լեքսիկական միավորների զուգորդական վերլուծությունը:
4. Կոնցեպտի լեզվամշակութաբանական առանձնահատկությունները:
5. Ոճական համարժեքությունը թարգմանվածքում:
6. Համարժեքությունը բառային փոխակերպումների մակարդակում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	1	6	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մկրյան Ն. Ռ. Տարածական բայերը և գոյականները անգլերենում // Կանթեղ N 5, 2014, էջ 56-61:
2. Մկրյան Ն. Ռ. Տարածական ցուցայնությունը անգլերենում // Լեզուն և գրականությունը ժամանակակից գիտական հարացույցում, ԵՊՀ, 2014, էջ 22-29:
65. **Галоян Г. М., Казарян П. А., Симонян Р. М., Симонян Г. М., Бабаян М. А., Симонян М. А.** Соединение 2-циан-3,4,4-триметил-2-4-олид подавляет рилизингизоформ NADPH оксидазы из сыворотки крови, эритроцитарных мембран и клеточных компонентов легких крыс ex vivo // *ж. ФАРМА*, 2014, 9, էջ 50-54:
66. **Симонян Р. М., Чаушян В. А., Исоян А. С., Симонян Г. М., Симонян К. В., Аветисян Л. Г., Нагапетян Х. О., Бабаханян М. А., Симонян М. А.** Мембраностабилизирующие эффекты *Stevia rebaudiana* Bertoni при фруктоза-индуцированном диабете второго типа у крыс // *Мед. Наука Армении НАН РА*, 2015, LV (3), էջ 51-60:
67. **Симонян Р. М., Фесчан С. М., Карапетян М. А., Симонян Г. М., Бабаян М. А., Енгибарян А. А., Симонян М. А.** Понижение гемоглобин-индуцирующего рилизинга изоформ NADPH оксидазы из эритроцитарных мембран и мембран поверхностных клеток срезов легких крыс галармином при гипоксии // *Теорет. клин. мед.*, 2015, 18(4), էջ 28-31:

68. Սիմոնյան Ռ. Ս., Սիմոնյան Գ. Ս., Սիմոնյան Ս. Ա. Կենսաբանական ակտիվ միացությունների սուպերօքսիդիդիսմուտազային ակտիվության որոշման եղանակ // Գյուտի արտոնագիր N 2929 А. ՀՀ Ստավոր սեփականության գործակալություն, Երևան, 2015:
69. Григорян С. М. Результаты испытаний некоторых сортов озимовой пшеницы в условиях Армавирского марза // Известия НАУА N 1, 2014, էջ 11-13:
70. Գրիգորյան Ս. Ս. Ակնարկ Սևանի լճավազանի լանդշաֆտային բուսածածկի փոփոխությունների մասին // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2014, N 1 (16), էջ 90-93:
71. Галстян Л. Х., Аветисян К. С., Арутюнян В. С. Некоторые превращения функционально замещенных 2,5-дигидрофуран-2-онов и биологическая активность полученных соединений // Сборник трудов “Некоторые успехи органической и фармацевтической химии”, 2015, вып. 2, էջ 260-269:
72. Галстян Л. Х., Аветисян К. С., Тамазян Р. А., Айвазян А. Г. Образование замещенного 3а,5-дигидро-1Н,3Н-диспиро{фуоро-[3,4-*f*][2]бензофуран-3,1':5,1"-бис(циклогексан)}-1,7(4Н)-диона из 3-ацетил-4-метил-1-оксаспиро[4,5]дец-3-ен-2-она под действием КОН // ЖорХ (Журнал органической химии, Санкт-Петербург), 2014, т. 50, вып. 3, էջ 405-407:
73. Галстян Л. Х., Аветисян К. С., Арутюнян В. С., Алебян З. Г., Топузьян В. О. Синтез ряда четвертичных аммониевых солей функционально замещенных 3-(2-бромацетил)-(5Н)-фуран-2-онов и их антихолинэстеразная активность // Хим. ж. Арм. (Химический журнал Армении, Ереван), 2014, т. 67, № 2-3, էջ 247-251:
74. Галстян Л. Х., Аветисян К. С., Арутюнян В. С. Синтез новых функциональнозамещенных 2,5-дигидрофуран-3-ил этиловых эфиров аминокислот и изучение их антибактериальной активности // Материалы IV конференции Армянского химического общества (с международным участием) “Достижения и проблемы”, Ереван-Ванадзор, 2014, էջ 138:
75. Галстян Л. Х., Аветисян К. С. Изучение влияния температуры и характера основания на образование 3а,8-диметил-3а,5-дигидро-1Н,3Н-диспиро{фуоро[3,4-*f*][2]бензофуран-3,1':5,1'-бис(циклогексан)}-1,7(4Н)-диона // Материалы IV конференции Армянского химического общества (с международным участием) “Достижения и проблемы”, Ереван-Ванадзор, 2014, էջ 139:
76. Avetisyan K. S., Halebyan Z. G. Synthesis and biological activity of some quaternary ammonium salts of 3-(2-bromoacetyl)-2-oxo-2,5-dihydrofurans // Book of abstracts of 4th International conference of young scientist “CHEMISTRY TODAY-2014”, Yerevan, 2014, էջ 108:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մնացականյան Բորիս Պուտիկի*, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱՆՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ավագյան Արամայիս Ռուստամի - աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
2. Գազինյան Ռուդոլֆ Խաչիկի - աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Մուրադյան Էդիկ Կամսարի - տեխ. գիտ.թեկնածու, դոցենտ
4. Մկրտչյան Լալա Արշալույսի - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Նահապետյան Սամվել Ավետիքի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջրային ռեսուրսների գնահատումը կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
2	-	-	-	4	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ավագյան Ա. Ռ., Ա. Յարահամադի Իրանի Աիվազ քաղաքի սոցիալ-տնտեսական խնդիրների վերլուծությունը // «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 136-139:
2. Ավագյան Ա. Ռ., Ղամբարյան Գ. Ջրուսաշրջությունը որպես «աճի բեռների» և «աճի կենտրոնների» զարգացման հենք (ՀՀ օրինակով) // «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 316-319:
3. Ավագյան Ա. Ռ. Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, Աֆրիկա, Ամերիկա, Ավստրալիա, Դասագիրք, Մաս 3-րդ // Երևան, 2014, 324 էջ:
4. Ավագյան Ա. Ռ. Ռեգիոնալ աշխարհագրություն, Եվրոպա, Դասագիրք, Մաս 1-ին // Երևան, 2014, 354 էջ:
5. Авагян А. Р., Бассами М. Социально-экономический проблемы национальных меньшинство Ирана // Modern problems of geography and anthropology, Proceedings of International Conferance, Tbilisi, 2015, էջ 335-337.
6. Մկրտչյան Լ. Ա. Կրոնական տուրիզմի զարգացման հեռանկարները Գեղարքունիքի մարզում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2015, N 2 (17):

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մելիքյան Հենրիկ Աշոտի,*
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Շեկյան Լավրենտի Արամի - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
2. Հակոբյան Մամիկոն Զալիբեկի - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

3. Հակոբյան Մաքսիմ Ասատուրի - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
4. Խուրշուդյան Արմեն Կորյունի - տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
6. Բաղդոյան Շուշան Գևորգի - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Կուտուզյան Նելլի Ալբերտի - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ղազարյան Հայկ Գեղամի - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Արտեմյան Ռոբերտ Նորիկի - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. Հովհաննիսյան Կառլեն Արշիկի - դասախոս
5. Դարբինյան Ալբերտ Սարգսի - դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր
6. Ավետիսյան Վարազդատ Կորյունի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ
2. Կառավարման ավտոմատացված համակարգեր
3. Ծրագրային ապահովման մշակում
4. WEB-տեխնոլոգիաներ
5. Համակարգչային թեստավորում

ՀՐԱՏԱՐՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսական ձեռնարկ	Ռեսուրսամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	-	3	2	13	2

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մելիքյան Հ. Ա. Տարածքային կառավարման ավտոմատացված համակարգերի ինֆորմացիայի պաշտպանության ծրագրային համալիրի ընտրության հարցերը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2015, N 2 (17):
2. Մելիքյան Հ. Ա. Տարածքային կառավարման ավտոմատացված համակարգերի օբյեկտներում մշակվող ինֆորմացիայի արատպատկերման եղանակները // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2015, N 2 (17):
3. Кумызян Н. А., Шекян А. А. Распределение контактного давления между упругим слоем и балок, нагруженных поперечными и продольными силами // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2015, N 2 (17):

4. **Հովհաննիսյան Ա. Պ.** Գործածությունից դուրս եկած կապարաթվային մարտկոցներից արժեքավոր նյութերի կորզման նոր տեխնոլոգիաներ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2015, N 2 (17):
5. **Բաղդոյան Շ. Գ.** Վիրտուալ իրականության համակարգչային միջոցները // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2015, N 2 (17):
6. **Григорян М. С., Мкртчян М. С., Шекян Л. А.** Плоская контактная задача об изгибе балки на упругой шероховатой полосе при наличии сжимающих или растягивающих осевых сил // Труды IV межд. конф. "Актуальные проблемы механики сплошной среды", Цахкадзор, Армения, Ереван, 2015, էջ 147-151:
7. **Շեկյան Լ. Ա.** Տեսական մեխանիկա // Դասագիրք, ՀԱՊՀ, «Ճարտարագետ», Երևան, 2015, 292 էջ:
8. **Շեկյան Լ. Ա., Շեկյան Ա. Լ.** Անալիտիկ դինամիկա // Ուսումնական ձեռնարկ, ՀԱՊՀ, «Ճարտարագետ», 2015, 51 էջ:
9. **Ավետիսյան Վ. Կ.** Գիտելիքների ստուգման թեստերի որակական բնութագրերի հետազոտություններ // Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր, Հատոր 11-1, 2015, էջ 156-163:
10. **Avetisyan V. K.** Survey of software for the test quality analysis // International Journal "Information Content and Processing", Volume 2, Number 1, 2015, էջ 82-92:
11. **Գևորգյան Մ. Հ., Ափրեյան Ռ. Ա., Գևորգյան Է. Մ., Հովհաննիսյան Ա. Պ.** Էլեկտրամագնիսական խնդիրների մեթոդական ձեռնարկ // Երևան, հեղինակային հրատարակություն, 2015, 169 էջ:
12. **Գևորգյան Մ. Հ., Ափրեյան Ռ. Ա., Գևորգյան Է. Մ., Աթանեսյան Ա. Կ. Հովհաննիսյան Ա. Պ.** Մեխանիկայի խնդիրների մեթոդական ձեռնարկ // Երևան, հեղինակային հրատարակություն, 2014, 108 էջ:
13. **Հովհաննիսյան Ա. Պ.** Երկրագնդի գլոբալ տաքացմանն առնչվող մի քանի հիմնահարցեր // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2014, N 1 (16), էջ 191-194:
14. **Հովհաննիսյան Ա. Պ., Գևորգյան Է. Մ.** Հայաստանի Հանրապետության ածանցյալ արժեթղթերի շուկայի կայացման հայեցակարգային մոտեցումներ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2014, N 1 (16), էջ 388-394:
15. **Հակոբյան Մ. Զ.** MATLAB փաթեթի կիրառումը կրթական համակարգում // Ուսումնական ձեռնարկ, ՀԱՊՀ, Երևան, 2015, 151 էջ:
16. **Հակոբյան Մ. Զ.** Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրթական համակարգում // Ուսումնական ձեռնարկ, ՀԱՊՀ, Երևան, 2015, 185 էջ:
17. **Հակոբյան Մ. Զ.** Ուսումնական նյութերի համակարգչային անիմացիաների պատրաստման առանձնահատկությունները ADOBE FLASH տեխնոլոգիայով // ՀԱՊՀ «Լրաբեր», Երևան, 2015, 1-2, էջ 84-89:
18. **Казарян Г. Г., Маргарян В. Н.** О гиперболических многочленах с весом // Известия НАН Армении, Математика, Т. 49, N 4, 2014, էջ 23 – 40:
19. **Маргарян В. Н., Казарян Г. Г.** О задаче Коши в мультианизотропных классах Жевре для гиперболических с весом уравнений // Известия НАН Армении, Мат., Т. 50, N 3, 2015, էջ 36 – 46:
20. **Казарян Г. Г., Маргарян В. Н.** Тезис доклада: О поведении на бесконечности почти гипоеллиптических многочленов // Международная конференция по функциональным пространствам и теории приближений, посвященную 110 - летию со дня рождения академика РАН С. М. Никольского, Москва, 2015:
21. **Ghazaryan H. G, Margaryan V. N.** Linear differential equations with constant powers // Armenian Math. Union, Annual Session, Yerevan, 2015, էջ 35 – 36:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ղաջոյան Համլետ Գրիշայի*, փիլիսոփայական գիտությունների
թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ *Գևորգյան Գոհար Վոլոդյայի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
030400	Պատմություն
030500	Իրավագիտություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/

Մասնագիտացումներ՝

բակալավր՝	մանկավարժություն իրավագիտություն պատմություն
մագիստրոս՝	մանկավարժություն իրավագիտություն պատմություն (իրավունքի հիմունքներ)

Ուսանողների թիվը՝ 163

Շրջանավարտների թիվը՝ 26

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2014-2015 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի գործունեության հիմնական նպատակը կրթության որակի բարելավումն էր, որն իրագործում ենք փուլ առ փուլ, իսկ յուրաքանչյուր փուլում փոխվում են իրագործման մեթոդները՝ անփոփոխ թողնելով բուն նպատակը: Մեր գլխավոր խնդիրն էր «ուսման առաջադիմություն» և «կրթության որակ» հասկացությունները չթողնել լոկ կարգախոսի շրջանակներում, այլ կյանքի կոչել, դարձնել իրականություն: «Ինտենսիվ առաջադիմության» ցուցանիշների ներմուծման արդյունքում վերջին 4 տարիների ընթացքում գործեց չափումների նոր մեխանիզմը, որը նշանակում է ընդհանուր առաջադիմության արդյունքների մեջ, գերազանց ու գերազանց և լավ գնահատականների տեսակարար կշռի աստիճանական բարձրացում: Այս կարգախոսը և դրա իրականացմանը միտված կառուցակարգերն իրենց արդիականությունը և հուսալիությունը պահպանել են, միաժամանակ իրենց արտացոլումը գտել են ֆակուլտետի 2015-2016 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում: Յուրաքանչյուր ուսումնական տարի հայեցակարգում ուսման առաջադիմության և կրթության որակի աստիճանական աճման նշածող էր սահմանված: Մասնավորապես հաշվետու տարվա համար ուսման առաջադիմությունը նախանշված էր 80%-ի սահմանագծից վեր, իսկ ընդհանուր առաջադիմության ցուցանիշի մեջ գերազանց ու գերազանց և լավ գնահատականների տեսակարար կշիռը՝ 60 % և բարձր: Առաջին և երկրորդ կիսամյակների միջև կուրսերի ուսման առաջադիմության ցուցանիշների տարբերությունը մեծ չէր՝ այն տատանվում էր 1-5%-ի շրջանակներում, այս պարագայում հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր առաջադիմությունը ֆակուլտետում կազմեց 81 %, իսկ դա նշանակում է, որ մեր առջև դրված հայեցակարգային խնդիրը լուծվեց: Այսպես, ֆակուլտետի իրավագիտության բաժնի առաջին կուրսը 1-ին կիսամյակում ունեցել է 80%, իսկ 2-րդ կիսամյակում՝ 84 % առաջադիմություն, պատմական բաժնում՝ համապատասխանաբար 86% և 100%, իսկ Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) բաժնի 1-ին կուրսում՝ 94 % և 89 %: Ընդհանուր առաջադիմությունը 1-ին կուրսերում 1-ին կիսամյակում կազմեց 87 %, իսկ 2-րդ կիսամյակում՝ 88 %: Վերոնշյալ թվային տվյալների հիման վրա կարող ենք տալ հակիրճ գնահատական՝ ցուցանիշները վատ չեն: Իսկ որոնք էին նախադրյալները: Առաջինը անվճար տեղերի համար մրցակցությունն է, տարբեր դրամաշնորհներից օգտվելու հանգամանքը, որի համար այլ գործոնների հետ միասին ուսման առաջադիմության բարձր ցուցանիշը անհրաժեշտ պայման է: Դրանք ուսանողի մոտ ձևավորում են կամք, ներքին մղում, շահագրգռվածություն, իսկ երբ վերոնշյալներն էլ ուղեկցվում են գիտելիքների կարևորության գիտակցումով, ապա լավ արդյունքը երաշխավորված է: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի 24 ուսանող օգտվել են անվճար տեղերում սովորելու իրավունքից, իսկ 37 ուսանող եղել են տարբեր դրամաշնորհների և ուսման վարձի փոխհատուցման համակարգի

շահառուներ: Դրա շնորհիվ զարգացման հայեցակարգերից (վերջին 3 տարիների) դուրս մղվեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «հետնապահ ուսանողներ», կամ «հետնապահ կուրսեր ու խմբեր» հասկացությունները: Մինչդեռ, դրան հակառակ, ինչպես նախորդ, այնպես էլ 2015-2016 ուսումնական տարվա հայեցակարգում տեղ գտան ուսանողական համակազմի պահպանման և ավելացման մասին դրույթները: Թերևս երևույթը հանրապետության մասշտաբով համընդհանուր է, պայմանավորված որոշ օբյեկտիվ հանգամանքներով, այնուամենայնիվ այն մեզ չի ազատում պատասխանատվությունից, դեռ ավելին ռազմավարական նոր ու ճկուն մոտեցումներ է առաջադրում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ տարվող աշխատանքներում:

Հաշվետու ժամանակահատվածում թե՛ զարգացման հայեցակարգում և թե՛ գործողությունների ծրագրում առանցքային տեղ էր զբաղեցնում հավատարմագրման գործընթացին պատշաճ նախապատրաստվելը, ինքնավերլուծության չափորոշիչների յուրաքանչյուր դասին համապատասխան առկա հնարավորությունների շրջանակներում ֆակուլտետի գործունեության ուժեղ և թույլ կողմերի վերհանումը, ներքին ու արտաքին հնարավորությունների ու չօգտագործված ռեսուրսների բացահայտումը:

Հաշվետու ուստարվա մեկնարկը սկսվում է առաջին կուրսեցիների ու նրանց ծնողների հետ հանդիպումով, այնուհետև առաջին կուրս ընդունված ուսանողների կողմից հարցաթերթիկների լրացումով, որի միջոցով պատկերացում ենք կազմում ուսանողների սոցիալական վիճակի, նախասիրությունների մասին, ինչը բավականին օգնում է հետագա աշխատանքները ծրագրելու առումով: Զարգացման հայեցակարգի հետևյալ դրույթը՝ թույլ չտալ ուսման առաջադիմության ցուցանիշի 80 % սահմանագծից ներքև արդյունք, հանգեցրեց վերջին տարիների, այդ թվում՝ հաշվետու ժամանակամիջոցի համար բնորոշ մի երևույթի՝ կայունության, առաջընթացի միտումով: Ուսման որակի բարելավման գլխավոր երաշխիքներից մեկը հենց կայունությունն է, արդյունավետ ուսուցումն ու ուսումնառությունը: Այս խնդրի լուծմանը նպաստող մի դրական միտվածություն ևս նկատելի է: Նախկինում մեծ թիվ էր կազմում զինվորական ծառայությունից վերադարձած ուսանողների ցածր առաջադիմությունը, առարկայական պարտքեր ունենալը: Հաշվետու ժամանակահատվածում այն հասցվեց նվազագույնի, դեռ ավելին, մի շարք ուսանողներ աչքի ընկան և՛ ուսման առաջադիմությամբ, և՛ հասարակական ակտիվությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում մագիստրոսական 9 խմբերից միայն 2-ը ապահովեցին 80%-ից բարձր արդյունք, մանկավարժության 2-րդ՝ 100 % և պատմական 1-ին՝ 87 %: 2-րդ կիսամյակում մագիստրոսական խմբերում ուսման առաջադիմությունը 58%-ից հասավ 72%-ի:

Օրինաչափ կապ կա ամփոփիչ ատեստավորման արդյունքների և բակալավրիատի ու մագիստրոսական կրթության նախորդ տարիների ցուցանիշների միջև: Եվ այն արտահայտվեց մագիստրոսական ավարտական խմբերում հետևյալ ցուցանիշներով. Իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 17 շրջանավարտներից A տիրույթի գնահատականներ ստացան 7-ը, B՝ 6-ը, C՝ 4-ը: Պատմության բաժնի 6 շրջանավարտներից A՝ 5-ը, B՝ 1-ը, մանկավարժության բաժնի 2 շրջանավարտներն էլ ստացան A գնահատական: Ամփոփիչ ատեստավորման գործընթացը միաժամանակ խորհրդածելու, հետագա աշխատանքները պլանավորելու հնարավորություն է տալիս: Հաշվետու ժամանակամիջոցում հանձնաժողովների նախագահների կողմից արվեցին

ուշագրավ առաջարկություններ, որոնք քննության առնվեցին հասարակական գիտությունների ամբիոնի, ֆակուլտետի խորհրդի նիստերում: Այն վերաբերում է բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննական առարկաների քանակի կրճատմանը և հարցաշարերի վերանայմանը:

Թերևս ժամանակակից տեխնիկական միջոցներով դասատվության պրոցեսի կազմակերպման առումով որոշակի աշխատանքներ կատարվեցին, տեխնիկական միջոցների արդիականացման հարցը մասամբ լուծվեց: Այնուհանդերձ, չլուծվեց կարևոր խնդիրը՝ ֆակուլտետում կահավորելու մեկ համակարգչային լսարան:

1-ին և 2-րդ կիսամյակների գնահատականների քանակական տարբերությունը պայմանավորված է կուրսային աշխատանքների ներառմամբ, որքանով այն ևս առնչվում է որակական ցուցանիշի հետ, քանզի դրանով պայմանավորված կլինի հետագայում դիպլոմային աշխատանքների որակը, մյուսը՝ 2-րդ կիսամյակում բոլոր խմբերում մեկական քննություն ավելի է հանձնված առաջին կիսամյակի համեմատ: Հաշվետու ժամանակաշրջանում դեկանատի և ամբիոնների ուշադրության կենտրոնում էր ուսանողների գնահատման օբյեկտիվության ապահովման հարցը: Սա կարևորվում է այն առումով, որ անվճար տեղերում սովորող ուսանողների փոխատեղման մրցույթում հաղթողներին որոշելիս՝ հարկ է լինում կիրառել կանոնակարգով նախատեսված բոլոր հնարավոր տարբերակները: Հաշվետու ժամանակաշրջանում մրցակցությունը ևս լարված էր: Այնուհանդերձ մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո բողոքարկումներ, դժգոհություններ չեն եղել, ինչը օբյեկտիվության և թափանցիկության կարևոր ցուցանիշ է:

Հաշվետու ժամանակաշրջանում միջազգային ծրագրերով արտերկրում ուսումը շարունակեցին իրավագիտության բաժնի երկու ուսանողներ՝ Նարեկ Ենոքյանը և Ռադիկ Սարուխանյանը, կազմակերպվեց ուսումնառությունը ավարտած ԱՆԻ Հովեյանի հաշվետվության շնորհանդեսը:

Հաշվետու ուստարում համալսարանում դասախոսների, վարչական աշխատակիցների և ուսանողների համար կազմակերպվել են դասընթացներ՝ անգլերեն լեզվի իմացությունը խորացնելու նպատակով: Պահպանվեց ֆակուլտետի ամբիոնների դասախոսական անձնակազմի կայունությունը, երկու մասնագիտական բաժիններում՝ իրավագիտության և մանկավարժության կազմը ամբողջությամբ պահպանվեց: Շարունակվեցին կրթական ծրագրերի բարելավման առումով նպատակային աշխատանքները բոլոր 3 ամբիոններում, որոնք միտված էին հասարակական գիտությունների ոլորտում ֆակուլտետի առաքելության իրականացմանը: Այս առումով ներառվեցին նոր դասընթացներ. «Շախմատի տեսություն և պրակտիկա», «Ներառական կրթության մանկավարժություն», «Համաշխարհային քաղաքակրթության տեսություն և պատմություն», «Իրավագիտություն» առարկայի փոխարեն ոչ մասնագիտական խմբերում «Իրավագիտության հիմունքներ», իսկ մանկավարժական ուղղվածություն ունեցող խմբում՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության սոցիալական ինստիտուտները» դասընթացը: Ամբիոնները շարունակեցին համագործակցությունը հանրապետության պետական մյուս բուհերի և գիտահետազոտական հիմնարկների հետ, այսպես պատմության ամբիոնը համագործակցում է Երևանի պետական համալսարանի և Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնների, ինչպես նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի մի շարք բաժինների հետ, հասարակական գիտությունների ամբիոնը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի Մանկավարժության և հոգեբանության ամբիոնների հետ: Իրավագիտության ամբիոնը շարունակեց պետական կառավարման մարմիններում և գերատեսչություններում աշխատող, պրակտիկ փորձ ունեցող, գիտական կոչումներ ունեցող անձանց ներգրավումը դասախոսական աշխատանքներում՝ հենվելով ուսանողների կողմից դրական կարծիքների և առաջարկությունների վրա: Դասալսույնները հաշվետու ժամանակամիջոցում կրել են նպատակային ուղղվածություն: Դրանք հիմնականում իրականացրել են ամբիոնների վարիչները՝ դեկանի, փոխդեկանի հետ միասին, դասատվության գործընթացի կատարելագործման, առաջավոր փորձի փոխանցման միտումներով:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ներֆակուլտետային տեղափոխություններ՝ 23 ուսանող տեղափոխվեց այլ ֆակուլտետներ: Անհարգելի բացակայությունների համար մի շարք ուսանողներ ստացան նկատողություն: 16 ուսանող հեռացվել է համալսարանից՝ քննաշրջանին չմասնակցելու, տարկետման ժամկետը լրանալու պատճառներով: Իրենց դիմումի համաձայն ազատվել են 5 ուսանողներ, վերականգնվել են նախորդ տարիներին հեռացված 4 ուսանողներ, իսկ բանակի տարկետումից հետո վերականգնվել են 23 ուսանողներ: Ձինվորական ծառայության զորակոչվելու հիմքով տարկետում են ստացել 4 ուսանողներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնների և դեկանատի հսկողությամբ համալրվել է «E-Learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգը: Ամբիոնները դեռևս մեծ աշխատանք ունեն կատարելու ուսանողներին հատկացվող նյութերի որակական կողմը ապահովելու ուղղությամբ, քանի որ այդ նյութերը մշտական թարմացման ու արդիականացման կարիք ունեն:

Հաշվետու ժամանակահատվածում բոլոր 3 ամբիոններում ընդգրկված դասախոսները, հատկապես՝ պատմության ամբիոնի, ակտիվորեն մասնակցեցին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված ԳՊՀ 17-րդ գիտաժողովին: Ներկայացվեց 23 զեկուցում: Շարունակվեց «Ընտանիքի տարվա» շրջանակներում անցկացվող միջոցառումների շարքը, ներկայացվեցին զեկուցումներ, կազմակերպվեցին քննարկումներ, բանավեճեր: Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ. Քուրքչյանը «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակներում հանդես եկավ դասախոսությունների շարքով՝ «Հոգեբանական խորհուրդներ երիտասարդ ընտանիքներին» խորագրով: Այս միջոցառումների շրջանակում ամբիոնը համագործակցեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնի հետ, համատեղ կազմակերպվեց բաց դաս՝ «Նախաամուսնական շրջանի հոգեբանական առանձնահատկությունները և ամուսնական զույգի ընտրության մեխանիզմները» թեմայով, որը անցկացրեց հոգեբանության ամբիոնի դասախոս Արմինե Վահանյանը:

Ռեկտորատի նախաձեռնությամբ կազմակերպվեցին էքսկուրսիաներ Հայաստանի պատմական ու տեսարժան վայրեր, թանգարաններ, պատկերասրահներ, որոնք ունեցան ճանաչողական, ուսուցողական, հայրենասիրական, դաստիարակչական նշանակություն:

Հաշվետու ժամանակաշրջանում առանձնակի ուշադրություն դարձվեց ուսանողների շրջանում ընթերցանության խրախուսմանը: Սովորողների հանձնարարվեց կարդալ մասնագիտական և գեղարվեստական գրքեր, կազմակերպվեցին քննարկումներ:

**ՀՈԱՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններն են.

1. Ուսման գործընթացի կազմակերպման և կրթության որակի բարելավման ոլորտում .

- 1.1. Ֆակուլտետի և նրա ստորաբաժանումների ողջ գործունեությունը նպատակաուղղել ուսման առաջադիմության բարձրացմանը և կրթության որակի բարելավմանը:
- 1.2. 2015-2016 ուսումնական տարում ապահովել ուսման առաջադիմությունը 80%-ի սահմանագծից վերև՝ կիսամյակային և տարեկան արդյունքներով:
- 1.3. Ուսանողական համակազմը համալրելու նկատառումներով ուսումնասիրել ֆակուլտետում գործող մասնագիտությունների հասարակական պահանջարկը և 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության համար մասնագիտական նոր ցանկի պահանջներին համապատասխան ապահովել ֆակուլտետում գործող մասնագիտությունների մանկավարժական ուղղվածությունը:
- 1.4. Ուսման առաջադիմություն և ուսման որակ դիալեկտիկական միասնության համատեքստում տարանջատել «ինտենսիվ առաջադիմություն» և «էքստենսիվ առաջադիմություն» հասկացությունները և շարունակել «ինտենսիվ» ճանապարհով ուսման առաջադիմության բարձրացման գործընթացը:
- 1.5. Ֆակուլտետի գործունեությունը բոլոր ուղղություններով կազմակերպել Գավառի պետական համալսարանի Ակադեմիական ազնվության հայեցակարգին համապատասխան, պահպանելով հրապարակայնության, թափանցիկության, օբյեկտիվության և հաշվետվողականության սկզբունքները:
- 1.6. Ուսման բարձր որակ և 100 %-անոց առաջադիմության ձգտող խմբերի քանակը առավելագույնի հասցնելու նպատակով ֆակուլտետում ստեղծել առողջ մրցակցային մթնոլորտ, խրախուսման ներկայացնել նման խմբերին:
- 1.7. Ֆակուլտետի ողջ գործունեությունը նպատակաուղղել հավատարմագրման գործընթացը պատշաճ ձևով ավարտին հասցնելուն: Այդ ուղղությամբ ֆակուլտետի ինքնավերլուծության աշխատանքներին մասնակցող աշխատանքային խմբին հանձնարարել ինքնավերլուծության ձևաչափի յուրաքանչյուր դասիչը մանրակրկիտ վերլուծել ու քննարկել ուսանողության և դասախոսական անձնակազմի հետ:
- 1.8. Ուղղորդել ուսանողներին՝ օգտվելու ուսման վարձավճարների զեղչման և օգնությունների տրամադրման բոլոր հնարավոր միջոցներից:
- 1.9. Շարունակել կրթության որակի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները, կատարել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի համեմատական ուսումնասիրության և վերլուծության (բենչմարքինգ)՝ հիմք ընդունելով արտերկրի և հանրապետության լավագույն բուհերի կրթական ծրագրերը:
- 1.10. Կարևորել ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստական և կազմակերպական աշխատանքները: Ուսումնասիրել հանրապետության առաջավոր բուհերի հաջողված փորձը՝ ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

- 1.11. Ֆակուլտետի գործունեության արդյունավետության բարձրացման գլխավոր երաշխիք համարել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի և կայուն աշխատանքային ռիթմի պահպանումը:
- 1.12. Ուսումնական ողջ գործընթացի լիարժեքությունը ապահովելու համար լուրջ ուշադրություն դարձնել պրակտիկաների արդյունավետության բարձրացմանը:
- 1.13. Ուսանողական համակազմը պահպանելու և համալրելու նպատակով շարունակել այցելություններ ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցներ՝ ներգրավելով բոլոր ամբիոնների դասախոսներին, ակտիվ ուսանողներին, այդ թվում՝ արտերկրում ուսանած, ինչպես նաև աշխատող շրջանավարտներին:
- 1.14. Կազմակերպել դասախոսների և ամբիոնների վարիչների կողմից դասալսումներ, համապատասխան ամբիոններում քննարկել և ամփոփել դասալսումների արդյունքները:
- 1.15. Կազմակերպել ուսանողական գիտական կոնֆերանսներ, ամբիոններին հանձնարարել ուսանողներին տրամադրել մասնագիտական արդի հիմնախնդիրներին վերաբերող թեմաներ:

2. Գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը ապահովելու ոլորտում.

- 2.1. Ժամանակակից մեթոդներով ուսանողներին ուսումնական նյութը մատուցելու նպատակով շարունակել համալրել «E-Learning.GSU» և «E-Library.GSU» էլեկտրոնային համակարգերը:
- 2.2. Շարունակել կարևորել գիտելիքը՝ որպես արժեք, ընդգծել գիտելիքի դերն ու նշանակությունը, մշտապես շեշտել 21-րդ դարում կայուն և խորը գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: Այս նպատակով խրախուսել բարձր առաջադիմություն ունեցող և ակտիվ ուսանողների նախաձեռնողականությունը, ինչպես նաև խրախուսել ստեղծագործական մոտեցման և նորարարության ջատագով դասախոսական անձնակազմին:
- 2.3. Սահմանված ժամկետում ընթացք տալ ուսանողների կողմից բարձրացված տարաբնույթ հարցերին, նրանց ընձեռել լայն հնարավորություններ սոցիալական օժանդակության ծրագրերից օգտվելու համար:
- 2.4. Պրակտիկ օգնություն ցուցաբերել ուսանողներին ՀՀ Ազգային գրադարանից և Ազգային արխիվից օգտվելու համար, ֆակուլտետի դասախոսների օգնությամբ խրախուսել սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքը (հատկապես մագիստրատուրայի ուսանողներին):
- 2.5. Առավելագույնս օգտագործել Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի հնարավորությունները, ապահովել իրավագիտության բաժնի լավագույն ուսանողների ակտիվ մասնակցությունը «Ամառային» և «Զմեռային» դպրոցների դասընթացներին:
- 2.6. Ակտիվացնել համալսարանի ամբիոնների միջև համագործակցությունը և կազմակերպել միջառարկայական միջոցառումներ, բանավեճեր, քննարկումներ, կոնֆերանսներ:

3. Ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնելուն, սովորողների հոգևոր-մշակութային դաստիարակությանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը ուղղված աշխատանքների ոլորտում.

- 3.1. Նպաստել ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության դերի բարձրացմանը:

- 3.2. Ակտիվորեն աշխատել ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության հետ:
- 3.3. Մշտական ուշադրության կենտրոնում պահել առաջին կուրսեցիներին, ապահովել նրանց ինտեգրումը ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին:
- 3.4. Ակտիվացնել կապը ուսանողների ծնողների հետ, ապահովել արդյունավետ հետադարձ կապ, մշտապես ականջալուր լինել նրանց պահանջներին և արդարացնել ակնկալիքները:
- 3.5. Հաճախակի կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր, ուսանողներին մասնակից դարձնել «Թանգարանային գիշերներ» հանրապետական միջոցառմանը և այլ ուսուցողական ձեռնարկների:
- 3.6. Ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնելու նպատակով կազմակերպել գրադարանային ժամեր, գեղարվեստական գրքերի քննարկումներ, հրավիրել հանրապետության ճանաչված մշակութային գործիչների, գիտության և կրթության ոլորտի ներկայացուցիչների: Ապահովել ուսանողների հոգևոր-մշակութային, քաղաքացիական, բարոյական, իրավական դաստիարակությունը:

Հ. Գ. Ղաջոյան`

***ԳՊՀ հունանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի դեկան***

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՉՍԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն	20	-	5	80
1-ին	6	-	1	83.3
2-րդ	34	-	10	73.5
3-րդ				
Պատմություն	7	-	5	85.7
1-ին	5	-	4	80
2-րդ	8	-	5	100
3-րդ				
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)	18	-	-	94
1-ին	6	-	2	83.3
2-րդ	6	-	1	83.3
3-րդ				
Ընդամենը	110		33	82.7
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	18	-	5	61
2-րդ	21	-	2	23.8
Պատմություն (իրավ. հիմ.)				
1-ին	8	-	5	87.5
2-րդ	6	-	1	66.6
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	5	-	-	60
2-րդ	1	-	1	100
Ընդամենը	59	-	14	52.5

ԱՄՍՈՒՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	19	-	5	84.2
2-րդ	6	-	2	66.6
3-րդ	32	-	8	71.8
Պատմություն				
1-ին	6	-	3	100
2-րդ	5	-	4	80
3-րդ	10	-	5	90
Մանկ. և մեթոդ.(տարր. կրթության)				
1-ին	18	-	2	88.8
2-րդ	6	-	-	100
3-րդ	6	-	3	100
Ընդամենը	108		32	83.3
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	17	-	9	70.5
Պատմություն (իրավ. հիմ.)				
1-ին	7	-	6	85.7
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	5	-	-	60
Ընդամենը	29		15	72.4

2014/2015 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿԿԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
1	4	-	1	49	2

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝

Քուրթյան Լուսիկ Ներսեսի,

մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ղաջոյան Համլետ Գրիշայի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր,
2. Օհանյան Հայկ Հեքիմի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր,
3. Սիդելնիկովա Ռիտա Վյաչեսլավի - հոգեբանական գիտությունների թեկնածու,
4. Գարեյան Մելանյա Վարդանի - դասախոս,
5. Խաչիկյան Հայկ Խաչիկի - դասախոս,
6. Համբարձումյան Արմինե Եփրեմի - դասախոս,
7. Պետրոսյան Նաիրա Ֆահրադի - դասախոս,
8. Ղաջոյան Արմինե Սամվելի - լաբորանտ:

ՀԱՍՏԵՂՈՂՆԵՐ

1. Այվազյան Էդվարդ Իշխանի - մանկավարժական գիտությունների դոկտոր
2. Բարսեղյան Պարգև Աշոտի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Զարգարյան Արփինե Հրանտի - դասախոս,
4. Կոտուկյան Թամարա Հակոբի - դասախոս,
5. Սաֆարյան Ալիտա Սոսի - դասախոս,
6. Դավթյան Արմինե Վահրամի - դասախոս,
7. Մնեյան Լալա Վաչիկի - դասախոս:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Երեխայի իմացական ոլորտի, անձնային հատկությունների և վարքի ձևավորման ու զարգացման հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները:

2. Մարդը ժամանակակից սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման արժեհամակարգում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
1	-	-	1	21	2

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ղաջոյան Հ. Գ.** Հայոց ցեղասպանության հարցը քաղաքակրթությունների բախման և փաստարկման տեսության համատեքստում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
2. **Քուրբջյան Լ. Ն., Մանուկյան Ս.** Աուտիզմի ախտանիշով երեխաներին նախադպրոցական խմբում ինտեգրելու շտկողական աշխատանքի ծրագիր// «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր, N 1, 2015:
3. **Քուրբջյան Լ. Ն., Վահանյան Ա. Վ.** Ամուսնաընտանեկան կյանքին երիտասարդների սոցիալ-հոգեբանական նախապատրաստման մի քանի հիմնահարցեր// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
4. **Քուրբջյան Լ. Ն., Կիրակոսյան Ա. Հ.** Մանկավարժական հանդուրժողականությունը որպես աշակերտների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման նախապայման// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
5. **Куркчян Л. Н., Ваганян А. В.** Особенности проведения исследовательской работы со студентами педагогических вузов заочного образования в условиях сетевого взаимодействия// Всероссийская научно-практическая конференция, Сборник материалов, Челябинск-Екатеринбург, 2015.
6. **Բարսեղյան Պ. Ա.** Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցերը (2000-2005թթ.), Էջմիածին, ԺԱ, Ս. Էջմիածին, 2014:
7. **Բարսեղյան Պ. Ա.** Իգական աստվածությունների պաշտամունքը Հնդկաստանում// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
8. **Օհանյան Հ. Հ.** Հովհաննես Որոտնեցու մանկավարժական հայացքները// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
9. **Սիդելնիկովա Ռ. Վ.** Փոխակերպվող հասարակությունում որբերի անբարենպաստ փոխհարաբերությունների օբյեկտիվ պատճառականությունը և կարգավորման ուղիները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
10. **Այվազյան Է. Ի.** Անալոգիան մաթեմատիկայի ուսուցման գործընթացում// Ձեկուցում Խ. Արովյանի անվ. ՀՊՄՀ-ի մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կազմակերպած միջազգային կոնֆերանսին, Երևան, 2014:
11. **Այվազյան Է. Ի.** Ապացուցումների ուսուցման չափորոշչային պարտադիր մակարդակի ինտեգրող բնույթը//ԵՊՀ մանկավարժության դեպարտամենտ, գիտաժողով, Ծաղկածոր, 2014:

12. Այվազյան Է. Ի. Գնահատման ազգային համակարգը որպես կրթության որակի բարելավման միջոց// Ձեկուցում ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների և կրթության աշխատողների 3-րդ համագումարում, Մինսկ, 2014:
13. Այվազյան Է. Ի. Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա// բուհական դասագիրք, ԵՊՀ հրատարակչություն, 2015:
14. Айвазян Э. И. О проблеме выделения условия и заключения утверждения. Міністерство освіти и науки України, Сумський державний педагогічний університет імені А. С. Макаренка, Актуальні питання природничо-математичної освіти, Збірник науков их праць, Випуск 3, 2014, Суми ВВП «Мрія», էջ 12-15:
15. Айвазян Э. И. Разработка дидактических требований к сложности задач, характеризующих обязательные результаты обучения математике// Science and Education a New Dimension, Pedagogy and Psychology, II (16), Issue: 33, Budapest, 2014, էջ 26-30// www.Seanewdim.com.
16. Айвазян Э.И. Государственный общеобразовательный стандарт как общественно-государственный заказ перед школой // Вестник Черкасского университета, Серия “Педагогические науки”, N 23 (356), 2015, էջ 3-7:
17. Դավթյան Ա. Վ., Նալբանդյան Շ. Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանության ձեռնարկ// Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն, 2014:
18. Դավթյան Ա. Վ., Հովհաննիսյան Հ., Մկրտչյան Ս. Հայոց Եկեղեցու պատմության դպրոցական դասագրքերի բովանդակային վերլուծություններն ու դրանց ազդեցությունը երիտասարդների վրա //ԲՀՀ, 2014:
19. Դավթյան Ա. Վ., Հովհաննիսյան Հ., Մկրտչյան Ս. «Հայոց Եկեղեցու պատմություն». 2-4 դասարաններ («Քրիստոնեական կրթություն») առարկան Հայաստանի հանրակրթական դպրոցներում, ՀՀԺ ՀԿ, ԲՀՀ, 2015:
20. Դավթյան Ա. Վ. Ուսուցման համադրական-ներդաշնակ զարգացման մեթոդ// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
21. Դավթյան Ա. Վ. Զինակոչիկների ադապտացիայի սոցիալ-մանկավարժական և հոգեբանական մեխանիզմները// ՀՀ ՊՆ, «Զինվորների սոցիալական ադապտացիայի հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով գիտաժողով, Երևան, 2015:
22. Давтян А. В. Феномен «Духовная Личность», как цель духовно-воспитательного процесса// «Սարտահրավերներ և հնարավորություններ. կրոնական ազատությունների հետ կապված զարգացումները իրավական ոլորտում» թեմայով ամենամյա միջազգային գիտագործնական համաժողով, Երևան, 2015:
23. Давтян А. В. Аксиология религии в современной армении: Идеологические основы формирования ценностных приоритетов// ՌԴ, Վլադիմիրի պետական համալսարան, «Ժամանակակից կրոնագիտական ուղղությունների զարգացումները», Կրոնի հոգեբանության, փիլիսոփայության և այլ թեմաներով հետազոտություններին նվիրված համաժողով, 2015:
24. Давтян А. В. Методологические основы духовного воспитания//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
25. Давтян А. В. Проблемы в сфере преподавания религиозных предметов в общеобразовательных школах Армении // Международной научно-практической конференция «Религия в контексте глобализации: Правовые аспекты функционирования

религиозных организаций», Ягеллонский университет, Институт религиоведения, Польша, Краково, 2014.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Հարությունյան Համլետ Մալխասի**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ղարաբյոզյան Արմեն Հայկազի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Հակոբյան Արսեն Աշոտի - պատմական գիտությունների թեկնածու
3. Պողոսյան Աշխունջ Ամիրխանի - պատմական գիտությունների թեկնածու
4. Հայրապետյան Քանաքարա Խաչիկի - ասիստենտ:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Խաչատրյան Արմենակ Սուրենի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Թունյան Վալերի Գեորգիի - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

ԱՄԲՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառը 19-րդ դարում և 20-րդ դարի 30-ական թվականներին

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	4	-	-	23	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հարությունյան Հ. Մ. Նոր Բայազետի գավառի (Սևան) բնակչությունը 1921-1930-ական թթ., ՊԲՀ, N 3, 2014, էջ 96-106:
2. Հարությունյան Հ. Մ. Նոր Բայազետ գավառը 1921թ. փետրվարյան ապստամբության ընթացքում // Լրաբեր հասարակական գիտությունների, N2, 2015, էջ 87-104:
3. Հարությունյան Հ. Մ. Շուշիի հայության կոտորածները (1919թ. հունիս և 1920թ. մարտ) // Բանբեր հայագիտության: Հայագիտական միջազգային հանդես, N 1, 2015, էջ 50-81:
4. Հարությունյան Հ. Մ. Նոր Բայազետի գավառը Խորհրդային Հայաստանի վարչատարածքային բաժանումներում (1920-1930թթ.), ՊԲՀ, N2, 2015, էջ 166-185:

5. **Հարությունյան Յ. Մ.** Փոխադարձ օգնության կոմիտեների (ՓՕԿ) գործունեությունը Նոր Բայազետի գավառում (1921-1929թթ.)// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N2 (17), 2015:
6. **Հարությունյան Յ. Մ.** Խորհուրդների կազմավորումը Նոր Բայազետ (Սևան) գավառում (1920-1930 թթ.)// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N2 (17), 2015:
7. **Հարությունյան Յ. Մ.** Նոր Բայազետ գավառը 1920-1930թթ., Երևան, 2015:
8. **Խաչատրյան Ա. Ա.** Ազգային փոքրամասնությունների արդի կրթական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N2 (17), 2015:
9. **Ղարաբյոզյան Ա. Հ.** Հայոց հնագույն պատմության հարցեր, Երևան, 2014:
10. **Ղարաբյոզյան Ա. Հ.** Պատմաշխարհագրական ուսումնասիրություններ, Երևան, 2015:
11. **Ղարաբյոզյան Ա. Հ.** Մարդերի ռազմական կազմակերպությունը Հին Հայաստանում, ԼԳՀ, N3, 2015:
12. **Պողոսյան Ա. Ա.** Գորգագործությունը Փոքր Ասիայում (XIX դ. երկրորդ կես, XX դ. առաջին քառորդ), Հայ ժողովրդական մշակույթ XVI, Գիտաժողով, Երևան, 2014, էջ 102-110:
13. **Պողոսյան Ա. Ա.** Մայր Աթոռի գորգերի հավաքածուների նոր համալրումների մասին (2008-2014 թթ.)// «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդես, Ը, 2014, էջ 127-137:
14. **Պողոսյան Ա. Ա.** Շուշին՝ գորգագործական մշակույթի կենտրոն (ԺԹ դարի վերջ - Ի դարի առաջին քառորդ) // «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդես, Բ, 2014, էջ 42-50:
15. **Պողոսյան Ա. Ա.** Վասպուրականի հարավ-արևելյան գավառների հայոց գորգագործական մշակույթի մասին // Բանբեր հայագիտության, թիվ 2-3, 2014, էջ 98-126:
16. **Poxosyan A.** Rug weaving culiure of Arcax. Historico-Ethnographic illustrated study, Scholars' Press, Saarbrcken, Germany, 2015:
17. **Հայրապետյան Ք. Խ.** Պատմական նյութի կառուցվածքը եվ նրա դասավանդման մեթոդիկան // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N2 (17), 2015:
18. **Հայրապետյան Ք. Խ.** Մայիսյան ապստամբությունն Աշոտ Հովհաննիսյանի գնահատմամբ // ՉԱԱ երիտասարդ գիտաշխատողների ներհանրապետական գիտաժողով, Երևան, 2015:
19. **Hakobian A.** Wspglnotowa dyplomacja w czasie konżiktu karabaskiego: wymiana wsi Kerkendz i Kyzył–Szafag, Armenia: kultura wspgłczesna w ujęciu antropologicznym [Հայաստան. Ժամանակակից մշակույթը մարդաբանական տեսանկետից], pod redakcją Lewona Abrahamiana i Konrada Siekierskiego, Warszawa: Wydawnictwo DiG, 2014, էջ 51-64:
20. **Тунян В. Г.** Гюлистанский договор: история и современность // Сборник материалов ежегодной научной конференции ЕФ РГУТиС, Ер., 2014.
21. **Тунян В. Г.** Армянский вопрос: мифологический аспект, изд. ЕГУ, 2015.
22. **Тунян В. Г.** Лазаревский формат Туркманчайского мира, Акунк // Сб. научных статей, N 1, 2014.
23. **Тунян В. Г.** Гибель А. С. Грибоедова // Вестник Арменоведения, N 2-3, 2014.

24. **Тунян В. Г.** Мифы младотуркизма о Геноциде армян (1915-1918) // Историко-филологический журнал, N 1, 2015.
25. **Тунян В. Г.** Проблема Геноцида армян и Армянская Апостольская церковь в начале XXI в., Акунк // Сб. научных статей, N 1(11) 1, 2015.
26. **Тунян В. Г.** Деятельность Х. Лазарева во время Адрианопольской компании // Вестник общественных наук, N 2, 2015.
27. **Тунян В. Г.** Проблема “Автономной Армении” и добровольческое движение 1914 г. в видах Турции и России // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N2 (17), 2015:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Խաչատրյան Սամվել Արտաշեսի** - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր,
2. **Վարդանյան Գեղեցիկ Մարատի** - ասիստենտ,
3. **Ամիրյան Անի Սամվելի** - լաբորանտ:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Հրանուշ Հրանտի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
3. **Խաչատրյան Աշոտ Հայկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
4. **Ապրոյան Արսեն Հրաչիկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու,
5. **Հարությունյան Մնացական Հայկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու,
6. **Լազարյան Վարդան Գերասիմի** - դասախոս,
7. **Վարդանյան Մարգարետունի Գոռի** - ասիստենտ,
8. **Հովհաննիսյան Օլգա Արտյոմի** - ԳՊՀ դոցենտ,
9. **Մուրադյան Պապին Օնիկի** - ասիստենտ,
10. **Գրիգորյան Տարոն Վրեժի** - ասիստենտ,
11. **Հովսեփյան Արմինե Արկադայի** - դասախոս,
12. **Բախտիկյան Լուսինե Վանիկի** - ասիստենտ:

ԱՍԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության ձևավորման, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ սահմանադրական, քաղաքացիական և քրեական օրենսդրության բարեփոխման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	5	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հակոբյան Ջ. Ջ., Հակոբյան Ռ. Խ.** Ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
2. **Խաչատրյան Ս. Ա.** Գիշությունը որպես հին հայկական գրադաշտական և քրիստոնեական իրավունքի նորմ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
3. **Խաչատրյան Ս. Ա.** Խոսքով Երրորդ Մեծ Արշակունու թագավորության և նրա սպանության հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
4. **Խաչատրյան Ս. Ա.** Սովետական իրավունքի և պետության գոյության փուլերը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
5. **Ամիրյան Ա. Ս.** Հայաստանի Հանրապետությունում ըստ օրենքի ժառանգման իրավական կարգավորումը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ամիրխանյան Սամվել Գրիգորի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ *Չերզնյան Մարիամ Նորիկի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
080300	Ֆինանսներ
081500	Հաշվապահական հաշվառում
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Մասնագիտացումներ՝

բակալավր՝
ֆինանսների բակալավր
ֆինանսների բակալավր
տնտեսագիտության բակալավր

մագիստրոս՝
ֆինանսների մագիստրոս
ֆինանսների մագիստրոս
տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 191

Շրջանավարտների թիվը՝ 36

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2014-2015 ուսումնական տարին ԳՊՀ-ում նշանավորվեց կրթության որակի բարձրացմանը միտված համալիր միջոցառումներով, բուհի միջազգայնացման հաստատուն կողմնորոշմամբ, մասնագետների գործնական կարողությունների զարգացմանը և շուկայի պահանջարկին շրջանավարտի համապատասխանեցմանը ուղղված քայլերով:

Բուհերի մրցակցությունը արդի ժամանակներում լարված բնույթ է կրում և թելադրում է աշխատաշուկայի պահանջները բավարարող բարձրագույն կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի մշակման խնդիր: Միայն այսպես բուհը կարող է ժամանակի քննությունը բռնել:

ԳՊՀ-ն և, մասնավորապես, տնտեսագիտական ֆակուլտետը ընթանում են մրցունակ կադրերի պատրաստման ճանապարհով, որի հիմքում ընկած է կրթական ծրագրերի բոլոր բաղադրիչների իրականացումը:

Համալսարանը, տնտեսագիտական ֆակուլտետը տարեցտարի ամրապնդում է կրթության որակի ապահովման հիմքերը, ներառում կրթական այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց հատույցը ինտենսիվ է և արտահայտվում է շրջանավարտների մասնագիտական կարողությունների իրական ձևավորման մեջ:

Հաշվետու ուստարում ընդլայնվել են համալսարանի միջազգային կապերը, որն իր նպաստն է բերում նաև մեր ֆակուլտետին, որտեղ ուսանելու են գալիս արտերկրից:

Ֆակուլտետի խորհուրդը ողջ ուժերը նպատակամղել է որակյալ մասնագետների պատրաստմանն ուղղված կրթական համալիր համակարգի ներդրմանը, ուսանողների տեսական գիտելիքներին համապատասխան գործնական կարողությունների ամրապնդմանը: «Շրջանավարտը՝ պահանջված մասնագետ». ահա ֆակուլտետի գործունեության կարգախոսը:

Կարևորվում են արտասահմանյան բուհերի հետ ակտիվ կապերը: Համաձայն համալսարանում գործող կարգի, ուսանողները եվրոպական բուհերից վերադառնալուց հետո հանդես են գալիս շնորհանդես-հաշվետվություններով ուսանողների և դասախոսների առջև, որով մեկ անգամ ևս պարզ է դառնում, որ ԳՊՀ ուսանողները և դասախոսները հետաքրքրված են արտերկրի բուհերի կրթական համակարգերի առանձնահատկություններով:

Դեկանատը ուսումնական տարվա իր գործունեությունը ծավալել է ըստ ֆակուլտետի 2014-2015թթ. զարգացման հայեցակարգի: Նախ անդրադառնանք ընդունված հայեցակարգի առաջնահերթ պահանջների կատարմանը:

✓ Ուսանողների ապագա կարիերայի խնդիրները գտնվում են ուսուցման և դաստիարակության գործընթացի առանցքում: Ուսանողներին պարզաբանվում են այն բոլոր պահանջները, որոնք առնչվում են մասնագիտական կարիերային, մասնագիտական որակների ձեռքբերմանը: Դեկանատը կազմակերպել է «Մասնագիտական կարիերա» ցերեկույթը, որին մասնակցել են տնտեսագիտական ֆակուլտետի շրջանավարտներ, գործատուներ:

✓ Բազմազան են ուսուցման որակի բարձրացման միջոցառումները, որոնք բխեցվում են աշխատաշուկայի պահանջներից: Ուսանողներին ներկայացրել ենք ժամանակակից աշխատաշուկան և նրա պահանջները: Անդրադարձել ենք այն հարցին, թե ովքեր են բուհն ավարտելուց հետո ընդունվում աշխատանքի: Նման վերլուծություն ենք ներկայացրել ուսանողությանը:

✓ Ելնելով զարգացման հայեցակարգի պահանջներից՝ ամբիոններում լսվել են հաշվետվություններ որակի ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ, սակայն ուսանողների հաշվետվություններ չեն լսվել, որը հայեցակարգային պահանջ է:

✓ Հայեցակարգը պահանջում է մագիստրոսներին ներգրավել գիտական-հետազոտական աշխատանքներում: Ներկայումս ավելացել է գիտական հոդվածներով հանդես եկող մագիստրոսների թիվը, սակայն դա բավարար չէ:

✓ Հայեցակարգում նշված է ամբիոնները մասնագետ կադրերով ապահովելու անհրաժեշտությունը: Այս ուղղությամբ մեր ֆակուլտետում բավարար գործ կատարվում է: Հաշվետու ուստարում մեզ մոտ աշխատել է 2 նոր դասախոս: Նրանք նեղ մասնագիտությունների տիրապետող մասնագետներ են:

✓ Հայեցակարգը պահանջում է՝ «Տեսանելի դարձնել յուրաքանչյուր մասնագիտության առաքելությունը»: Այդ նպատակով մենք իրականացնում ենք մասնագիտական այցելություններ շուկայում իրենց հաստատուն տեղն ունեցող ձեռնարկություններ և կազմակերպություններ, կազմակերպում էքսկուրսիաներ, արդյունավետ դարձնում պրակտիկաները:

Հայեցակարգային չլուծված որոշ հարցեր ներառել ենք նոր հայեցակարգում՝ դրանց լուծում տալու նպատակով:

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում սովորում էին 191 ուսանողներ, որից 133-ը՝ բակալավրիատում և 58-ը՝ մագիստրատուրայում: 2014-2015 ուսումնական տարում ֆակուլտետ ընդունվել է 35 ուսանող, նախորդ տարում՝ 30, իսկ 2012 թվականին՝ 45 ուսանող:

Տնտեսագիտական ֆակուլտետում սովորող ուսանողների թիվը

<i>ԴՐՔՆԻԾՔՆԻ</i>	I	II	III	IV	<i>ԱՅԻՍՍՅԱ</i>
Ֆինանսներ	24	26	36	4	90
Հաշվապահական հաշվառում	4	4	11		19
Ձեռն. տնտ. և կառավարում	7	11	6		24
ԸՆԴԱՄԵՆԸ	35	41	53	4	133
ՍԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ					
Ֆինանսներ	15	20	X	X	35
Հաշվապահական հաշվառում	7	8	X	X	15
Ձեռն. տնտ. և կառավարում	4	4	X	X	8
ԸՆԴԱՄԵՆԸ	26	32	X	X	58
ԸՆԴԱՄԵՆԸ ֆակուլտետում	191				

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների առաջադիմությունը

2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ֆակուլտետի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 2,7 %-ով (81,7-ից դարձել է 79,2%), իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 6,3%-ով:

Բակալավրիատում այն աճել է 1,5%-ով և հասել 81,0%-ի, իսկ մագիստրատուրայում նվազել է 17%-ով և հասել 70,0%-ի, առաջին կիսամյակի համեմատությամբ բակալավրիատում աճը կազմել է 13,3%, իսկ մագիստրատուրայում 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 10,4%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)

	2013-2014 ուստարվա II կիսամյակ	2014-2015 ուս. տարվա I կիսամյակ	2014-2015 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆակուլտետ	81,7	72,9	79,2	-2,7	+6,3
Բակալավրիատ	79,5	67,7	81,0	+1,5	+13,3
Մագիստրատուրա	87,0	80,4	70,0	-17	-10,4

Տնտեսագիտական ֆակուլտետի 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 2,7%-ով, իսկ առաջին կիսամյակի նկատմամբ աճել է 6,3%-ով: Նվազումը տեղի է ունեցել մագիստրատուրայի առաջադիմության նվազման պատճառով, քանի որ բակալավրիատում այն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 1,5%, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 13,3%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով) Ֆինանսներ բաժնում

Կուրսը	2013-2014 ուստարվա II կիսամյակ	2014-2015 ուստարվա I կիսամյակ	2014-2015 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	70,8	87,5	-12,5	+16,7
Երկրորդ	72,7	84,6	80,0	+7,2	-4,6
Երրորդ	75,0	45,7	60,6	-14,4	+14,9
Չորրորդ	-	50	-	-	-

«Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը երկրորդ կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ նվազել է 12,5 %-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ այն աճել է 16,7%-ով:

Երկրորդ կուրսում այն համապատասխանաբար աճել է 7,2% և նվազել 4 %-ով:

Երրորդ կուրսի առաջադիմությունը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 14,4%-ով և 14,9%-ով էլ աճել առաջին կիսամյակի համեմատությամբ:

**Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)
Հաշվապահական հաշվառում բաժնում**

Կուրսը	2013-2014 ուստարվա II կիսամյակ	2014-2015 ուստարվա I կիսամյակ	2014-2015 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	66,7	75	100	+33,3	+25
Երկրորդ	81,8	50	-	-	-
Երրորդ	-	81,8	100	-	+18,2
Չորրորդ	-	-	-	-	-

Հաշվապահական հաշվառում մասնագիտության առաջին կուրսում առաջադիմությունը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ աճել է 33,3%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ նույնպես աճել է 25%-ով:

Հաշվապահական հաշվառում մասնագիտության երկրորդ կուրսը 2-րդ կիսամյակում լուծարվեց՝ ուսանողների այլ բաժիններ տեղափոխվելու պատճառով:

Երրորդ կուրսում առաջադիմությունը նախորդ կիսամյակի համեմատությամբ աճել է 18,2%-ով և կազմել 100%:

**Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնում**

Կուրսը	2013-2014 ուստարվա II կիսամյակ	2014-2015 ուս տարվա I կիսամյակ	2014-2015 ուս տարվա II կիսամյակ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	75,0	100	100	+25	0
Երկրորդ	80,0	81,8	81,8	+1,8	0
Երրորդ	-	83,3	100	-	+16,7
Չորրորդ	-	-	-	-	-

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտության առաջին կուրսում նախորդ տարվա համեմատությամբ առաջադիմությունը բարձրացել է 25%-ով և կազմել 100%, և առաջին կիսամյակին պահպանվել է 100%-ը: Երկրորդ կուրսում այն համապատասխանաբար աճել է 1,8%-ով՝ կազմելով 81,8%:

Երրորդ կուրսի երկրորդ կիսամյակի առաջադիմությունը առաջին կիսամյակի համեմատ աճել է 16,7%-ով և կազմել 100%:

**Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշներ (%-ներով)
Մագիստրատուրայում**

Բաժինը, կուրսը	2013-2014 ուստարվա II կիսամյակ	2014-2015 ուստարվա I կիսամյակ	2014-2015 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2013-2014 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2014-2015 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ I կուրս /ՄՖ/	84	78,6	50	-34	-28,6
Ֆինանսներ II կուրս	-	75	-	-	-
Հաշվապահական հաշվառում I կուրս /ՄՀՀ/	88	85,7	100	+12	-14,3
Հաշվապահական հաշվառում II կուրս	-	100	-	-	-
Ձեռնարկությունների տնտես. և կառավարում I կուրս /ՄՁՏԿ/	100	75	75	-25	0
Ձեռնարկությունների տնտես. և կառավարում II կուրս	-	75	-	-	-

ՄՖ առաջին կուրսում առաջադիմությունը նվազել է 34 %-ով և կազմել 50%, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 28,6%-ով:

ՄՖ երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 75%:

ՄՀՀ առաջին կուրսում առաջադիմությունը աճել է 12%-ով և կազմել 100%, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 14,3%-ով:

ՄՀՀ երկրորդ կուրսում այն կազմել է 100%:

ՄՁՏԿ առաջին կուրսում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 25%-ով և կազմել 75%` պահպանելով առաջին կիսամյակի մակարդակը` 75%:

ՄՁՏԿ երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 75%

Երրորդ կուրսերի առաջադիմությունն ըստ կիսամյակների

Կիսամյակներ	Ուսանողների թիվը	Ֆինանսներ III կուրս %	Ուսանողների թիվը	Հաշվապահական հաշվառում III կուրս %	Ուսանողների թիվը	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում III կուրս %
1-ին կիսամյակ	21	57,1	15	53,3	6	66,7
2-րդ կիսամյակ	21	85,7	15	73,3	6	100
3-րդ կիսամյակ	36	44,4	13	62,9	4	50,0
4-րդ կիսամյակ	34	72,7	11	81,8	7	80
5-րդ կիսամյակ	36	45,7	11	81,8	6	83,3
6-րդ կիսամյակ	33	60,6	11	100	6	100

Ֆինանսներ բաժնում անցած 6 կիսամյակներում առաջադիմությունը տատանվել է 44,4-85,7% սահմաններում և վերջին կիսամյակում կազմել է 60,6%: Այս կուրսում 11 ուսանողներ չեն մասնակցել քննաշրջանին, 2-ը ստացել են անբավարար գնահատական: Նման ուսանողների մի մասը անտարբերություն է դրսևորում լուծարային շրջանում, ինչը մտահոգության տեղիք է տալիս: Ամբիոնները և դեկանատը ձեռնարկել են միջոցառումներ` շտկելու նման ուսանողների վարքագիծը:

Հաշվապահական հաշվառում բաժնում անցած 6 կիսամյակներում նկատվել է առաջադիմության դինամիկ աճ և 1-ին կիսամյակի 53,3%-ից այն դարձել է 100%:

Նույնը կարելի է ասել ՁՏԿ մասնագիտության առումով, որտեղ առաջադիմությունը 66,7%-ից աճել է մինչև 100%:

Ուսանողների շարժը տնտեսագիտական ֆակուլտետում
2014-2015 ուսումնական տարում

	բակալավրիատ	մագիստրատուրա	ընդամենը
Զորակոչվել է բանակ	6	-	6
Զորացրվել է բանակից	11	9	20
Վերականգնել է ուսանողական իրավունքները	3	1	4
Տրամադրվել է տարկետում	-	-	-
Սովորում է արտերկրում	1	3	4
Յեռացվել է ԳՊՀ-ից	2	13	15
Ազատվել է ԳՊՀ-ից	2	3	5
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ այլ ֆակուլտետներից	12	-	12
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից այլ ֆակուլտետ	1	-	1
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից հեռակա ուսուցման ֆակուլտետ	4	-	4
Տեղափոխվել է այլ բուհից/քոլեջից/ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ	6	-	6
Ներֆակուլտետային տեղափոխություն	-	-	-

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվեց այլ ուսումնական հաստատություններից դեպի ԳՊՀ ուսանողների շարժ:

Այլ բուհերից և քոլեջներից տնտեսագիտական ֆակուլտետ է տեղափոխվել 6 ուսանող, բանակից վերադարձել է 20 ուսանող, նրանք շարունակում են ուսումը բակալավրիատում և մագիստրատուրայում: Բանակից զորացրվածները ցուցաբերում են կարգապահություն և ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում: Բանակ է զորակոչվել 6 ուսանող:

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, ինչպես նաև ավարտական ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է 2015թ. մայիս ամսին՝ սահմանված կարգով:

2015թ. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետն ավարտեցին 36 շրջանավարտներ, այդ թվում՝

- Ֆինանսներ մասնագիտությամբ՝ 5 բակալավր և 20 մագիստրոս,
- Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ՝ 7 մագիստրոս
- Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ՝ 1 բակալավր և 3 մագիստրոս:

Բուհը չավարտեց Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտության 1 մագիստրոս և գրանցվեցին առաջադիմության հետևյալ ցուցանիշները:

Ամփոփիչ ատեստավորման առաջադիմություն

Մասնագիտությունը	Բակալավրիատ %	Մագիստրատուրա %
Ֆինանսներ	100	100

Հաշվապահական հաշվառում	100	100
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	100	75

Ստորև ներկայացվում են ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

**2014-2015 ուսումնական տարվա
ամփոփիչ ատեստավորման արդյունքները**

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	5		2						2	1	
	Ամփոփիչ քննություն II	-										
	Ավարտական աշխատանք	5	2				2		1			
Ֆինանսներ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	20	8	7	2		2	1				
Հաշվապահական հաշվառում /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	7	2	4			1					
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /մագիստրատուրա /	Մագիստրոսական թեզ	3		3								
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /մագիստրատուրա /	Ամփոփիչ քննություն I	1									1	
	Ամփոփիչ քննություն II	1									1	

Ամփոփիչ ատեստավորման գործընթացի ավարտին ստանում ենք հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները՝ համապատասխան առաջարկություններով:

«Հաշվապահական հաշվառում» բաժնի մագիստրատուրայի քննական հանձնաժողովն առաջարկել է՝

ա) Մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությանն ու հաստատմանը մասնակից դարձնել գործատուներին: Առաջարկությունը արդեն հաշվի է առնվել:

բ) Թեզերում կիրառել մաթեմատիկական մոդելավորման գործիքներ:

գ) Մագիստրոսական թեզ պետք է գրվի ժամանակակից գրականության վերլուծության հիմքի վրա:

«Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն ուշադրություն է հրավիրում ավարտաճառերի համալիր բովանդակության ապահովմանը, գրախոսությունների որակին, նախապաշապանությունների արդյունավետության ապահովման խնդրին: «Ֆինանսներ» մասնագիտության մագիստրատուրայի հանձնաժողովը նույնպես առաջարկում է՝ ավելի արդյունավետ դարձնել նախնական պաշտպանությունները, ավարտաճառերում ուշադրություն դարձնել ուսանողների ինքնուրույն առաջարկություններին: Այս բոլոր առաջարկությունների ու դիտողությունների իրականացման նպատակով մշակել ենք միջոցառումների պլան:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն առաջարկում է թեզերում առավել մեծ տեղ հատկացնել հանրապետության տնտեսության տարբեր

ճյուղերում փոքր և միջին ձեռնարկությունների փաստացի ցուցանիշների վերլուծությանը և կատարել առավել ընդգրկուն համեմատություններ:

Անվճար տեղերում սովորող ուսանողների մասին

Անվճար տեղերում ուսուցումը սկսվել է 2010-2011 ուսումնական տարվանից և այդ գործընթացը շարունակվում է այս ուսումնական տարում, ինչի արդյունքում ուսանողները դրսևորում են բարձր առաջադիմություն՝ ձգտելով պահպանել իրենց տեղերը: Այժմ 25 ուսանող բակալավրիատից և 14 ուսանող մագիստրատուրայից սովորում են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ:

Տնտեսագիտական ֆակուլտետում անվճար սովորողների թիվը՝ ըստ մասնագիտությունների Բակալավրիատ

Կուրսը	Ֆինանսներ			Հաշվապահական հաշվառում			Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում			Ընդամենը
	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	
Ուսանողների թիվը	3	2	3	3	2	3	3	3	3	25

Մագիստրատուրա

Կուրսը	Ֆինանսներ		Հաշվապահական հաշվառում		Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում		Ընդամենը
	1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	
Ուսանողների թիվը	2	3	4	2	2	1	14

Հաշվետու ժամանակաշրջանում փոխատեղման արդյունքներով անվճար սովորելու իրավունք ստացան բակալավրիատի 25 և մագիստրատուրայի 14 ուսանողներ:

Անվճար տեղերի առկայությունը բակալավրիատում և մագիստրատուրայում ազդում է ուսանողների ակտիվության և ուսման որակի բարձրացման վրա՝ լարված պահելով մրցակցությունը: Անվճար սովորելը մղում է բարձր առաջադիմության, յուրաքանչյուր միավորի համար լուրջ ջանքերի ներդրման:

Մագիստրատուրայի անվճար տեղերում սովորող և զինվորական տարկետումից օգտվող, ինչպես նաև զինվորական ծառայությունից հետո ուսումը շարունակող ուսանողները պահպանել են իրենց միջին որակավորման գնահատականները:

Ձարգացման հիմնական ուղղություններն ու միտումները

Ֆակուլտետի հետագա զարգացումները կանխորոշելու համար հենվում ենք բուհի գիտխորհրդի որոշումների և ռազմավարական ծրագրերի վրա, կազմում գործողությունների ծրագիր, որի իրականացման պատասխանատվությունը կրում են ֆակուլտետի խորհուրդն ու ամբիոնները:

Դեկանատի խնդիրն է որոշումների կատարման գործում հանդես բերել հետևողականություն, կրթական ծրագրերի զարգացման միտումները նախատեսելիս՝ ուղեցույց ունենալ աշխատաշուկայի պահանջները:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը կարևորում է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, որն իր մեջ ներառում է դասախոսների աշխատանքի բարձր արտադրողականությունը, ուսանողների պատրաստման որակի բարձրացումը, մրցունակ մասնագետների պատրաստումը:

Ընդհանրապես ԳՊՀ-ում, և մասնավորապես տնտեսագիտական ֆակուլտետում ուսումնական գործընթացի համալիր փոփոխությունները բխեցվում են կրթական համակարգի միջազգայնացման նպատակից: Առաջին հերթին նկատի է առնվում միջազգային չափորոշիչներին ծրագրերի համապատասխանեցումը և կրթության որակի ապահովումը՝ հիմնված ժամանակակից սկզբունքների և մեթոդների, արդյունավետ կրթական տեխնոլոգիաների վրա:

Ֆակուլտետի խորհուրդը, ամբիոնները ուսուցման համակարգի կատարելագործմանը վերաբերվում են որպես դինամիկ գործընթաց, որը պետք է ապահովել կրթական յուրաքանչյուր փուլում:

Տնտեսագիտական ֆակուլտետի խնդիրն է՝ կադրերի պատրաստումը ամբողջովին կողմնորոշել դեպի շուկայական պահանջարկը և ուսումնական պրոցեսը ուղղել դեպի մասնագիտական գիտելիքների և գործնական կարողությունների համապատասխանեցումը գործատուների ակնկալիքներին, աշխատանքին պատրաստ կադրերի թողարկումը:

Արդի կրթական համակարգում հարկավոր է, որ դասախոսները, տեսականին զուգընթաց, տիրապետեն ժամանակակից մանկավարժության ողջ զինանոցին, դասախոսությունների ընթացքում օգտագործեն գործնական մեթոդներ, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ:

Այս ամենը ընթացքի մեջ է, և դասապրոցեսը ավելի է ակտիվացել:

Սակայն, դեռ դասախոսը ուսանողից չի պահանջում արդի գիտական աղբյուրներից օգտվելու վերաբերյալ հաշվետվություն: Դասախոսը չպետք է անհետևողական լինի, դասախոսության հատույցը ամենակարևորն է, ինչը դասախոսը պետք է հետևողականորեն ստուգի՝ ստուգումը դարձնելով իր աշխատանքի անբաժան մասը:

Միաժամանակ, գործնական պարապմունքները վարելիս՝ անհրաժեշտ է լիարժեք օգտվել համալսարանի տեխնիկական պայմաններից և ռեսուրսներից՝ ապահովելով արդյունավետ ուսումնական միջավայր:

Ելնելով մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացման պահանջներից՝ անհրաժեշտ է թարմացնել առարկայական ծրագրերը, ներառել նոր դասընթացներ:

Համապատասխանաբար, հաշվետու ուսումնական տարվա սկզբին փոխվել են առանձին դասընթացներ:

Այսպես, մագիստրատուրայի բոլոր առաջին կուրսերում ներդրվել է «Պետական գնումների կազմակերպման հիմունքներ» /ՀՀ ամբիոնի դասախոս Անահիտ Հակոբյան/ դասընթացը:

Մագիստրոտուրայի ֆինասներ բաժնի առաջին կուրսում ներդրվել են «Բանկային գործի կարգավորում», /«Բազել-3 ծրագիր»/ /դասախոս տ.գ.թ. դոցենտ Աշոտ Մարդոյան/ և «Ֆինանսական վերլուծություն» /դասախոս տ.գ. դոկտոր Աշոտ

Բայադյան/ առարկաները: Կարևորվել է տնտեսության մասնավոր հատվածի համար ֆինանսական վերլուծաբանների պատրաստումը:

Ներառվել է նաև «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում» դասընթացը:

Փոփոխություններ են կատարվել առարկայական ծրագրերում: «Ծառայությունների ոլորտի տնտեսագիտություն» առարկայի դասավանդման ծրագրում ներառվել են տուրիզմի ոլորտում տեղի ունեցող զարգացումները և նորությունները:

«Արդյունաբերական ճյուղերի տեխնոլոգիական համակարգեր» առարկայի քննությունը անցկացվել է թեստերով` «Examination. GSU» ծրագրով:

Դեկանատը մտահոգ է ուսումնական և գիտական ձեռնարկներով ապահովվածության խնդրով: Արդեն ձեռք ենք բերել «Կառավարչական հաշվառում» թեստերի ժողովածուն, «Հաշվապահական հաշվառում», «Տնտեսագիտական սոցիոլոգիա» և «Կառավարման սոցիոլոգիա» ուսումնական ձեռնարկները:

Վերջին տարիներին համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը մեզ պահում է մշտական ուսումնասիրողի և գնահատողի դերում, և մենք պետք է օգտվենք այդ հնարավորությունից: Ինքնավերլուծությունը հետագա գործունեության բարելավման կարևոր երաշխիք է:

2014-2015 ուստարում ԳՊՀ-ում իրականություն դարձավ Բոլոնյան գործընթացի հեռահար նպատակներից մեկը: Իսպանիայի Կոռունայի համալսարանի երկու մագիստրոսներ 6 ամսով սովորելու եկան ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ, որի համար նրանց ընտրած առարկաներին համապատասխան մշակվեցին ուսումնական պլաններ և ծրագրեր, ապահովվեցին անգլերեն լեզվով դասավանդող դասախոսներ:

Օտարերկրացի ուսանողները ԳՊՀ-ում ավարտեցին իրենց ուսումնառությունը և 2015թ. մարտի 15-ին իսպանացի ուսանողների համար կազմակերպվեց հաշվետու հանդիպում բուհի պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի ներկայացուցիչների հետ: Մանուել Ֆերնանդես Կորգոյը և Ադրիան Նունյեզը հանդես եկան հաշվետվություն շնորհանդեսով, ինչպես նաև Հայաստանի մասին պատմող տեսանյութով:

Օտարերկրացի ուսանողներին ԳՊՀ դասախոսները դասավանդում են օտար լեզվով, ինչը նշանակալի ձեռքբերում է:

2014-2015 ուսումնական տարվա ավարտին Եվրոպական Միության «Erasmus Mundus. Tempo» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում Իսպանիայի Թագավորության Ալիկանտեի համալսարանում կրթությունը շարունակող մագիստրատուրայի «Հաշվապահական հաշվառում» բաժնի երկրորդ կուրսի ուսանող Գևորգ Սարգսյանը նույն համալսարանում պաշտպանեց մագիստրոսական թեզ: Սա արտերկրում թեզի պաշտպանության առաջին դեպքն է: Նա ստացել է մագիստրոսի աստիճան և ընդունվել Ալիկանտեի համալսարանի դոկտորանտուրա:

Հաշվետու ուստարում Ֆրանսիայի Հանրապետության «Montpellier 2» համալսարանում ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ» բաժնի երրորդ կուրսի ուսանողուհի Աննա Մարուխյանը և մագիստրատուրայի «Ֆինանսներ» բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Մարիամ Ստեփանյանը Իտալիայի Հանրապետության Պավիա համալսարանում ավարտեցին իրենց ուսումը և անհրաժեշտ կրեդիտներ կուտակած` վերադարձան:

Ծրագրի զարգացման նպատակով հաշվի են առնվում դասախոսների, ուսանողների և գործատուների առաջարկությունները, որոնք քննարկվում են ամբիոններում:

Դասավանդման նոր մեթոդների օգտագործումը ֆակուլտետի ամբիոնների մշտական ուշադրության կենտրոնում է:

Դասախոսական կազմը համապատասխանում է իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի պահանջներին: Սակայն նոր կադրերի պահանջ զգացվում է: Նկատի ունենք նորագույն կրթական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետներին:

Բուհական համակարգը համատեղում է կրթությունը և գիտությունը, ուստի մեր խնդիրներից մեկն էլ համարում ենք ամբիոններում գիտահետազոտական աշխատանքների շարունակական ընթացքի ապահովումը և խթանումը:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսները կատարել են գիտահետազոտական աշխատանք, ներկայացրել 11 գիտական հոդվածներ:

Ֆակուլտետի ուսանողները անտարբեր չեն հանրապետության բուհերում անցկացվող գիտաժողովներին: Տնտեսագիտական ֆակուլտետի 3 ուսանողներ՝ դասախոս Գայանե Խաչատրյանի ղեկավարությամբ, պատրաստեցին զեկուցումներ և ներկայացրին ՀՀ ճգնաժամային կառավարման ակադեմիա: Դրանք տպագրվեցին ակադեմիայի գիտաժողովի նյութերի ժողովածուում:

Կրթության որակի ապահովման գործընթաց

Ֆակուլտետի խորհրդի մշտական ուշադրության կենտրոնում են կրթության որակի վերահսկողությունն ու կառավարումը, սակայն որոշ խնդիրներ դեռևս մնում են չհաղթահարված: Այս հարցում ղեկանատը շատ անելիքներ ունի:

Խիստ կարևորում ենք յուրաքանչյուր ուսանողի միջին որակական գնահատականը /ՄՈԳ-ը/, և ուսումնառության ընթացքում դրա դինամիկան:

2014-2015 ուս տարում ըստ մասնագիտությունների և կուրսերի ձևավորված ՄՈԳ-ը՝ համապատասխան սանդղակով /2013-2014 ուստարվա համեմատությամբ/

Մասնագիտություններ, կուրսեր	ուսանողների թիվը	1,7-2,9		3,0-3,5		3,6-4,0	
		ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս
Ֆ 1-ին	24	- / 5	- / 21	- / 15	- / 63	- / 4	- / 11
Ֆ 2-րդ	14 / 26	5 / 6	35.7 / 23	4 / 9	28.6 / 35	5 / 11	35.7 / 42
Ֆ 3-րդ	35 / 36	18 / 7	51.4 / 19	8 / 11	22.8 / 31	9 / 18	25.8 / 50
Ֆ 4-րդ	5 / 4	3 / 2	60 / 50	0 / 0	0 / 0	2 / 2	40 / 50
ՀՀ 1-ին	4	- / 0	- / 0	- / 2	- / 50	- / 2	- / 50
ՀՀ 2-րդ	3 / 4	2 / 0	66.6 / 0	1 / 3	33.4 / 75	0 / 1	0 / 25
ՀՀ 3-րդ	12 / 11	3 / 1	25 / 9	3 / 3	25 / 27	6 / 7	50 / 64
ՉՏԿ 1-ին	7	- / 3	- / 43	- / 4	- / 57	- / 0	- / 0
ՉՏԿ 2-րդ	8 / 11	1 / 2	37.5 / 18	1 / 0	12.5 / 0	4 / 9	50 / 82
ՉՏԿ 3-րդ	5 / 6	1 / 0	20 / 0	1 / 1	20 / 17	3 / 5	60 / 83

Միջին որակական գնահատականը առանձին ուսանողի առաջադիմությունն է, որի առաջընթաց փոփոխությունը դառնում է որակի իրական ցուցանիշ: Առանձին կուրսերում ունենք միջին որակական գնահատականների աճ, որը ցույց է տալիս գիտելիքների ձեռքբերման կայուն ընթացք:

Այսպես 3,6-4,0 ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը աճել է՝

«Ֆինանսներ» 2-րդ կուրսում՝ 6-ով և կազմել 42%,

«Ֆինանսներ» 3-րդ կուրսում՝ 9-ով և կազմել 50%,

«Հաշվապահական հաշվառում» 3-րդ կուրսում՝ 1-ով և կազմել 64%,
«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 2-րդ կուրսում՝ 3-ով և կազմել 82%,

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 3-րդ կուրսում՝ 2-ով և կազմել 83%:

Ուսանողների առաջադիմությանը և ուսման որակի բարձրացմանը կնպաստեն ԳՊՀ ուսանողների ակադեմիական առաջադիմության բարձրացման ուղիների և կառուցակարգերի վերաբերյալ մշակած առաջարկությունները:

Ուսման որակի բարձրացման ուղիներից մեկը դասախոսությունների տրամադրումն է ուսանողությանը, որը գիտական նյութի քննական յուրացման լավագույն միջոցն է: Նշենք էլեկտրոնային ուսուցման «E-learning.GSU» համակարգի ներդրման կարևորությունը և արդյունավետությունը:

Մտահոգիչ է այն, որ ուսանողների մի մասը նախապես չի ծանոթանում դասախոսությունների տեքստերին, ինչը թույլ չի տալիս նրանց ներգրավել քննարկումների գործընթացին, այսինքն, չի կատարվում աշխատանքային պլանով նախատեսված ուսանողի ինքնուրույն ժամերի պահանջը: Պետք է հասնել նրան, որ ուսանողները թեմայի որոշակի իմացությամբ մուտք գործեն լսարան, որպեսզի արդյունավետ քննարկում ծավալվի: Ավելին, դասախոսությունների տրամադրումը ուսանողին մղում է հետազոտության: Նշենք, որ դասախոսները դեռևս դժգոհում են ուսանողներից՝ առանց դասախոսության տեքստերին ծանոթանալու դասի ներկայանալու համար:

Ոչ բոլոր ուսանողներն են տիրապետում խոսքի մշակույթին, գրագետ հաղորդակցության նորմերին:

Նրանք նորությունները դիտելով՝ բավարարվում են դրանով և խուսափում են կենդանի շփումից, քննարկումներից, մինչդեռ գործատուներին պետք են գրագետ և տպավորիչ խոսք ու ակտիվ խառնվածք ունեցող երիտասարդ կադրեր:

Դասախոսները պետք է ներքոնշյալ ուղղություններով ջանքեր գործադրեն.

- նպաստեն ուսանողների կողմից կարիերայի բաղադրիչների հաստատումն կերպով ձևավորմանը,
- ապահովեն աշխատանքում ազնվություն և թափանցիկություն,
- կատարեն ամբիոնային պատականությունները,
- տպագրեն գիտական հոդվածներ, ձեռնարկներ և այլն,
- մասնակցեն հանրապետական և միջազգային գիտաժողովների,
- մասնակցեն բուհում կազմակերպված միջոցառումներին, գործատուների հետ հանդիպումներին, հանդես գան առաջարկություններով,
- անձամբ նպաստեն բուհի հեղինակության բարձրացմանը:

Որակյալ կադրերի պատրաստման համար կարևոր գործոն է դասախոսների կողմից ուսանողներին ինքնաճանաչման մղելը՝ նրաց ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը: Այդ նպատակով ֆակուլտետի ուսանողներին բաժանվել են հարցաթերթիկներ, որի միջոցով նրանք կկատարեն SWOT վերլուծություն, կձևակերպեն իրենց առաջիկա խնդիրները: Հուսով ենք, որ այն կնպաստի սեփական առաջնահերթությունների որոշմանն ու դրանց կենսագործմանը:

Ֆակուլտետում լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին ինչպես ռեկտորատի, այնպես էլ դեկանատի և դասախոսների կողմից: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական

պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն): Անհարգելի բացակայելու պատճառով մագիստրատուրայի 3 ուսանող հեռացվել է համալսարանից:

Վարչական տույժեր ստացած ուսանողներ

Կրթական աստիճաններ	2014-2015 ուստարվա I կիսամյակ	2014-2015 ուստարվա II կիսամյակ
	Նկատողություն	
Բակալավրիատ	5	3
Մագիստրատուրա	9	2
Ընդամենը	14	5
Խիստ նկատողություն		
Բակալավրիատ	3	2
Մագիստրատուրա	3	2
Ընդամենը	6	4

Համալսարանի ղեկավարատը, դեկանատը մշտապես մտահոգվում են ուսանողների սոցիալական խնդիրներով, և ջանքեր գործադրում նրանց համար հովանավորներ փնտրելու ուղղությամբ:

Այժմ տնտեսագիտական ֆակուլտետի 48 ուսանող օգտվում է տարբեր կրթաթոշակներից:

Տնտեսագիտական ֆակուլտետի կրթաթոշակառուները

Հովանավոր կազմակերպությունը	Ուսանողների թիվը
Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	23
«Վիվա-Սել. MTS» ընկերություն	10
«Օրանժ-Հայաստան» հիմնադրամ	6
Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	5
Թրփանձեան ընտանեկան հիմնադրամ	2
«Ամբոր» ՀԿ	2
Ընդամենը	48

Հասարակական ակտիվություն և միջոցառումներ

Բուհական կյանքում կարևորվում է ուսանողների հասարակական ակտիվությունը, որը ապագա մասնագետների քաղաքացիական հատկանիշների ձևավորման հիմքն է: Ելնելով նշվածից, տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատը ուսանողական խորհուրդը, տնտեսագետների ակումբը և ՈՒԳԸ-ն աշխատանքներ են կատարում ուսանողների հասարակական ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ: Ուսանողական խորհրդի նախագահը /Շողիկ Վիրաբյան/ և ՈՒԳԸ նախագահը /Գոհար Դադոյան/ շարունակում են աշխատանքը, իսկ այս տարի տնտեսագետների ակումբի նախագահ ընտրվեց Լևոն Արզումանյանը:

Ուսանողների շրջանում կազմակերպվում են երիտասարդությանը հետաքրքրող տարբեր թեմաներով քննարկումներ, բանավեճեր:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում անցկացվել են դաստիարակչական բնույթի բազմազան միջոցառումներ: Մեծ խորհուրդ ունի

հատկապես ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի կիսանդրու առջև առաջին կուրսեցիներին ստուգման գրքույկների հանդիսավոր հանձնումը:

Հիշարժան են նաև հետևյալ միջոցառումները. ֆակուլտետի դեկանատի, ուսխորհրդի, տնտեսագետների ակումբի համատեղ ջանքերով կազմակերպվել է սեմինար-քննարկում՝ նվիրված Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հեռանկարներին՝ տնտեսագիտության դոկտոր Աշոտ Թավադյանի մասնակցությամբ:

Հայաստանի գործարարների հանրապետական միության /ՀԳՀՄ/ նախագահ Գագիկ Մակարյանը: ԳՊՀ-ում վարպետության դաս վարեց ուսանողության համար: Նա ուսանողներին ներկայացրեց ՀԳՀՄ հիմնադրման պատմությունը, որդեգրած առաքելությունը, գործունեության հիմնական ուղղությունները և ԳՊՀ-ի հետ համագործակցության ոլորտները: ԳՊՀ-ի և ՀԳՀՄ-ի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր: Այնուհետև ՀԳՀՄ Գործարարության դպրոցի կողմից ԳՊՀ-ում տեղի ունեցավ «Կարիերայի պլանավորման ճանապահին» թեմայով վերապատրաստում, ինչի արդյունքում 20 ուսանող ստացավ վկայագիր:

Տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ անցկացվեց բաց-դաս՝ նվիրված նարեկագիտությանը: Հանդիպմանը ներկա էր Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը: Բաց դասը վարում էր ԳՊՀ գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Նորայր Ղազարյանը: Հնչեցին պոեմի հատվածների ձայնագրություններ, ծավալվեց հետաքրքիր հարց ու պատասխան:

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի առաջին կուրսի ուսանողները՝ դեկանատի աջակցությամբ, կազմակերպել էին հուշ-ցերեկույթ՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ:

Առաջին կուրսեցիները պատմական հակիրճ ակնարկով ներկայացրին 1880-1925-ական թվականների դեպքերը, անդրադարձան Օսմանյան Թուրքիայի վարած հայատյաց քաղաքականությանը, խոնարհվեցին հայոց անմեղ նահատակների հիշատակի առջև:

Ս. թ. մարտի 3-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 5 ուսանողներ մասնակցեցին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում կազմակերպված միջբուհական ուսանողական գիտաժողովին: Գիտաժողովը կրում էր «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության արդի հիմնախնդիրները» խորագիրը և նվիրված էր Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրվան: Գիտաժողովին մասնակցության հայտ ներկայացրած ԳՊՀ ուսանողները, լիագունար նիստից հետո ոլորտում առկա խնդիրները քննարկեցին «Կառավարում և տնտեսագիտություն», «Տեխնոլոգիաներ» և «Գիտամեթոդական հիմնախնդիրներ» խորագրերով ենթաբաժանումներում:

Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի նախաձեռնությամբ բուհի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողները մեկօրյա ուսումնական պրակտիկաներ անցկացրին ՀՀ Կենտրոնական բանկի այցելուների սրահում, «Կոկա-Կոլա», «Քանաքեռի կարի արտադրամաս» ընկերություններում:

Այնուհետև այցելեցին Բյուրականի աստղադիտարան, եղան Վիկտոր Համբարձումյանի անվան տուն-թանգարանում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետը ձեռնամուխ է եղել մասնակցելու Եվրամիության «Հորիզոն-2020» ծրագրին՝ «Ինովացիոն բիզնես ինկուբատոր» առաջարկով, որը համակարգում է Ֆլորենցիայի համալսարանը:

Ելնելով անցյալ ուսումնական տարվա ձեռքբերումներից, տնտեսագիտական ֆակուլտետը շարունակելու է աշխատանքները ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացման և ինտենսիվացման ուղիով:

ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2015-2016 ՈՒՍԱՐԿԱ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

1. Առաջնահերթ համարել կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնառությանը նպաստող պայմանների ապահովումը, ինչպես նաև սովորողներին մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետության բարձր ցուցանիշի ձեռքբերումը:
2. Իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային վերանայում և հարստացում՝ վերջիններս համապատասխանեցնելով արդի միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին:
3. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և փորձաքննության իրականացման գործընթացներում գործատու կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովում:
4. Ձարգացնել պրոֆեսորադասախոսական կազմի ներուժը՝ այն համապատասխանեցնելով արդի պահանջներին:
5. Որակի և արդյունավետության ապահովման միջոցառումները բխեցնել աշխատաշուկայի պահանջներից, ուսուցման գործընթացը կազմակերպել՝ կարևորելով տեսական իմացությունից զատ ուսանողներին գործնական գիտելիքներով զինելը:
6. Ապահովել որակի գնահատման գործընթացների թափանցիկությունը և ընթացիկ արդյունքների հրապարակայնությունը:
7. Մասնագիտական առաջընթացի ցուցանիշների հաշվառումը և համակողմանի վերլուծությունը համարել ամբիոնների աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը՝ հիմք ընդունելով նորագույն տեսությունն ու փորձը:
8. Պարբերաբար գնահատել ֆակուլտետի զարգացման հայեցակարգի իրականացման ընթացքը, կազմակերպել պարբերական մշտադիտարկում: Հայեցակարգի կարճաժամկետ ծրագրերը ճկուն փոփոխությունների ենթարկել՝ ելնելով ժամանակի առաջադրած պահանջներից:
9. Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել այնպես, որ ֆակուլտետի բաժինները հարմարունակ լինեն միջավայրի փոփոխություններին: Արագ և համարժեք արձագանք են ուսանողներին լիարժեք կարիերայի նախապատրաստելու արդիական պահանջներին:
10. Տնտեսագիտական ֆակուլտետի վերջին տարիների հայեցակարգերում պահանջ է առաջադրվել՝ ապահովել միջազգային ծրագրերում ուսանողների մասնակցության աճ: Այդ նպատակով պետք է բարձրացնել ուսանողների տեղեկացվածությունը, նպատակամղումը, խրախուսել օտար լեզվի իմացությունը:

11. Ապահովել դասախոսների և ուսանողների արդյունավետ համագործակցությունը, ամրապնդել անկաշկանդ բանավեճի հնարավորություններ դասախոսությունների ընթացքում, ուսանողներին ակտիվորեն ընդգրկել փոփոխությունների և որակի բարձրացման գործընթացներում:
12. Դասավանդման որակի և արդյունավետության բարելավման նպատակով կիրառել առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմներ: Նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և կրթական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին:
13. Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման տարեկան մշտադիտարկման գործառույթների ակտիվացում ֆակուլտետում:
14. Բարձրացնել ֆակուլտետի ամբիոնների ուսումնագիտական գործունեության որակը, զարգացնել միջամբիոնային համագործակցությունը:
15. Ջարգացնել ուսանողների ինքնուրույնությունը, ընդլայնել նրանց մասնակցությունը ֆակուլտետի կառավարմանը:
16. Խթանել ուսանողական գիտական աշխատանքը, կազմակերպել տարաբնույթ գիտաժողովներ, սեմինարներ: Ստուգել համացանցային ուսանողական տիրույթներբեռնված դասախոսությունների որակը:
17. Վերանայել ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագրերը և ուղեցույցերը այն նպատակով, որ պրակտիկաները դառնան գործնական գիտելիքների ու մասնագիտական կարողությունների ձեռքբերման դպրոց, այդ ընթացքում սերտ կապ հաստատել գործատու կազմակերպությունների և ուսանողների միջև: Կնքել պայմանագրեր նոր կազմակերպությունների հետ, որտեղ աշխատանքներն առավել ժամանակակից են և պրակտիկաներին ցույց տրվող աջակցությունը՝ առավել հիմնավոր:
18. Ելնելով կրթական վերջնարդյունքների ձևավորումն ու կայացումը շուկայական պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից, կարիք է զգացվում վերափոխելու ֆակուլտետի մեթոդխորհրդի աշխատանքները: Մեթոդխորհուրդը պետք է առարկայական ծրագրերում փոփոխություն մտցնի՝ հաշվի առնելով մասնագիտացումների համար առկա բոլոր նորությունները թե՛ տեսական, և թե՛ պրակտիկ առումներով:
19. Տնտեսագիտական ֆակուլտետում հայոց լեզվի դասավանդման որակը բարձրացնել, ուշադրության կենտրոնում պահել տնտեսագիտական եզրույթների հայկական համարժեքների ուսուցումը, միաժամանակ այն նպատակամղել գրագետ լեզվամտածողության ձևավորմանը, ազգային արժեքների հանդեպ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը:
20. Հետևողականորեն բարելավել օտար լեզուների ուսուցումը: Այն նպատակամղել մասնագիտական տարբեր օտարալեզու աղբյուրներից օգտվելու հնարավորությունների ընդլայնմանը, տնտեսագիտական միջազգային տերմինների յուրացմանը:
21. Ժամանակակից պայմաններում տնտեսագիտական կրթությունը պետք է լինի բաց, որը նշանակում է ամբողջովին հաշվի առնել աշխատաշուկայի պահանջները: «Համալսարան-ուսանող-գործարար համայնք» կապերը պետք է լինեն տևական և սերտ՝ հօգուտ կրթության բնագավառում գործատուների պահանջների իրականացման:

22. Մարդասիրական արժեքների հանդեպ հարգանքի մթնոլորտի ձևավորում, ուսանողների շրջանում հանդուրժողականության, բարեվարքության սերմանման համար պայմանների ստեղծում և հոգևոր-մշակութային դաստիարակություն:

Ս. Գ. Ամիրխանյան՝

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՉՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաչրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	24	4	3	70.8
2-րդ	26	-	5	84.6
3-րդ	35	11	14	45.7
4-րդ	4	1	2	50.0
Հաշվ. հաշվառում				
1-ին	4	1	2	75.0
2-րդ	4	-	2	50.0
3-րդ	11	-	7	81.8
Ձեռնարկ. տնտ. և կառ.				
1-ին	7	-	3	100
2-րդ	11	2	8	81.8
3-րդ	6	-	4	83.3
Ընդամենը	132	19	45	69.7
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	14	-	5	78.6
2-րդ	20	-	11	75.0
Հաշվ. հաշվառում				
1-ին	7	-	3	85.7
2-րդ	7	-	3	100
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	4	-	1	75.0
2-րդ	4	-	3	75.0
Ընդամենը	56	-	27	80.4

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	24	-	4	87.5
2-րդ	25	-	5	80.0
3-րդ	33	2	14	60.6
Հաշվ. հաշվառում				
1-ին	4	-	-	100
3-րդ	11	-	7	100
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	7	-	-	100
2-րդ	11	1	5	81.8
3-րդ	6	-	4	100
Ընդամենը	121	3	39	81.0
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	12	1	5	50.0
Հաշվ. հաշվառում				
1-ին	7	-	5	100
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	4	-	3	75.0
Ընդամենը	23	1	13	70.0

2014/2015 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱՎԿԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	5	1	44	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը` 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ` Զաքոյան Հրաչյա Սամվելի,
 տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հերզոյան Մարիամ Նորիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Մովսեսյան Դավիթ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ
3. Խաչատրյան Գայանե Արտիկի - տնտեսագիտության թեկնածու
4. Կարապետյան Վարազդատ Ազատի - տնտեսագիտության թեկնածու
5. Մուրադյան Գուրգեն Գևորգի - ասիստենտ
6. Շահինյան Վարդուհի Էդիկի - ասիստենտ
7. Բազոյան Սոնա Սահակի - ասիստենտ
8. Հովեյան Աստղիկ Գագիկի - դասախոս
9. Քալոյան Սամվել Խաչիկի - դասախոս
10. Ավետիսյան Աստղիկ Սիմոնի - դասախոս
11. Թադևոսյան Նարինե Հակոբի - դասախոս
12. Ասատրյան Ռուզաննա Կարապետի - լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Բայադյան Աշոտ Հակոբի- տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. Սահակյան Արմեն Կոլյայի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր
3. Հարությունյան Հարություն Սարգսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. Խաչատրյան Հակոբ Հայկի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
5. Նալչաջյան Վահրամ Թորգոմի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. Դավթյան Գագիկ Հայկարամի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
7. Բաղդասարյան Արեգ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
8. Մարդոյան Աշոտ Վարդանի- տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
9. Սերգոյան Գեղամ Պարույրի - դասախոս
10. Կիրակոսյան Էդգար Սամվելի - դասախոս
11. Գզարյան Հարություն Վաղարշակի - դասախոս

ԱՍԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ա) Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունները ՀՀ-ում:
- բ) Աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ մարզերում:
- գ) Տեղական և տարածքային տնտեսական զարգացման հիմնախնդիրներ

ՀՐԱՏԱՐՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսական ձեռնարկ	Ռեսուրսամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	2	1	35	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Բայադյան Ա. Հ., Մարկոսյան Հ. Ա.** Պետական պարտքի կառավարման նպատակները և դրա կարգավորման հիմնախնդիրները //ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.տնտ. ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 1, 2014, էջ 45-50:
2. **Բայադյան Ա. Հ., Հովհաննիսյան Լ. Ե.** Հայաստանի գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման հետագա ապահովման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները //ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.տնտ. ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 1, 2014, էջ 127-132:
3. **Բայադյան Ա. Հ., Օհանյան Տ. Ա.** Կլաստերային քաղաքականության միջազգային փորձը և դրա ներդրման հնարավորությունները ՀՀ-ում //ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.տնտ. ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 1, 2014, էջ132-137:
4. **Բայադյան Ա. Հ., Ամիրխանյան Ս. Գ.** ՀՀ պետական ծախսային քաղաքականությունը որպես ֆինանսական կայունության ապահովման հիմնական ուղղություն //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
5. **Բայադյան Ա. Հ.** Տնտեսագիտական բառարան //ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտ. ինստիտուտ, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2014, 527 էջ:
6. **Հերզոյան Մ. Ն., Ղուրշուդյան Լ. Ս.** Բանկային ռիսկերի կառավարման առանձնահատկությունները «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ» առևտրային բանկի օրինակով // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 1 (16), 2014, էջ 341-355:
7. **Հերզոյան Մ. Ն., Աբրահամյան Շ. Ս.** Պետական բյուջեի եկամուտների համալրման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
8. **Նալչաջյան Վ. Թ.** Բազմությունների տեսության ստեղծման պատմությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 1 (16), 2014, էջ 404-408:

9. **Քալոյան Ս. Խ.** Ժամանակակից բանկային ծառայությունները // ԳՊՅ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 1(16), 2014, էջ 384-388:
10. **Գզրարյան Յ. Վ.** Էլեկտրոնային բիզնեսը որպես տնտեսավարման և կառավարման ժամանակակից ձև // ԳՊՅ Գիտական հոդվածների ժողովածու, N 1(16), , 2014թ., էջ 409-416:
11. **Խաչատրյան Գ. Ա.** Հարկային բեռի տնտեսական բովանդակությունը և տեսական մոտեցումները // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
12. **Խաչատրյան Գ. Ա.** Համայնքային բյուջեների ֆինանսական ապահովվածության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 2 (17), 2015:
13. **Սահակյան Ա. Կ., Մկրտիչյան Ա. Ե., Շահնազարյան Գ. Ն., Վարտիկյան Ա. Ռ., Վերմիշյան Յ. Ռ.** Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում // Երևան: ԵՊՀ հրատ., 2014, 198 էջ:
14. **Սահակյան Ա. Կ., Բախշյան Ա.** Տնտեսական սոցիլոգիա, // Ուսումնական ձեռնարկ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար, Երևան: Գիտություն հրատ., 2014, 264 էջ:
15. **Սահակյան Ա. Կ.** Երիտասարդ մասնագետների հարմարվողականությունը ժամանակակից ռուսական կազմակերպություններում: Կարիերայի ուղղորդման հիմնախնդիրներն ու զարգացման միտումները // Միջազգային գիտական կոնֆերանսի հոդվածների ժողովածու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևան: «Զանգակ» հրատ., 2014:
16. **Բաղդասարյան Ա. Մ.** ճգնաժամային երևույթներն արժեթղթերի համաշխարհային շուկայում// Հանրային կառավարում գիտական հանդես, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, N 1-2/2014, Երևան, 2014, էջ 162-172:
17. **Բաղդասարյան Ա. Մ.** ՀՀ արժեթղթերի շուկայի զարգացման հայեցակարգային մոտեցումները//Բանբեր Երևանի համալսարանի գիտական հանդես. Հասարակական գիտություններ. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, N1(142), Երևան, 2014, էջ 46-53:
18. **Մարդոյան Ա. Վ., Մարկոսյան Ա.** Շրջակա միջավայրի պահպանության գործընթացում պետական կառավարման անարդյունավետության դրսևորումները //ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում կազմակերպված «Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, 2014, էջ 167-174:
19. **Մարդոյան Ա. Վ, Մարկոսյան Ա.** ՀՀ հանքարդունաբերության ներկա վիճակը և առկա զարգացումները //«Եվրոպական Ակադեմիա» գիտական տեղեկագիր, 2014, էջ 143-154:
20. **Մարդոյան Ա. Վ.** Հանքարդյունաբերության օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետությունում // Եվրասիա միջազգային համալսարանում կազմակերպված «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտաժողովի նյութերի ժողովածու, 2014, էջ 49-57:
21. **Մարդոյան Ա. Վ.** ՀՀ ընդերքօգտագործման բնապահպանական հիմնախնդիրները //«Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրը» խորագրով հանրապետական գիտաժողովի նյութեր, 2015, էջ 268-276:

22. **Саакян А. К., Петросян Г. А., Покровская Н. Н., Бахсян А. Ж., Сафарян А. Ю., Аветисян Н. Е.** Социология управления // Учебное пособие, Ер. Эдит Принт, 2014, էջ 360:
23. **Саакян А. К.** Геноцид армян и холокост // Չախափստութեան հարցեր հանդես 1(4), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015:
24. **Саакян А. К.** Трудовая миграция и политика направленная на развитие постсоветских стран // Сборник материалов международной конференции, Ер.: Республиканский союз работодателей Армении, 2014:
25. **Саакян А. К, Сафарян А. Ю., Покровская Н. Н., Петросян. Г. А.** Социологическое исследование трудового поведения в постиндустриальном обществе: методологические и теоретико-концептуальные подходы // Научный журнал ISSN 2219-6242, Социология и право, N 3 (25), 2014:
26. **Саакян А. К,** Современные проблемы международной экономики // Сборник материалов международного научно - методического семинара, Санкт –Петербург, Изд-во СПбГЭУ, 2014, էջ 161:
27. **Саакян А. К., Давтян С. С.** Антикризисное управление внутренними и внешними коммуникациями // Научный журнал «Кризисное управление и технологии» №9, Изд-во ВАРД ГРАТ, Ереван, 2015:
28. **Саакян А. К.** Правда и ложь о великом Сталине // Совместный сборник научных трудов между ЕГУ и СПбУУиЭ Современные глобальные проблемы социальных и гуманитарных наук СПб.: Изд-во СПбУУиЭ, 2015:
29. **Саакян. А. К** Ценности и социальные установки в экономическом поведении // Научно-методический журнал «Научная мысль», г.Череповец, Изд-во СПбГЭУ, 2015:
30. **Багдасарян А. М.** Развитие интеграционных процессов рынка ценных бумаг на постсоветском пространстве // Вестник Поволжского государственного университета сервиса, Серия Экономика, №1 (33), Тольятти, 2014, էջ 11-16:
31. **Багдасарян А. М.** Проблемы управления рисками депозитарных и расчетных систем рынка ценных бумаг в странах СНГ// Модернизация экономики и управления: II Международная научно-практическая конференция: Сборник научных статей, Северо-Кавказский федеральный университет, Ставрополь: Ставроплит, 2014, Часть 2., էջ 103-107:
32. **Багдасарян А. М.** Интеграционные возможности рынка ценных бумаг в странах постсоветского пространства // Экономический вестник донбасса, Научный журнал, Луганский национальный университет им. Тараса Шевченко, Институт экономики промышленности Национальной академии наук Украины, № 1(35), Луганск, 2014, էջ 56-62:
33. **Багдасарян А. М.** Перспективы интеграции рынка ценных бумаг в странах СНГ// Вестник Московского университета, Серия 6: Экономика, № 2, Москва, 2014, էջ 70-84:

34. **Мардоян А. В.** Законодательные реформы недропользования в Республике Армения // Проблемы экономики и менеджмента, Научно-практический журнал, N4 (44), 2015, էջ 3-6:
35. **Мардоян А. В.** Тенденции развития недропользования в Республике Армения // Проблемы экономики и менеджмента, Научно-практический журнал, N4 (44), 2015, էջ 46-50:
36. **Bayadyan A. H., Harutyunyan V. L.** Analysis of the dynamics and Structural changes in the Public Dept of RA and its Regulation methods// Annals of Agrarian Science, ISSN 1512-1887, vol. 12, N 1, 2014, էջ 95-99:
37. **Harutyunyan H. H, Amir Farhadian, Aliakbar Naji Meidani,** Analyzing the Relationship between the Indices of Identifying the Worn-out Textures and Indices of Urban Sustainable Development in the City of Mashhad// Jurnal of Urban Economics and Management, vol.2, N 5, Winter 2014, էջ 48-62:
38. **Խաչատրյան Ջ. Ջ., Բախտավորյան Ռ. Գ., Թելունց Ս. Ս.** EMPIRICAL ESTIMATION OF BEEF DEMAND IN THE REPUBLIC OF ARMENIA // Известия НАУА 3, 2014, էջ 106-109:
39. **Խաչատրյան Ջ. Ջ., Բախտավորյան Ռ. Գ., Թելունց Ս. Ս., Սարգսյան Գ. Լ.** CONSUMER WELFARE ANALYSIS OF GAS PRICE INCREASE IN THE REPUBLIC OF ARMENIA // Известия, НАУА, 2015, էջ 6:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ղուկոյան Հակոբ Սելսիկի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - ասիստենտ
3. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
4. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
5. Ղաջոյան Կարինե Համլետի - դասախոս
6. Բաղալյան Անի Սամվելի - լաբորանտ, դասախոս

ՀԱՍՍԵՂՈՂՆԵՐ

1. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Վալերի Հովհաննեսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. Մարկոսյան Սևակ Մեսրոպի - տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները:
- բ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդաբանության և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսական ձեռնարկ	Ռեսուրսամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	3	-	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ամիրխանյան Ս. Գ., Առաքելյան Վ. Հ. Մրցակցային ռազմավարության որոշումների ընտրության գործնաօժանդակ արտադրական ձեռնարկություններում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 1 (16), 2014, էջ 329:
2. Առաքելյան Վ. Հ., Այրումյան Ի. Գ., Մարտիրոսյան Հ. Ա. Մրցակցային ռազմավարության արդյունավետության գնահատման մոտեցումները կազմակերպություններում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 1(16), 2014, էջ 355:
3. Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա., Մարտիրոսյան Ռ. Մ. Նոր արտադրանքի մշակման և շուկայում առաջխաղացման ռազմավարության մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 1 (16), 2014, էջ 364:
4. Հակոբյան Ա. Ա. Հաշվապահական հաշվառման մի քանի հիմնահարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 1(16), 2014, էջ 374:
5. Խլղաթյան Ի. Ե., Ամիրխանյան Ս. Գ. Գլոբալացման ազդեցությունը միջազգային տնտեսական հարաբերությունների վրա // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 2(17), 2015:
6. Ամիրխանյան Ս. Գ., Թանգյան Ս. Գ. Բանկային համակարգի ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 2(17), 2015:
7. Առաքելյան Վ. Հ., Մկրտչյան Ա. Ֆ. Նորամուծական գործընթացի և ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատումը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 2 (17), 2015:
8. Առաքելյան Վ. Հ., Մկրտչյան Ա. Ֆ. Նորամուծական գործունեության վերլուծությունը ՀՀ տնտեսությունում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 2(17), 2015:
9. Առաքելյան Վ. Հ., Սիմոնյան Մ. Ժ. Նորամուծությունների կառավարումը բիզնեսում (Փորձ և հիմնախնդիրներ) // Երևան, Նահապետ հրատարակչություն, 2014, էջ 112:
10. Առաքելյան Վ. Հ., Ղուլոյան Հ. Ս., Գրիգորյան Կ. Ռ., Մարտիրոսյան Ռ. Մ. Որակի կառավարումը բիզնեսում (Փորձ և հիմնախնդիրներ) // Երևան, Նահապետ

հրատարակչություն, 2014, էջ 105:

11. Առաքելյան Վ. Ջ., Այրումյան Ի. Գ., Գևորգյան Ժ. Վ. Մարքեթինգային ռազմավարության վերլուծություն և գանահատում // Երևան, Նահապետ հրատարակչություն, 2014, էջ 152:

12. Амирханян С. Г. Проблемы и возможности объединения земель в Республике Армения // Современные глобальные проблемы социальных и гуманитарных наук, Совместный сборник научных трудов, Санкт-Петербург, 2015. էջ 75-78:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատասխանատու՝ Կուտուզյան Նելլի Ալբերտի,
 ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
 դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Պասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
030400	Պատմություն
020400	Աշխարհագրություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/
030500	Իրավագիտություն
081500	Հաշվապահական հաշվառում
020200	Կենսաբանություն
020800	Բնապահպանություն և բնօգտագործում
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
100100	Սերվիս
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ
021000	Դեղագործական քիմիա

Մասնագիտացումներ՝	
	Բանասիրության բակալավր
	Բանասիրության բակալավր
	Պատմության բակալավր
	Աշխարհագրության բակալավր
	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ
	Իրավագիտության բակալավր
	Ֆինանսների բակալավր
	Կենսաբանության բակալավր
	Բնապահպանության բակալավր
	Ճարտարագիտության բակալավր
	Սերվիսի բակալավր
	Դեղագործական քիմիայի բակալավր
	Քարտեզագրության բակալավր

Ուսանողների թիվը՝ 1050
 Շրջանավարտների թիվը՝ 208

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2015թ. ՌԻՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2016թ.
ՌԻՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2015թ. ուսումնական տարում Հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացը իրականացվել է՝ ըստ կրթության զարգացման պետական ծրագրի հիմնական դրույթների, բուհի զարգացման ռազմավարական ուղղությունների և ֆակուլտետի զարգացման առաջնահերթությունների:

Հաշվետու ուստարում ֆակուլտետում սովորող ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշը կազմում է 59,2 % (նախորդ ուստարում՝ 70,3%): Առաջադիմության անկումը մտահոգիչ է և նախանշում է ծրագրավորվող գործողությունների ուղղությունները:

2014թ. դիմորդների գործերի ընդունելությունը կազմակերպվեց 8 մասնագիտությունների գծով, քանի որ Աշխարհագրություն, Բնապահպանություն և բնօգտագործում, Ռուսաց լեզու և գրականություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ, Կենսաբանություն բաժիններում դիմորդներ չեղան: Այս հանգամանքը կապված է հանրապետությունում բնագիտական մասնագիտությունների նկատմամբ դիմորդների շրջանում հետաքրքրության նվազման հետ, որը անհրաժեշտ է շտկել տարբեր ուղղություններով հետևողական աշխատանքի շնորհիվ:

Ողջ ընթացքում կատարվել են աշխատանքներ ուսանողներին ակադեմիական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, կազմակերպվել են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություններ և անհատական աշխատանքներ՝ ինքնուրույն, կուրսային աշխատանքների կատարման նպատակով:

2015թ-ին ֆակուլտետն ավարտեցին 208 շրջանավարտ, որից վեցամյա կրթության համակարգում ուսումնառած՝ 5 և բակալավրիատի կրթական աստիճանով՝ 203 շրջանավարտ: Հաշվետու ուսումնական տարում Հեռակա ուսուցման ֆակուլտետն ավարտեցին Իրավագիտության և Հաշվապահական հաշվառման բաժինների առաջին շրջանավարտները, որոնցից բարձր առաջադիմություն ունեցողները ընդունվեցին մագիստրատուրայի համապատասխան բաժիններ:

Հաշվետու ուստարում ավելացել են ինչպես ֆինանսական աջակցություն ստացած ուսանողների թիվը, այնպես էլ ուսանողներին տրամադրվող ֆինանսավորման աղբյուրները: 2015թ. ուստարում թվով 100 /նախորդ ուսումնական տարում՝ 88/ ուսանողների ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն. ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 11 ուսանող, «ՎիվաՍել-ՄՍՍ» ընկերության միջոցներից, «Օրանժ.Հայաստան» հիմնադրամից, ԱՄՔՈՐ/Հայաստան բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման» ծրագրի միջոցներից, Թրփանճեան ընտանեկան և Ազեան հիմնադրամներից, «Ռոբերտ Ենգիբարյան» հիմնադրամից՝ 28 ուսանող, «Փարոս» համակարգում ընդգրկված սոցիալապես խիստ անապահով 22 ուսանողների՝ ըստ անապահովության միավորների, սահմանված չափով տրամադրվեց ֆինանսական

աջակցություն պետական բյուջեից, իսկ համալսարանի կողմից ուսման վարձերը գեղչվեցին՝ 39 /նախորդ ուստարում՝ 36 /ուսանողի համար:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ՀՀ ուսումնական այլ հաստատություններից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 10 ուսանող, երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմել և սահմանված կարգով ընդունվել է 18 ուսանող, քոլեջից հետո շարունակական կրթության հիմունքներով՝ 25 ուսանող, ԳՊՀ առկա ուսուցման համակարգից ֆակուլտետ է տեղափոխվել 23 ուսանող, ուսանողական իրավունքները վերականգնել են 56 ուսանող, Հեռակա ուսուցման ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 20 ուսանող, Հեռակա ուսուցման ֆակուլտետի տարբեր բաժիններ՝ 5 ուսանող, իսկ այլ բուհ տեղափոխվողներ չեն եղել:

Ուսանողների շրջանում կարևորելով բարեվարքության կանոնների պահպանումը՝ համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու, անհարգելի բացակայելու համար 579 ուսանող ստացել է նկատողություն, խիստ նկատողություն՝ 153 ուսանող: Դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով համալսարանից հեռացվել է 58 ուսանող, բուհից ազատվել՝ 16 ուսանող, իսկ համապատասխան հիմքով տրամադրված տարկետման ժամկետը լրանալու պատճառով՝ 7 ուսանող:

Ամբողջ ուստարվա ընթացքում հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսանողներին ուսումնամեթոդական աջակցության տրամադրման, ակադեմիական խորհրդատվության մատուցման, էլեկտրոնային ուսուցման համակարգից օգտվելու գործընթացում տեխնիկական և մեթոդական աջակցության ուղղությամբ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողները հաջողությամբ մասնակցում են նաև ակադեմիական շարժունության ծրագրերին՝ ուսումնառության որոշակի ժամանակահատված անցնելով եվրոպական գործընկեր տարբեր բուհերում: Նշված փաստը հաստատում է, որ հեռակա ուսուցման համակարգում ուսանողի ստացած կրեդիտները և ձեռքբերված ու գնահատված ուսումնառության վերջնարդյունքները ճանաչվել և ընդունվել են մեկ այլ հաստատության կողմից, բավարարել առաջարկվող ծրագրի պահանջներին:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսանողների աշխատավայրերի ճշգրտման համար, նրանց՝ հետագա զբաղվածության ուսումնասիրման նպատակով:

Մշտապես իրականացվում են անանուն հարցումներ ուսանողների շրջանում՝ ստացած կրթությունից, լրացուցիչ ծառայությունների որակից, կրթական միջավայրից նրանց բավարարվածության գնահատման, գոյություն ունեցող խնդիրների բացահայտման և դրանց վերացման ուղղությամբ աշխատանքների ծավալման ուղղությամբ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015 թվականի ուսումնական տարվա զարգացման հայեցակարգ

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի առաքելությունից ելնելով՝ 2015 թվականին նախանշվում են ֆակուլտետի զարգացման հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

1. 2015 թվականին երևանում կայացած Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների կրթության նախարարների գագաթնաժողովում ընդունված

- «Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի (ԿՓԿՀ)»-ի հիմնական դրույթներին համահունչ տեղայնացնել և կիրառել կրեդիտային համակարգի նոր մեթոդաբանությունը հեռակա ուսուցման համակարգում:
2. Շարունակել ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացման, կրթական ելքային արդյունքների վերանայման, ակնկալվող արդի մասնագիտական իրազեկությունների սահմանման, աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցման աշխատանքները՝ համադրելով համալսարանի առկա ուսուցման կրթական ծրագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մասնագիտությունների հաստատված նոր ցանկի հետ:
 3. Իրականացնել նախապատրաստական աշխատանքներ հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար ևս անփոփոխի ատեստավորման արդյունքում համաեվրոպական մոնիչի երկլեզու դիպլոմների հավելվածների տրամադրման ուղղությամբ:
 4. Մշտադիտարկել «E-learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի առարկայական տիրույթներում տեղակայված ուսումնական նյութերի առկայությունն ու բովանդակությունը:
 5. Աշխատանքներ ծավալել դասավանդման նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով:
 6. Շարունակել մանկավարժական կրթության որակի բարելավման, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի նորացման նպատակով ՀՀ-ում մանկավարժական կրթության բարեփոխումների ծրագրերին մասնակցությունը և մանկավարժի որակավորմամբ մասնագիտությունների կրթական ծրագրերի նորացման հետևողական աշխատանքները:
 7. Ապահովել ներառական կրթության անհրաժեշտ պայմաններ, կրթական վերջարդյունքներին հասնելու հնարավորություններ բոլոր սովորողների համար:
 8. Շարունակել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի կատարելագործումը, ապահովել գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:
 9. Կարևորել կրթության որակի ապահովման գործընթացում ուսանողների դերակատարումը, կատարելագործել հետադարձ կապի ստացման և արդյունքների մշակման գործընթացները:
 10. Մշակել նոր կառուցակարգեր ուսանողների կրթական կարիքներին արդյունավետ արձագանքելու համար, ամրապնդել գործարկվող հետադարձ կապի և սոցիալական երկխոսության մեխանիզմները, բարելավել որոշումների կայացման գործում ուսանողների մասնակցային կառուցակարգերը:
 11. Իրականացնել հետևողական աշխատանքներ նոր ընդունված ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, տնտեսական աշխատակազմի արագ ինտեգրման ուղղությամբ՝ ներառյալ բուհում ընդունված բարեվարքության սկզբունքները, ակադեմիական ազնվության վարքականոնները:
 12. Աշխատանքներ ծավալել ֆակուլտետում ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման, պատշաճ գործավարության, թափանցիկ

հաշվետվողականության ուղղությամբ՝ նպաստելով բուհի ենթակառուցվածքային հավատարմագրման աշխատանքներին:

Ն. Ա. Կուտուզյան՝

ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

**ԳՎՎՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2014-2015 ՈՒՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2015-2016 ՈՒՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանում 2014-2015 ուսումնական տարում շարունակվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանը և բարելավմանը ուղղված աշխատանքները:

Հաշվետու տարում Ակադեմիական քաղաքականության վարչությունն /այսուհետ՝ ԱՔՎ/ իր աշխատանքները կազմակերպել է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- բակալավրիատում ուսումնական գործընթացի համակարգում,
- մագիստրատուրայում կրթական ծրագրերի իրականացում,
- կրթության որակի ապահովում:

Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

2014-2015 ուսումնական տարին մեկնարկել է ԱՔՎ-ի և դեկանատների, ֆակուլտետային որակի ապահովման բաժինների, ամբիոնների վարիչների և ամբիոնային համակազմի հետ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի գնահատմանն ու բարելավմանը միտված աշխատանքներով: Աշխատանքները հիմնականում ուղղված են եղել կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մշակմանը, որոնցում ներկայացված են կրթական ծրագրերի և դրանց բաղկացուցիչ դասընթացների նպատակները, դասավանդման գնահատման կիրառվող մեթոդներն ու կառուցակարգերը:

Միաժամանակ, լրամշակվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» ձեռնարկները, որոնք տեղադրված են ԳՊՀ պաշտոնական կայքէջում:

Շարունակվել են աշխատանքները ուսումնական գործընթացի պլանավորման, իրականացման, կառավարման և վերահսկման ուղղություններով: Ուսանողների թվաքանակի հետ կապված՝ դեկանների և փոխդեկանների հետ միասին կատարվել են ուսանող-դասախոս հարաբերակցության ճշգրտման և օպտիմալացման աշխատանքներ, ինչի արդյունքում ԱՔՎ-ի կողմից իրականացվել է՝

- համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատածավալների հաշվարկ և օպտիմալացում,
- հստակեցվել են դրույքով և ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները,
- ուսումնական անխաթար գործընթաց ապահովելու նպատակով վերանայվել են դասացուցակները և դրանց համապատասխանությունը լսարանային ֆոնդին:

Հաշվետու ուստարում վերանայվել և շարունակվել են ուսանողների և դասախոսների տվյալների բազաների ստեղծման և լրացման աշխատանքները՝ օգտագործելով նաև «Կրթական ծրագրի կենտրոնի» և «Synergy Ինթերնեյշնլ Սիսթեմզի» կողմից մշակված մասնագիտական կրթության կառավարման «Թեմիս» տեղեկատվական համակարգի հնարավորությունները:

Շարունակական կրթության ապահովման նպատակով ԱԲՎ-ն հաշվետու տարում շարունակել է միջին մասնագիտական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների ԳՊՀ ընդունելության կազմակերպման գործընթացը՝ ապահովելով փաստաթղթերի ընդունումը, առարկայական տարբերությունների հանձման կազմակերպումը և վերահսկումը:

ԱԲՎ-ի կողմից համակարգվել են նաև երկրորդ մասնագիտություն ստացողների փաստաթղթերի ընդունման և առաջացած առարկայական տարբերությունների հանձման, ինչպես նաև ներբուհական տեղափոխությունների կազմակերպման և վերահսկման գործընթացները:

ԱԲՎ-ի կողմից նախապատրաստվել և հաշվառվել են ԳՊՀ ուսանողների շարժի՝ հեռացման, ազատման, տարկետման, վերականգման, տեղափոխությունների փաստաթղթային հիմքերը:

2014-2015 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ ուսանողների հետևյալ շարժը.

1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	15
2	ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել	0
3	Երկրորդ մասնագիտություն ստացողներ	19
4	Քուլեջից ԳՊՀ են ընդունվել/ուսուցիչներ	25/9
5	Ներբուհական տեղափոխություններ	66
	➤ Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	25
	➤ Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	20
	➤ Ներֆակուլտետային տեղափոխություններ	21
6	Տարկետում են ստացել	55
	➤ առողջական վիճակի պատճառով	5
	➤ զինծառայության մեկնելու հիմքով	50
7	ԳՊՀ-ից հեռացվել են	153
8	ԳՊՀ-ից ազատվել են	29
9	Վերականգնվել են ԳՊՀ՝	123
	➤ զորացումից հետո	59
	➤ հեռացումից հետո	23
	➤ տարկետումից հետո	10
	➤ ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրվածներ	31
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐՄ		494

Նախորդ՝ 2013-2014 ուսումնական տարվա ընդհանուր շարժի 622-ի դիմաց հաշվետու տարում արձանագրվել է 494-ը, ինչը, սակայն նվազել է հեռացվածների և ԳՊՀ-ից ազատվածների թվի նվազման հաշվին՝ 2013-2014 թ. հեռացումների 207-ի և

ազատումների 28-ի դիմաց հաշվետու տարում գրանցվել է հեռացումների՝ 153 և ազատումների 29 դեպք:

Շարժի մի մասը կապված է ԳՊՀ ուսանողների և դասախոսների կողմից փոխանակման ծրագրերի շրջանակներում արտերկյա տարբեր բուհերում ուսումնառության ու վերապատրաստումների հետ: Հաշվետու տարում արտերկրյա տարբեր բուհերում վերապատրաստվել են ԳՊՀ 3 դասախոսներ և սովորել են 11 ուսանողներ, իսկ 3 օտարերկրացի ուսանողներ իրենց ուսումնառության մի մասը անցել են ԳՊՀ-ում:

2014-2015 ուսումնական տարում ընդունելության արդյունքներով Գավառի պետական համալսարանի առաջին կուրսեր են ընդունվել՝ առկա բակալավրիատում 119 սովորող, որից 102-ը՝ հրամանագրված, 17-ը՝ ժամանակավոր կցագրված, հեռակա բակալավրիատում՝ 168 սովորող, որից 124-ը՝ հրամանագրված, 44-ը՝ ժամանակավոր կցագրված:

Ուսումնական տարվա սկզբում շարունակվել է մագիստրատուրայում բոլոր մասնագիտությունների գծով ընդունելությունը, ինչի արդյունքում 2014-2015 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի մագիստրատուրա են ընդունվել 95 ուսանող, նախորդ տարվա 116-ի փոխարեն:

Տարբեր կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակում ԱԲՎ-ի կողմից համակարգվել և վերահսկվել են ԳՊՀ ուսանողների պրակտիկաների անցկացման և գնահատման գործընթացները՝ հաշվի առնելով գործընկեր կազմակերպությունների կարծիքներն ու առաջարկները:

2014-2015 ուսումնական տարում պրակտիկաներին մասնակցած ուսանողներ.

Առկա բակալավրիատ	Ուսումնական	90
	Մանկավարժական	20
	Արտադրական	39
	Նախաավարտական	0
Մագիստրատուրա	Գիտամանկավարժական	93
	Գիտահետազոտական	93
Հեռակա բակալավրիատ	Մանկավարժական	103
	Արտադրական	35
	Նախաավարտական	80
Ընդամենը		553

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու տարում նույնպես բուհը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողներին ուսման վարձի մասնակի փոխհատուցման» կարգի համաձայն՝ կատարել է ուսման վարձավճարների զեղչեր սոցիալական

անապահովվածության տարբեր աստիճաններում գտնվող և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար:

Գավառի պետական համալսարանը համագործակցում է տարբեր անհատների, կազմակերպությունների և հիմնադրամների հետ, ինչի արդյունքում հաշվետու տարում նույնպես այդ անհատների և կազմակերպությունների կողմից մասնակի կամ լրիվ փոխհատուցվել են ԳՊՀ ուսանողների ուսման վարձավճարները:

2014-2015 ուսումնական տարում անվանական կրթաթոշակների ստացած ուսանողների թիվը հետևյալն է.

Հ/Հ	Չովանավոր կազմակերպություն	ուսանողների թիվը
1.	«Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	70
2.	Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ	7
3.	Չայաստանի երիտասարդական հիմնադրամ	23
4.	«Միավորված Մեթոդիստների Օգնության Կոմիտե /ԱՄՔՈՐ/» հասարակական կազմակերպություն	22
5.	«Orange» հիմնադրամ	10
6.	«ՎիվաՍել-ՄՏՍ» կրթական ֆոնդ	41
7.	«Չայ համայնքը՝ հայ ուսանողությանը» հիմնադրամ	7
8.	Չայ կրթական հիմնարկություն	10
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		190

2013-2014 ուսումնական տարում այս թիվը եղել է 163, իսկ 2014-15 ուսումնական տարում 27 ուսանողով ավելացել է կրթաթոշակառուների թիվը:

Չաշվետու ուստարում իրականացվել և ապահովվել են ԳՊՀ-ում ամփոփիչ ատեստավորման քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացները՝ արտաքին շահառուների և գործատուների մասնակցությամբ: Քննական գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով քննական լսարաններում տեղադրվել են ձայնագրող և տեսագրող սարքեր՝ ապահովելով օբյեկտիվություն, թափանցիկություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ բողոքարկման խնդրի ճիշտ լուծում: Վերջնական ավարտական արդյունքները ամփոփվել են և ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների հետ ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարություն՝ համաձայն սահմանված կարգի:

2014-2015 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 309 դիպլոմ: ԱՔՎ մասնագետները դեկանատների աշխատակիցների հետ միասին ստուգել են շրջանավարտների դիպլոմների հավելվածների գնահատականները՝ այդ կերպ խուսափելով թյուրիմացություններից և վրիպումներից:

2014-2015 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը.

Ֆակուլտետ		ոչգերազանցության	գերազանցության	ընդամենը
Բանասիրական	բակալավր/ դիպլոմավորված	0/1	-	1
	մագիստրոս	7	20	27
Բնագիտական	բակալավր	-	-	-
	մագիստրոս	4	7	11
Հումանիտար մասնագիտությունների	բակալավր	1	-	1
	մագիստրոս	13	12	25
Տնտեսագիտական	բակալավր	4	2	6
	մագիստրոս	7	23	30
ԸՆԴԱՄԵՆԸ	բակալավր	6	2	8
	մագիստրոս	31	62	93
Հեռակա	բակալավր	198	5	208
	դիպլ. մասն.	5	-	
ԸՆԴԱՄԵՆԸ		240	69	309

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով ամենամյա վիճակագրական հաշվետվությունները:

Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ՀՀ ԿԳՆ են ներկայացվել կիսամյակային քննաշրջանների հաշվետվությունները և տարեվերջյան ամփոփ հաշվետվությունը տեղափոխությունների վերաբերյալ՝ ըստ սահմանված ձևաչափի:

ԱԲՎ-ն սերտորեն համագործակցում է դեկանատների, ամբիոնների, արխիվի և ԳՊՀ նյութ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

ԱԲՎ-ն մասնակցել է ամբիոնների կողմից անցկացված դասալսումներին և քննարկումներին, որոնք հաշվետու տարում անցկացվել են ամբիոնների վարիչների, փորձառու դասախոսների կողմից:

ԱԲՎ-ն վերանայել է նաև ամբիոնների փաստաթղթային «տնտեսությունը»՝ աջակցելով անհրաժեշտ խորհրդատվությամբ, և իրականացրել է ամբիոններում առկա անհատական, կուրսային, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի արխիվացման գործընթացը՝ համագործակցելով ամբիոնների և ԳՊՀ արխիվի հետ:

Համագործակցություն.

Ինչպես հանրապետության բոլոր բուհերը, այնպես էլ Գավառի պետական համալսարանը կանգնած է դիմորդների հավաքագրման դժվարությունների առջև: Այդ պատճառով համալսարանի համար կարևոր են բուհ-դպրոց փոխադարձ կապերի ամրապնդման խնդիրները: Այդ նպատակով ԱԲՎ-ն համալսարանի այլ

ստորաբաժանումների հետ համագործակցելով՝ հաշվետու տարում մշակել և իրականացրել է աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող մի շարք միջոցառումներ.

- ԳՊՀ ակտիվ և եվրոպական փոխանակման ծրագրում ներգրավված ուսանողների ու դասախոսների այցելություններ դպրոցներ՝ նրանց տրամադրելով դիմորդի ուղեցույցեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական պարբերականներ: Աջակցություն է ցուցաբերվել ուսուցիչներին՝ մասնագիտական և ուսումնամեթոդական խորհրդատվություններով,
- Անցկացվել են հարցումներ, որոնց մասնակցել են մարզի 12 դպրոցների շուրջ 233 աշակերտներ,
- Համագործակցության շրջանակներում ավագ դպրոցների և ուսուցիչների ճանաչողական այցերի կազմակերպում համալսարան՝ ծանոթանալու համալսարանի թանգարանին, լաբորատորիաներին (7 ավագ դպրոցների աշակերտները), ամբիոններին, մասնագիտություններին,
- Հաշվետու տարում համագործակցության ակտիվացման և ամրապնդման նպատակով ԱԲՎ-ի, ԳՊՀ հանրության և լրատվության բաժնի և ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվեց «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ մրցույթը փուլային տարբերակով, որին մասնակցեցին ոչ միայն ավագ դպրոցների աշակերտները, այլ նաև քոլեջների ուսանողները (5 քոլեջների թիմեր):

2014-2015 ուսումնական տարում համագործակցության հուշագրեր են կնքվել ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների և գիտահետազոտական հաստատությունների հետ.

- «Անելիք բանկ» ՓԲԸ,
- «Արդշինբանկ» ՓԲԸ,
- Հայաստանի գործատուների հանրապետական միություն,
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ,
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն:

Որակի ապահովում.

ԱԲՎ-ի կազմում գործող որակի ապահովման բաժնի աշխատանքները ուղղված են ԳՊՀ-ում կրթության որակի ապահովմանն ու շարունակական բարելավմանը: Այդ գործընթացն իրականացնող կառուցակարգերից են այն կանոնակարգերն ու ընթացակարգերը, որոնք ուղղակիորեն առնչվում են կրթական ծրագրերի նպատակներին ու վերջնարդյուքներին, մասնագիտական կրթական ծրագրերի գնահատմանն ու բարելավմանը, դասատվության կազմակերպման և ուսանողների գնահատման մեթոդներին, դասախոսների մասնագիտական որակների ապահովմանն ու անընդհատ բարելավմանը, ուսումնառության գործընթացից, ստացած գիտելիքներից, կրթական միջավայրից ուսանողների, շրջանավարտների և դասախոսների բավարարվածության աստիճանին, ուսանողների և այլ շահակիցների հետադարձ կապի ապահովմանը և այլն:

Այդ իմաստով 2014-2015 ուսումնական տարին կարևորվում է նրանով, որ վերանայվեց այն կանոնակարգային հենքը, որը կոչված է նպաստելու

ուսումնառության որակին և արդյունքում մշակվեց ու ընդունվեց ԳՊՀ որակի ապահովման ձեռնարկը:

ԱՔՎ որակի ապահովման բաժինը հաշվետու ուստարում պարբերաբար իրականացրել է հարցումներ ուսանողների, շրջանավարտների և դասախոսների շրջանում: Հարցումները կատարվել են թղթային և էլեկտրոնային եղանակներով՝ բովանդակային առումով հարցերը ենթարկելով որոշակի փոփոխությունների և լրամշակումների: Հարցումներին մասնակցել են թե՛ ուսանողները, թե՛ շրջանավարտները, ինչպես նաև ԳՊՀ-ում դասավանդող 60 դասախոսներ: Ընդհանուր հաշվով հարցումներին 2 կիսամյակների արդյունքներով մասնակցել են 1168 ուսանող, նախորդ տարվա 1052-ի փոխարեն, 127 շրջանավարտ, նախորդ 170-ի փոխարեն: Ուսանողների թվաքանակի աճը (116-ով), ցույց է տալիս, որ ուսանողների բարձրացրած խնդիրներին լուծումներ են տրվում, և նրանք հավատում են դրական փոփոխություններին: Ընդհանուր առմամբ, պատկերը այսպիսին է.

2014-2015 ուսումնական տարում հարցումներին մասնակցած ուսանողներ և դասախոսներ

Հարցումներ	Ֆակուլտետներ	Ուսանողների/ դասախոսների թիվ
Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ	ԲՖ,ԲԼՖ, ՅՄՖ,ՏՖ	366
Գավառի պետական համալսարանում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատման վերաբերյալ	ԲՖ,ԲԼՖ, ՅՄՖ,ՏՖ	304
1-ին կիսամյակ (էլեկտրոնային հարցում) Շահակիցների պահանջների հաշվառմամբ ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ (N 55)	ԲՖ,ԲԼՖ, ՅՄՖ,ՏՖ	223

2-րդ կիսամյակ (էլեկտրոնային հարցում) Շահակիցների պահանջների հաշվառմամբ ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ (N 55)	ԲՖ,ԲՆՖ, ՅՄՖ,ՏՖ	275
Գավառի պետական համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման վերաբերյալ	ԲՖ,ԲՆՖ, ՅՄՖ,ՏՖ, ՅՈՒՖ	127
Գավառի պետական համալսարանում կրթական միջավայրից դասախոսների բավարարվածության վերաբերյալ		60
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		1355

Հաշվետու ուստարում ԱԲՎ որակի ապահովման բաժնի աշխատակիցները ԳՊՀ եվրոպական ծրագրերի շրջանակներում ակտիվորեն մասնակցեցին մի շարք աշխատաժողովների, վերապատրաստումների, խորհրդատվական կուրսերի և գիտաժողովների, ինչը շատ կարևորում ենք հատկապես միջազգային փորձի ուսումնասիրման և բենչմարքինգի անհրաժեշտ մեխանիզմների ներդրման, արտաքին շահառուների հետ հետադարձ կապերի գործիքների մշակման, ուսումնական գործընթացի կազմակերպման առավել օպտիմալ եղանակների օգտագործման, կրթության միջազգայնացման առումներով.

ԳՊՀ ուսանողների և դասախոսների համակազմը.

2014-2015 ուսումնական տարվա սեպտեմբեր ամսին ԳՊՀ ուսանողների ընդհանուր թիվը 1474 էր, իսկ ապրիլ ամսին` 1602 սովորող, որոնցից

- առկա բակալվրիատում` 428 սովորող, որից 73-ը սովորում է անվճար ուսուցման համակարգում,
- մագիստրատուրայում` 178 սովորող, որից 31-ը սովորում է անվճար ուսուցման համակարգում,
- հեռակայում` 996 սովորող,
- օտարերկրյա քաղաքացիություն ունեցող` 6 ուսանող:

2014-2015 ուսումնական տարում ԳՊՀ-ում աշխատող դասախոսների ընդհանուր թիվը 135 է, որից

պրոֆեսոր-10

դոկտոր - 4

դոցենտ - 38

թեկնածու - 27

ասիստենտ, դասախոս - 56:

ԱՔՎ 2015-2016 ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները.

2015-2016 ուսումնական տարում ԱՔՎ-ն պետք է շարունակի և գործուն մասնակցություն ապահովի ԳՊՀ զարգացման հայեցակարգի և հակակոռուպցիոն ծրագրի իրականացմանը, համալսարանի ինքնագնահատման և հավատարմագրման գործընթացներից բխող մի շարք խնդիրների լուծմանը: Այդ նպատակով ԱՔՎ-ն պետք է ավելի ակտիվորեն համագործակցի համալսարանի մյուս ստորաբաժանումների հետ և նպատակային ու ճիշտ օգտագործի եվրոպական առաջավոր փորձը:

Գործունեության նշված առաջնահերթությունները հաշվի առնելով՝ ԱՔՎ-ն 2015-2016 ուսումնական տարում նախատեսում է կատարել հետևյալ աշխատանքները.

1. Կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից ելնելով՝ ամբիոնների հետ միասին մասնագիտական կրթական ծրագրերի և բաղադրիչ դասընթացների համար սահմանել հստակ և հասանելի կրթական վերջնարդյունքներ և գնահատումը կատարել ըստ վերջնարդյունքների:
2. Կրթության կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, համագործակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ (հիմք ունենալով միջազգային փորձը), ստեղծել տեղեկատվության հավաքագրման և պահպանման առավել արդյունավետ համակարգ:
3. Պատշաճ փաստաթղթաշրջանառություն ապահովելու նպատակով վերանայել և թարմացնել ուսանողների և դասախոսների տվյալների բազաները:
4. Կրթության որակի ապահովման նպատակով առավել համակարգված կազմակերպել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից ԳՊՀ-ում ուսումը շարունակողների, երկրորդ մասնագիտություն ստացողների, այլ բուհերից ԳՊՀ տեղափոխվածների և ներբուհական տեղափոխությունների արդյունքներով առաջացած առարկայական տարբերությունների հանձման գործընթացները:
5. ԱՔՎ որակի ապահովման բաժնի կողմից շարունակել ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, գործատուների շրջանում հարցումների անցկացումը, պարբերաբար վերանայել հարցաշարերը, ճիշտ հարցադրումների միջոցով բացահայտել գործատուների կարծիքներն ու ստանալ համապատասխան առաջարկներ:
6. Համացանցային տիրույթում ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի և դասընթացների որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի մեխանիզմների կիրառում և դրանց արդյունքների մասին հանրությանը իրազեկում:
7. Գնահատման գործընթացը օբյեկտիվ և թափանցիկ դարձնելու նպատակով մշակել ուսանողի և դասախոսի ինքնագնահատման մեթոդներն ու ձևաչափերը:
8. ԳՊՀ դասախոսների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:

9. Դասախոսների և ուսանողների համար իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր, շարունակել անգլերեն լեզվի ուսուցումը:
10. Ակտիվացնել կապը ամբիոնների հետ, կազմակերպել քննարկումներ դասավանդման մեթոդների և ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքների ու ձևերի վերաբերյալ:
11. Բոլոնյան պահանջներին համահունչ՝ շարունակել առարկայական ծրագրերը արտաքին փորձաքննության ենթարկելու գործընթացը:
12. Ակտիվացնել մեթոդմիավորումների աշխատանքները:
13. ԳՊՀ էլեկտրոնային գրքերի շտեմարանը համալրել ԳՊՀ դասախոսների հեղինակած գրքերով, ձեռնարկներով, մասնագիտական գրականությամբ:
14. Սերտացնել բուհ-դպրոց կապերը՝ գովազդային արշավների համար օգտագործելով համալսարանի մարդկային, մտավոր և նյութական ռեսուրսները:
15. Ուսանողներին ներգրավել «E-Learning.GSU» և «E-Library.GSU» կայքերում նյութեր ներբեռնելու աշխատանքներում:
16. Անընդհատ վերանայել բուհի կանոնակարգերը՝ ԳՊՀ և միջազգային փորձի արդյունքները համադրելով:

Ա. Ա. Ղարիբյան՝

ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության պետ

**ԳՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գրքային ունեցվածքը՝ 41.300	Բաժին՝	2
Ընթերցող՝ 2.200	Ընթերցասրահ՝	2
Հաճախում՝ 250.000	Աշխատողների թիվը՝	3
Գրքատացք՝ 450.000		

ԳՊՀ գիտական գրադարանը համալսարանի կարևոր կառուցվածքային ստորաբաժանումներից է, որի գործունեության հիմնական նպատակը անհրաժեշտ գիտական աղբյուրներով և մասնագիտական գրականությամբ գիտաուսումնական գործընթացի տեղեկատվական ապահովումն է:

Հաշվետու ժամանակահատվածում գրադարանում իրականացվել են գիտակրթական տեղեկատվության ապահովման աշխատանքներ, որոնք հիմնականում միտված են եղել շահառուների պահանջների հնարավորինս բավարարմանը:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ գրադարանը կատարել է գրքային ֆոնդի համալրման, մշակման, դասավորման, գրքերի վերանորոգման աշխատանքներ: Համալրվել են գրադարանային ֆոնդի գրացուցակները, տեղեկատվական քարտարանները և գիտական հոդվածների մատենագիտական ցանկերը: Հետևողական աշխատանք է կատարվել գրադարանային հավաքածուների պահպանման և խնամքի ուղղությամբ: Պարբերաբար դասավորվել են գրապահոցի գրքային հավաքածուները:

Հաշվետու տարում գրադարանի ձեռք բերած գրականության ընդհանուր թիվը կազմում է 500 միավոր, այդ թվում՝

- մասնագիտական դասագրքեր՝ 20,
- ուսումնական ձեռնարկներ՝ 33,
- մենագրություններ՝ 6,
- տեղեկագրքեր՝ 6,
- գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ՝ 15,
- սեղմագրեր՝ 44,
- գեղարվեստական գրականություն՝ 180,
- խտասկավառակներով գեղարվեստական գրականություն՝ 44,
- էլեկտրոնային ընթերցիչ Kindle՝ 2,
- այլ նյութեր՝ 150 միավոր:

Այսպիսով, ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում ունի 41.300 գրադարանային միավոր, որից.

- հայերեն՝ 19180 գիրք,
- ռուսերեն՝ 16400 գիրք,
- այլ լեզուներով՝ 5720 գիրք:

Հաշվետու ուստարվա ընթացքում մուտքագրված 500 կտոր գրականությունից թվով 38 մասնագիտական գիրք ձեռք է բերվել համալսարանի ֆինանսական միջոցներով: Գրադարանավարի օրվա, ինչպես նաև Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ ԳՊՀ գրադարանի գրադարանավարները հանդես են եկել հատուկ

նախաձեռնությամբ՝ սեփական գրքամիջոցներից բուհի գրադարանին նվիրաբերելով շուրջ 150 կտոր գրականություն: Իսկ համալրված գրքերի մյուս մասն արդյունք է անհատ հեղինակների և կազմակերպությունների նվիրատվության: ԳՊՀ գրադարանին գրքեր են նվիրել.

- ԳՊՀ ռեկտորատը և պրոֆեսորադասախոսական կազմը՝ 154 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրքեր,
- ԳՊՀ դասախոս, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, տնտեսագիտության թեկնածու Արմեն Սահակյանը՝ 22 տնտեսագիտական ուսումնական ձեռնարկ,
- Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը՝ իր հեղինակային գրքերից 17 օրինակ,
- ԱՄՆ դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնը՝ 55 անգլերեն գրքեր և խտասկավառակներ, 2 էլեկտրոնային ընթերցիչ՝ kindle,
- Հայաստանում ամերիկյան համալսարանի կողմից՝ 5 անգլերեն գրքեր,
- «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության կողմից՝ 57 գրքեր:

Նոր համալրված գրականությունը գրեթե ամբողջովին շրջանառվել է ողջ ուսումնական տարվա ընթացքում: Գրքերի շրջանառությանը նպաստել են ինչպես նոր ստացված գրքերի ցուցադրությունները գրադարանում և ընթերցասրահում, այնպես էլ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկանատների և ամբիոնների ակտիվ աշխատանքներն ու հանձնարարականները:

Անգլերեն լեզվով և կից խտասկավառակներով գեղարվեստական գրքերը շուտ գտան իրենց ընթերցողներին՝ տնային ընթերցանության հանձնարարականների շնորհիվ: Իսկ էլեկտրոնային Kindle ընթերցիչները սպասարկվել և շրջանառվել են ոչ միայն հաշվետու ուստարվա երկու կիսամյակների ընթացքում, այլև ամառային արձակուրդներին՝ անգլերեն լեզու ուսումնասիրող խմբերում՝ ԳՊՀ ռեկտորատի թույլտվությամբ և խմբի ավագների պատասխանատվությամբ: Էլեկտրոնային Kindle ընթերցիչներից օգտվելու փորձի փոխանակումը և ընթերցիչների գրքերի քննարկումը նախատեսվում է անցկացնել 2015-2016 ուստարվա ընթացքում:

Օտարալեզու գրականությամբ ուսանողներին հնարավորինս լավ սպասարկելու նպատակով գրադարանի երկու աշխատակիցները հաճախել են ԳՊՀ-ում Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից կազմակերպած անգլերեն լեզվի դասընթացների, ինչը նպաստել է նաև նրանց գրադարանային աշխատանքներն առավել հմուտ կազմակերպելուն:

Գրադարանի կարևոր գործառույթն է գրքային ֆոնդի մշակումը: Հաշվետու ուստարում կատարվել են մասնագիտական գրականության ստուգման, մաքրման, տեղաշարժի և գրքերի վերանորոգման աշխատանքներ: Գրապահոցի դարակաշարերի գրքերը պարբերաբար ստուգվել և վերադասավորվել են: Վերանորոգվել և վերականգնվել է շուրջ 500 կտոր վնասված գրականություն: Իրականացվել է նաև գեղարվեստական գրականության այբբենական կարգով վերադասավորում և համակարգում: Շարունակվել են գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների: Արդյունքում գրադարանն ունի 15 մասնագիտությունների համապատասխան հետևյալ քանակի մասնագիտական գրքեր.

1. Հայոց լեզու և գրականություն՝ 2350
2. Ռուսաց լեզու և գրականություն՝ 2040

3. Անգլերեն լեզու և գրականություն՝ 2020
4. Պատմություն՝ 1438
5. Իրավագիտություն՝ 1520
6. Մանկավարժություն և մեթոդիկա՝ 1151
7. Կառավարում և ֆինանսներ՝ 2211
8. Հաշվապահական հաշվառում՝ 2211
9. Կենսաբանություն՝ 2425
10. Դեղագործական քիմիա՝ 230
11. Աշխարհագրություն՝ 900
12. Բնապահպանություն և բնօգտագործում՝ 100
13. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2500
14. Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 60
15. Սերվիս՝ 42:

Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակները տրամադրվել են համապատասխան ամբիոններին՝ ուսանողների կուրսային, անհատական և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը պատրաստելիս վերջիններիս գրականությամբ աջակցելու նպատակով:

Շարունակական աշխատանքներ են իրականացվել ԳՊՀ գրադարանի մասնագիտական-տեղեկատվական բազայի համակարգման ուղղությամբ: Անհրաժեշտ տեղեկատվության պատվերների հիման վրա մշակվել և համալրվել են շուրջ 20 անուն պարբերականներից, տարեգրքերից, գիտական և գիտագործնական հանդեսներից, գիտաժողովների նյութերից ու գիտական հոդվածների ժողովածուներից կազմված տեղեկատվական շտեմարաններն ու մատենագիտական ցանկերը: Պարբերաբար լրամշակված ցանկերը տրամադրվել են ուսանողներին ու պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

Տարեցտարի համալրվում է նաև ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը: 2014թ. հրատարակված N1(16) գիտական հոդվածների ժողովածուում տեղ գտած 88 գիտական հոդվածներով համալրված մատենագիտական ցանկը պարունակում է 1229 հոդված:

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված է նաև ԳՊՀ www.gsu.am պաշտոնական համացանցային կայքի «Գրադարան» հատվածամասում՝ հասանելի լինելով նաև էլեկտրոնային եղանակով:

Հետևողական ջանքեր են գործադրվել ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի ձևավորման ուղղությամբ: ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորողների և ԳՊՀ գրադարանի աշխատակիցների կողմից ձևավորված աշխատանքային խումբը պարբերաբար մշակել է «E.Library.GSU» համակարգում ներառված գրքերի կարգացանկերն ու ենթակարգացանկերը և համալրել էլեկտրոնային գրադարանի պաշարները: 2015-2016 ուստարվա նախաշեմին էլեկտրոնային գրադարանում առկա է ավելի քան 600 էլեկտրոնային գիրք:

ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի մշակումն ու էլեկտրոնային գրքերի նոր համալրումները կկազմեն հաջորդ ուսումնական տարվա մեր ամենօրյա աշխատանքների կարևոր մասը:

ԳՊՀ գրադարանի համար առաջնահերթություն է համագործակցային ծրագրերի իրականացումը: ԳՊՀ գրադարանը համագործակցում է Հայաստանի Ազգային

գրադարանի հետ: Լինելով «Հայաստանի գրադարանային ասոցիացիայի» անդամ՝ ԳՊՀ գրադարանը ամեն տարի ներկայացնում է հաշվետվություն գրադարանային հագեցվածության մասին: Ներկայացված ցուցանիշները հրատարակվում են ՀՀ մշակույթի նախարարության Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում՝ ՀՀ այլ գրադարանների ցուցանիշների հետ, վիճակագրական վերլուծությամբ:

Գրադարանը համագործակցում է նաև Գեղարքունիքի մարզային գրադարանի, Գավառի քաղաքային գրադարանի և այլ բուհերի գրադարանների հետ: ԳՊՀ գրադարանի աշխատակիցների հետևողականության շնորհիվ պարբերաբար լրացվել են վերոնշյալ գրադարաններում առկա ԳՊՀ հրատարակությունները և բուհի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատությունները: ԳՊՀ հրատարակություններից տրամադրվել են նաև ԳՊՀ հյուրերին և մարզի դպրոցների ու քոլեջների գրադարաններին:

Գրադարանում պարբերաբար կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են ուսանողների շրջանում գրքի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելուն: Թեմատիկ միջոցառումները, որոնք անցկացվեցին 2014թ. հոկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում, նվիրված էին Ուսուցչի և Գրադարանավարի օրերին: Այս ընթացքում ԳՊՀ գրադարանում կազմակերպվեցին արդեն ավանդական դարձած բաց դռների օրեր, որի ընթացքում բոլոր առաջին կուրսեցիները ծանոթացան գրադարանում, ընթերցասրահում և գրապահոցում առկա իրենց մասնագիտական գրականությանը, բոլոր գրացուցակներին և մատենագիտական ցանկերին: Նույն ժամանակահատվածում գրադարանի աշխատակիցների նախաձեռնությամբ կազմակերպվեց գրքահավաք և գրքերի նվիրատվություն ԳՊՀ գրադարանին, որի ընթացքում նվիրաբերվեց շուրջ 150 գիրք: Կազմակերպված գրքերի քննարկումները նպաստեցին ուսանողների շրջանում նոր գրքապաշարների վերաբերյալ տեղեկատվության արդյունավետ տարածմանը:

Գրադարանի աշխատակիցները կազմել են ժամանակացույց, որի համաձայն դասերից ազատ ժամերին ուսանողները հնարավորություն են ունեցել գրադարանավարների և կուրսղեկների ուղեկցությամբ ծանոթանալու գրադարանում, ընթերցասրահում և գրապահոցում առկա ամբողջ մասնագիտական գրականությանը: Այս կերպ ուսանողները տեղեկացել են նաև դասագրքերի, ձեռնարկների, մենագրությունների և ուղեցույցների նոր համալրումներին: Յուրաքանչյուր ամսվա վերջում ուսանողներն ու գրադարանի աշխատակիցներն ընթերցասրահում կազմակերպել են գրադարանային ժամերի ընթացքում ընթերցված և ուսումնասիրված գրքերի քննարկումներ: 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում ԳՊՀ ընթերցասրահում անցկացվել են Ալ. Շիրվանզադեի, Ժ. Անանյանի, Ռ. Ենգիբարյանի գրքերի քննարկումներ: Հիշյալ միջոցառումները կազմակերպվել են Հայաստանի Հանրապետությունում հայտարարված Ընտանիքի տարվա շրջանակում:

2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ԳՊՀ միջոցառումների մեծ մասը նվիրված էին Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին, որի շրջանակում ԳՊՀ ընթերցասրահում կազմակերպվել է գրքերի ցուցադրություն: Ցուցադրվել են Հայոց Ցեղասպանության մասին շուրջ 50 հայալեզու և օտարալեզու մենագրություններ, վավերագրեր, փաստաթղթերի ու վկայությունների հրապարակումներ և ուսումնասիրություններ:

Նույն ժամանակահատվածում Գիրք նվիրելու օրվան և Մայրենի լեզվի օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում ընթերցասարահուն անցկացվել են նաև արդի հայերենի խնդիրների քննարկում-բանավեճեր: Միջոցառումների մասնակիցներն էին ԳՊՀ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսները և ուսանողները:

Նշված միջոցառումները նպաստեցին ինչպես գրքերի տացքի, այնպես էլ՝ գրադարան ուսանողների հաճախելիության բարձրացմանը:

Այսպիսով, գրադարանն աշխատում է հնարավորինս պատշաճ ձևով կատարել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական կենտրոնի իր առաքելությունը:

ԳՊՀ գրադարանի զարգացման հիմնական ուղղությունները: ԳՊՀ գրադարանը կարևորում է ինչպես տեղեկատվական աղբյուրների շարունակական արդիականացումը, այնպես էլ գրքային պաշարների և էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների նպատակային օգտագործումը: Թեև գրադարանի գրքային ֆոնդի պարբերաբար համալրումներին և բուհի կողմից կատարվող մասնագիտական գրքերի նպատակային գնումներին, գրադարանում ուսանողների գրքային պահանջների մի մասը դեռ մնում է չբավարարված: Անգամ էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների առկայության դեպքում՝ ուսանողության կողմից, այնուամենայնիվ, պահանջված են մնում թղթային գրականության նոր հրատարակությունները: Հետևաբար, անհրաժեշտ է ընդլայնել գրականության ձեռքբերման շրջանակները՝ կապ հաստատելով բուհերի և ակադեմիական ինստիտուտների հրատարակությունների հետ:

Գրադարանի գրքաֆոնդում դեռևս առկա է արդիականությունը կորցրած, օտարման ենթակա գրականություն: Նախատեսվում է 2015-2016 ուստարվա ընթացքում իրականացնել գրքային ֆոնդի զտում, որի արդյունքում էապես կթարմանան մասնագիտական գրականության գրքացանկերը:

Բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության գիտաուսումնական պահանջների բավարարման համար անհրաժեշտ է նաև գրադարանի և գրապահոցի համար նոր գրապահարանների, դարակների ու դարակաշարերի ձեռքբերում, գրադարանային գործառույթների ավտոմատացում, տեղեկատվական ռեսուրսների պահպանման, տրամադրման և կառավարման համակարգի բարեփոխում:

Գրադարանում նմանատիպ աշխատանքները կնպաստեն գրադարանային գործի առավել հստակ, օպերատիվ և որակյալ կազմակերպմանը:

**Ն. Ֆ. Պետրոսյան՝
ԳՊՀ գրադարանի վարիչ**

ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2014-2015 ՈՒՍԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2015-2016 ՈՒՍԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է համալսարանի և հասարակության միջև կապերի ապահովման սկզբունքները, նպատակները, հիմքերը, հիմնական գործիքներն ու կառուցակարգերը:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինը գործում է՝ համաձայն ՀՀ օրենսդրության, ԳՊՀ կանոնադրության, ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության կանոնակարգի և այլ իրավական ակտերի դրույթների:

Իր հնգամյա գործունեության ընթացքում բաժինը պատշաճ կերպով համակարգել է հասարակության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքները:

Հավատարիմ մնալով իր ստանձնած առաքելությանը՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից կազմակերպվել են տարաբնույթ ճանաչողական, տեղեկատվական, գովազդային արշավներ ու ակցիաներ, կատարվել է Համալսարանի գիտահետազոտական, կրթադաստիարակչական գործունեության լուսաբանում, ապահովվել է գործընկեր կազմակերպությունների, շահակիցների հետ սերտ համագործակցություն:

Հաշվետու ուստարում ևս բաժինը շարունակել է սերտորեն համագործակցել բուհի ուսանողական ինքնակառավարման մարմինների, վերջիններիս կից գործող գրական-գեղարվեստական ակումբների ու խմբակների, Իրավաբանական կլինիկայի, Ակադեմիական քաղաքականության վարչության, բուհի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է նաև դիմորդների, ուսանողների, շրջանավարտների և այլ շահառուների հետ տարվող աշխատանքները, մասնավորապես, ԳՊՀ ընդունելության, ուսման վարձերի ու հնարավոր զեղչերի, ուսանողներին աջակցող հիմնադրամների, միջազգային համագործակցության ծրագրերի, բուհի կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի գործառույթների իրականացման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

✓ Հաշվետու ուսումնական տարում ձևավորվել և ամրապնդվել են գործընկերային կապեր «Կրթություն. Հայաստան», «AM» իրավաբանական, «Բաց հասարակության հիմնադրամներ. Հայաստան», «Ֆինկա» հասարակական կազմակերպությունների, «Վորլդ Վիժն. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, Ռոսսոտրուդնիչեստվոյի, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի, կապի և հեռահաղորդակցության ոլորտների խոշոր ընկերությունների, Գեղարքունիքի մարզի շուրջ հիսուն դպրոցների, ՀՀ միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ կառույցների հետ, որոնց հետ համատեղ ԳՊՀ ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, ուսուցողական և ինտերակտիվ սեմինար-քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և մրցույթներ:

✓ Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Գեղարքունիքի մարզի «Գեղամա մեդիա հոլդինգ» ՍՊԸ-ի, Գավառի «Քյավառ», Սևանի «STV1» հեռուստաընկերությունների, «Գեղամա աշխարհ» թերթի և «Արմենպրես» լրատվական գործակալության հետ:

✓ «Գեղամա» հեռուստաընկերության եթերում պարբերաբար ցուցադրվել են «Լուրեր» լրատվական, «Համալսարանական ժամ» հաղորդաշարերը, հեռարձակվել են ԳՊՀ-ին վերաբերող հայտարարություններ: Բոլոր տեսագրությունները տեղադրվել են ԳՊՀ համացանցային պաշտոնական վիդեոբլոգում (www.youtube.com/GavarStateUniversity):

✓ Ինչպես ներբուհական, այնպես էլ արտահամալսարանական միջոցառումների վերաբերյալ նորությունների տեքստերը և տեսանյութերն էլեկտրոնային փոստով ուղարկվել են մարզային և հանրապետական լրատվամիջոցներ:

✓ ԳՊՀ միջոցառումների և բազմաբնույթ իրադարձությունների վերաբերյալ նկարված լուսանկարներն արխիվացվել են էլեկտրոնային տարբերակով:

✓ «AMHE - Բարձրագույն կրթությունը Հայաստանում» պորտալում պարբերաբար տեղադրվել են ԳՊՀ-ին վերաբերող անգլերեն լեզվով նորություններ՝ համապատասխան լուսանկարով:

✓ Հայաստանյան և արտասահմանյան տպագիր և էլեկտրոնային մամուլում տեղ գտած բուհին վերաբերող տեղեկատվությունն առանձնացվել և խմբավորվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուում:

✓ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից աջակցություն է ցուցաբերվել ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությանը՝ տարաբնույթ միջոցառումների և ձեռնարկների կազմակերպման հարցում:

✓ «Ընտանիքի տարվա» շրջանակում հայտարարվել է «Իմ ընտանիքի պատմությունը» խորագրով էսսեների մրցույթ, հավաքագրված աշխատանքները քննարկվել են մասնագիտական հանձնաժողովի համապատասխան նիստում, որոշվել են հաղթողները, պատրաստվել են պատվոգրեր և շնորհակալագրեր:

✓ Գավառի պետական համալսարանում հայտարարվել է «Հիշում են, հիշեցնում և պահանջում» պաստառների մրցույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Մրցույթին մասնակցել են ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների գրեթե բոլոր կուրսերը: Նախապես մշակված ընթացակարգի համաձայն՝ մրցույթի հաղթողները համապատասխանաբար «Հիշում են և պահանջում», «Խոնարհում սրբադասված նահատակներին», «Վերածնունդ», «Պատմական ընդգրկում» և «Հատուկ մրցանակ» անվանակարգերում ընտրվել են առցանց և ավանդական քվեարկությունների արդյունքների, ինչպես նաև մասնագիտական հանձնաժողովի գնահատականների հիման վրա: Մնացած բոլոր պաստառները ներկայացրած կուրսերը արժանացել են շնորհակալագրերի:

✓ «ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու» պարբերականը գրանցվել է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման համակարգում և ստացել ISSN համարանիշ:

✓ Գավառի պետական համալսարանի և ՀՀ պաշտպանության նախարարության, մասնավորապես, 2-րդ բանակային կորպուսի համագործակցության արդյունքում կատարվել են փոխայցելություններ զորամասեր և Գավառի պետական համալսարան, բուհում կազմակերպվել են վարպետության դասեր կորպուսի զորահրամանատարական կազմի բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից:

✓ Ապահովվել է ԳՊՀ լավագույն ուսանողների մասնակցությունը «Լավագույն ուսանող-2014» հանրապետական մրցույթին: Համապատասխանաբար հավաքագրվել ու ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ուղարկվել նրանց փաստաթղթային փաթեթները: Մրցույթի արդյունքում Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 38 ուսանողներ համապատասխան անվանակարգերում ճանաչվել են լավագույնը և արժանացել են մրցանակների: Լավագույն ուսանողների շարքում էին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի ուսանողուհի Էմմա Լազյանը և Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի մագիստրատուրայի ուսանող Մարգար Հովհաննիսյանը, ովքեր մագիստրոսի կրթական ծրագրով հունանիտար և բնագիտական ոլորտների անվանակարգերում զբաղեցրել են 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը:

✓ Հավաքագրվել ու Գնահատման և թեստավորման կենտրոն են ներկայացվել ԳՊՀ 11 ուսանողի տվյալներ, ովքեր որպես կազմակերպիչներ մասնակցել են 2015 թվականի կենտրոնացված միասնական քննություններին:

✓ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ամենամյա ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի ուսանողները հաշվետու տարվա հուլիս և օգոստոս ամիսներին Հանքավանի «Հասմիկ» և «Լուսաբաց» ճամբարներում աշխատել են որպես ջոկատավարներ:

✓ Ապահովվել է ԳՊՀ ուսանողների մասնակցությունը «Բազե-2014» և «Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքներին, որոնցից ԳՊՀ թիմը վերադարձել է մեդալներով և պատվոգրերով:

✓ Շարունակվել է համագործակցությունը Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի երիտասարդական թևի հետ: Պարբերաբար կազմակերպվել են հոգևոր թեմաներով դասախոսություններ, համալսարանականներն այցելել են թեմի տարբեր եկեղեցիներ, մասնակցել պատարագների, օրհնության կարգերի և ծիսական այլ արարողությունների:

✓ Դպրոց-բուհ համագործակցության շրջանակում կազմակերպվել են փոխադարձ այցելություններ և շրջայցեր ՀՀ դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և Գավառի պետական համալսարան: Այցերի շրջանակներում կրթական հիշյալ հաստատություններ են առաքվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ:

✓ Պարբերաբար համալրվել է Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի կայքում (www.career.gsu.am) ներկայացված շրջանավարտների առցանց բազան:

✓ Բուհ-գործատու կապն ամրապնդելու նպատակով կազմակերպվել են մարզի գործատուների հետ հանդիպումներ, տարաբնույթ սեմինար-քննարկումներ: 2014 թվականի նոյեմբերի 13-ին Գավառի պետական համալսարանի և Հայաստանի գործատուների հանրապետական միության /ՀԳՀՄ/ միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի հիման վրա բուհի Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար ՀԳՀՄ-ին կից գործող Գործարարության դպրոցի

կողմից կազմակերպվել է սեմինար-դասընթաց կարիերայի պլանավորման վերաբերյալ:

✓ «MS Outlook» հատվածամասում գործող «Office 365»-ի բազմագործառնության ծրագրի շրջանակում ստեղծվել են ԳՊՀ պաշտոնական և բուհի անձնակազմի էլեկտրոնային փոստի աշխատանքային տիրույթներ: Համակարգը արդյունավետ կերպով կիրառվել է ԳՊՀ էլեկտրոնային ներքին փաստաթղթաշրջանառության ապահովման նպատակով, հրամանները, շրջաբերականները, հայտարարություններն ու այլ գրություններն առաքվում են էլեկտրոնային ճանապարհով, ինչը ժամանակի և նյութական ռեսուրսների որոշակի խնայողության հնարավորություն է ընձեռել:

✓ էլեկտրոնային տարբերակով ԳՊՀ ողջ աշխատակազմին հղվել են համապատասխան տոների և ծննդյան տարեդարձերի առթիվ շնորհավորանքներ:

✓ Կատարվել է ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի տեղեկատվության ամբողջական վերախմբագրում:

✓ Բուհի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով թարմացվել է ԳՊՀ պաշտոնական կայքի «Փաստաթղթեր» բաժինը, որը ներառում է ԳՊՀ հայեցակարգերի, կանոնակարգերի, ուղեցույցերի, բուհի խորհրդի, գիտական խորհրդի, ֆակուլտետի խորհրդի որոշումների, բյուջեի կատարողականի, գնումների գործընթացի կազմակերպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

✓ Վերախմբագրվել են ԳՊՀ դիմորդի, Բակալավրիատի առաջին կուրսեցու, Բակալավրիատի ուսանողի, Մագիստրատուրայի ուսանողի, Դասախոսի ուղեցույցերը, ԳՊՀ տեղեկատվական թերթիկները, Դիմորդի, Առաջին կուրսեցու հարցաթերթիկները և տեղադրվել են ԳՊՀ պաշտոնական կայքի համապատասխան հատվածամասերում:

✓ Թարմացվել և տպագրության են տրվել ԳՊՀ այցեքարտերը, թղթապանակները, գրիչները:

✓ Ամբողջովին վերախմբագրվել է ԳՊՀ հեռախոսահամարների տեղեկատու, որի էլեկտրոնային տարբերակն առաքվել է բուհի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների աշխատակիցներին:

✓ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից ստեղծվել է բուհում սովորող սոցիալապես անապահով և ծնողազուրկ ուսանողների բազա, որի հիման վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են մի շարք կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

✓ Բուհում մշակվել և արդյունավետ կերպով կիրառվում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման գործիքները: Լայն է Համալսարանի ներկայացվածության շրջանակը համացանցային տիրույթում.

- ԳՊՀ պաշտոնական կայք - www.gsu.am,
- ԳՊՀ ուսանողական պորտալ - www.student.gsu.am,
- ԳՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն - www.career.gsu.am,
- ԳՊՀ հեռախոսահամարների տեղեկատու - www.phone.gsu.am,
- ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգ - www.elearning.gsu.am,
- ԳՊՀ էլեկտրոնային գրադարան – www.library.gsu.am,
- ԳՊՀ ֆեյսբուքյան էջ - <https://www.facebook.com/pages/Gavar-State-University>,
- Թվիթեր - <https://twitter.com/UniversityGSU>,

- Լինկդին - https://www.linkedin.com/home?trk=nav_responsive_tab_home
- ԳՊՀ հակակոռուպցիոն բլոգ - <http://gphhakakorupcion.blogspot.com/>

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը

ԳՊՀ հանրության հետ կապերի ապահովման քաղաքականության հիմնական առաքելությունն է Համալսարանի՝ որպես Գեղարքունիքի մարզում գործող բարձրագույն կրթական հաստատության, հավուր պատշաճի ներկայացումը, Համալսարանի վերաբերյալ հավաստի տեղեկատվության մատչելիության, տեղեկատվական ուղիների բազմազանության ապահովումը, հանրության պահանջներին համապատասխանելու համար հանրային կարծիքի ուսումնասիրությունը, բուհի գործունեության պատշաճ ներկայացումը հանրության լայն շրջանակներին:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի զարգացման հայեցակարգում ներառված են այն առաջնային խնդիրները, որոնք միտված են հանրության շրջանում ԳՊՀ դրական իմիջի ձևավորմանը, հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև գիտելիքի ու կրթության հանրայնացմանը:

Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի աշխատանքները 2015-2016 ուստարում կկազմակերպվեն հետևյալ ուղղություններով.

✓ Շարունակել ակտիվ համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների հետ և ապահովել ԳՊՀ պատշաճ արձագանքը նրանց նախաձեռնություններին:

✓ ԳՊՀ-ի մասին պատրաստել տեսանյութեր և ապահովել դրանց տարածումը:

✓ Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ օրհներգի ստեղծման և մասսայականացման ուղղությամբ:

✓ Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ համացանցային ռեսուրսների զարգացման, բովանդակության հագեցման և առավել մատչելի դարձնելու ուղղությամբ, ապահովել դրանց օպերատիվ թարմացումները:

✓ ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահից բացի, հեռուստատեկրաններ տեղադրել նաև ԳՊՀ բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների մասնաշենքերում, ինչը կնպաստի ԳՊՀ ուսանողների համահավասար տեղեկացվածությանը:

✓ ԳՊՀ պաշտոնական կայքի տիրույթում ստեղծել «ԳՊՀ օրացույց» հատվածամասը, որտեղ պարբերաբար կտեղադրվեն միջոցառումների, կայանալիք հանդիպումների և այլ նախաձեռնությունների վերաբերյալ մանրամասներ:

✓ Շարունակել ԳՊՀ շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի կայքի բազայի համալրման աշխատանքները:

✓ Բուհ-գործատու կապի ամրապնդման նպատակով պարբերաբար կազմակերպել հանդիպումներ գործատուների հետ:

✓ ԳՊՀ տեղեկատվական թերթիկները տեղադրել www.gsu.am կայքի համապատասխան հատվածամասերում:

✓ Ավագ դպրոցներից բացի, ակտիվորեն համագործակցել հիմնական և միջնակարգ դպրոցների հետ, որոնց շրջանակներում մասնագիտական կողմնորոշման

դասընթացներ կանցկացվեն նաև միջին դասարանների աշակերտների համար, ինչը կնպաստի ավելի վաղ տարիքից կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում:

✓ Համագործակցել գիտակրթական հաստատությունների համացանցային կայքերի խմբագիրների ու պատասխանատուների (ադմինիստրատորների) հետ:

✓ ԳՊՀ համացանցային պորտալում առկա կայքերի միջև ձևավորել ակտիվ փոխկապակցվածություն:

✓ «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանում պարբերաբար տեղադրել ԳՊՀ-ին ու անվանի համալսարանականներին վերաբերող տեղեկատվություն՝ համապատասխան լուսանկարներով:

✓ Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ԳՊՀ կրթաշնորհառու ուսանողների հետ, քննարկել ուսանողներին մտահոգող հարցերը և նրանց ներգրավել կամավորական աշխատանքներում:

✓ Էլեկտրոնային փոստի միջոցով Գեղարքունիքի մարզի դպրոցներին առաքել ԳՊՀ-ին վերաբերող տեղեկատվություն, ստեղծել էլեկտրոնային հետադարձ կապի հնարավորություն, ինչը առցանց համագործակցության յուրօրինակ հարթակ կհանդիսանա:

✓ ԳՊՀ ներքին շահառուների կարիքներն ու ակնկալիքները բացահայտելու և դրանք բավարարելու նպատակով ուսանողների և դասախոսների շրջանում պարբերաբար անցկացնել հարցումներ՝ բուհում մատուցվող կրթական ծառայությունների որակի, մասնագիտական գրականության առկայության, շենքային պայմանների և ռեսուրսների ապահովվածության, սննդի և այլ հարցերի վերաբերյալ: Հարցումներից ստացված պատասխանները վերլուծել, արդյունքները ներկայացնել ռեկտորատ՝ քննարկման, և առաջարկել համապատասխան լուծումներ:

ԳՊՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Գործունեության ոլորտները	2011-2012 ուստարի	2012-2013 ուստարի	2013-2014 ուստարի	2014-2015 ուստարի
<i>www.gsu.am կայքի նորություններ</i>	138	190	223	224
<i>www.gsu.am կայքի այցելուների քանակը (այցելություններ, դիտումներ)</i>	82889/24402	117759/67246	83802/ 219710	74612/ 232313
<i>infogsu@mail.ru, info@gsu.am (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)</i>	392	643	1629	1992
<i>Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում ԳՊՀ-ին վերաբերող հրապարակված նյութերի քանակը</i>	72	83	93	108
<i>Լուսանկարահանված միջոցառումներ/ Լուսանկարների քանակը</i>	153/4690	174/6197	215/8977	235/12024
<i>«Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական ծրագրով եթեր հեռարձակված ԳՊՀ-ին վերաբերող տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</i>	28/88	37/95.16ը	16/55	13/47.21
<i>«Գեղամա» հեռուստաընկերությամբ «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակում եթեր հեռարձակված տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</i>	24/515	21/467.27	11/147	2/20.39

**Պ. Օ. Մուրադյան՝
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության
բաժնի վարիչ**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 2014-2015 ՈՒՍՏԱՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ Եղեռնի 100-ամյա տարելիցի միջոցառումների շրջանակում կայքի գլխավոր էջում տեղադրվել են «Հիշում եմ և պահանջում» ցուցապաստառը և համապատասխան հղումներ, մշակվել է <http://gsu.am/genocide> ենթադոմենային կայքէջը, որտեղ տեղադրվել են հայտարարված «Հիշում, հիշեցնում և պահանջում ենք» խորագրով մրցույթի պաստառների էլեկտրոնային տարբերակները, ապահովվել է առցանց քվեարկության հնարավորություն,
- ✓ Մշակվել են ԳՊՀ պաշտոնական կայքի՝ Եվրոպական միության «ՏԵՄՊՈՒՄ VERITAS ԾՐԱԳԻՐ» (Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կառուցվածքային զարգացում՝ Զալցբուրգի սկզբունքների հիման վրա <http://gsu.am/?go=veritas>) և «ՏԵՄՊՈՒՄ GOVERN ԾՐԱԳԻՐ» (Ինքնավարության և հաշվետվողականության խթանում. բարձրագույն կրթության ոլորտում Բոլոնիայի սկզբունքներին համահունչ արդյունավետ փոփոխությունների կառավարման արդի համակարգի զարգացում <http://gsu.am/?go=govern>) էջերը: Վերոնշյալ էջերում տեղադրվել են ծրագրերի մասին տեղեկատվություն, նորությունների հղումներ, վերապատրաստումների շնորհանդեսներ և այլ էլեկտրոնային ֆայլեր,
- ✓ Կազմակերպվել են Եվրոպական Միության «ՏԵՄՊՈՒՄ HEN-GEAR» ծրագրի շրջանակներում էլեկտրոնային հարթակում շրջանավարտների գրանցման վերաբերյալ սեմինար-խորհրդատվություններ, ապահովվել են առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների խորհրդատվության տրամադրման և հաշվառման գործընթացները (սպասարկվել է 600-ից ավելի ուսանող),
- ✓ «ՏԵՄՊՈՒՄ HEN-GEAR» ծրագրի շրջանակներում շրջանավարտների տվյալների բազայում շրջանավարտների տվյալների մուտքագրման գործընթացի կազմակերպման նպատակով համապատասխան համակարգը տեղադրվել է սերվերի վրա, կատարվել են սերվերի ծրագրային ապահովման և ցանցի կարգաբերման աշխատանքներ, նախապատրաստվել և անցկացվել է սեմինար-խորհրդատվություն, մշակվել է վերոնշյալ գործընթացի կազմակերպման ընթացակարգ, ապահովվել է մուտքագրված վարչական տվյալների ամբողջացման և վավերացման գործընթացը,
- ✓ Կատարվել են ԳՊՀ պաշտոնական համացանցային կայքում հայտարարությունների, լուսանկարների և էջերի օպերատիվ թարմացումներ, տեղադրվել են դասացուցակները, պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցերը, տեղադրվել տարբեր կրթաթոշակների, մրցույթների վերաբերյալ հայտարարություններ, «Գնումներ» (<http://gsu.am/?go=menu57n>) էջում մշտապես հրապարակվել են գնումների վերաբերյալ հայտարարությունները, համալրվել է լուսանկարների 5 բաժին (42 լուսանկար- <http://gsu.am/index.php?go=patkerasrah>),

- ✓ Մշակվել է ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնած «Մերօրյա հերոսը» խորագիրը կրող շարադրությունների մրցույթի առցանց քվեարկության էջ,
- ✓ Իրականացվել են ԳՊՀ համացանցային կայքի դիզայնի ձևափոխություններ, մասնավորապես, կիրառվել են հղումների, կոճակների, ընտրացանկերի, հետնապատկերների, տառաչափերի, տառաձևերի նոր ոճեր,
- ✓ Կատարվել են կայքի CMS (Content Management System)՝ ադմինիստրատորի տիրույթի բովանդակության ղեկավարման համակարգի զարգացման և կայքի SEO-ի՝ առաջխաղացում որոնողական համակարգերում և SMO-ի ուղղությամբ աշխատանքներ,
- ✓ Ապահովվել է կայքի այցելությունների ամենշաբաթյա վիճակագրության մշակումը և էլեկտրոնային տարբերակի առաքումը ԳՊՀ աշխատակազմի էլեկտրոնային փոստերով (վիճակագրության հղումը հասանելի է նաև կայքի գլխավոր էջում՝ <http://hotlog.ru/viewstat?id=2251047>),
- ✓ Ամբողջությամբ խմբագրվել է www.phone.gsu.am էլեկտրոնային տեղեկատուն, տեղադրվել են աշխատակազմի անդամների էջերի հղումները,
- ✓ Կատարվել են տեսանյութերի ֆայլերի ձևաչափերի ձևափոխություններ և տեղադրում ԳՊՀ պաշտոնական Youtube տեսահարթակում (համալրվել է 12 տեսանյութ), (<https://www.youtube.com/user/gsuadmin/featured>),
- ✓ «Facebook» սոցիալական ցանցի Գավառի պետական համալսարանի էջը շարունակաբար թարմացվել է, մշակվել և տեղադրվել են տարբեր ցուցապաստառային նկարներ, ծավալվել են բազմաբովանդակ քննարկումներ,
- ✓ Բացվել և գործածության մեջ է դրվել ԳՊՀ պաշտոնական թուիթերյան էջը,
- ✓ Իրականացվել են աշխատանքներ ԳՊՀ պաշտոնական նախկին էլեկտրոնային փոստերից Office365 –ամպային ծառայությունների անցնելու ուղղությամբ, կատարվել են տիրույթների կարգաբերումներ,
- ✓ Կազմակերպվել են ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի էլեկտրոնային էկրանին ցուցադրվող նյութերի համակարգչային մշակումներ և թարմացումներ, ապահովվել է պաշտոնական հանդիպումների, միջոցառումների համակարգչային սպասարկում,
- ✓ «Examination-GSU» համակարգի միջոցով նախապատրաստվել և կազմակերպվել են միջանկյալ և ամփոփիչ քննություններ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 10 խմբի թեստային քննություն 8 առարկաների գծով, համալրվել է առարկաների 2 նոր թեստերի բազա,
- ✓ Կազմակերպվել է 2014-2015 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի «E-Learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «E-Learning. GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկներ:
- ✓ «E-Learning. GSU» սերվերային համակարգչում թարմացվել է օպերացիոն համակարգը, կատարվել են համակարգի սերվերի անվտանգության ապահովման աշխատանքներ: Մշտապես կատարվել են «E-Learning. GSU»

- համակարգի համաժամանակյա (սինխրոն) պարբերական պատճենման աշխատանքներ,
- ✓ Կազմակերպվել է 2015թ. ուսումնական տարվա հեռակա ուսուցման ֆակուլտետում «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Տեղադրվել են բոլոր խմբերի ուսումնական պլանները, ուսանողների ցանկերը: Համակարգի միջավայրում ստեղծվել են առարկաների ուսուցման փաթեթներ: Տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկները,
 - ✓ Շարունակական բնույթ է կրել «E-Learning. GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը: Խորհրդատվությունների տրամադրման համար կիրառվել է նաև Skype (E-Learning. GSU) ծառայությունը, որի հղումը տեղադրվել է համակարգի գլխավոր էջում,
 - ✓ «E-Learning. GSU» համակարգում ստեղծվել է հետադարձ կապի նոր մոդուլ, որը թույլ է տալիս ինչպես դասախոս, այնպես էլ ուսանող օգտատերերի կողմից անմիջապես առցանց տիրույթում ուղարկել հարցումներ, առաջարկություններ և ստանալ պատասխաններ,
 - ✓ «E-Learning. GSU» համակարգի տիրույթում մշակվել է «Օգտակար ծրագրեր» (www.soft.gsu.am) էջը, որտեղ տեղադրվել են բազմազան օգտակար ծրագրեր:
 - ✓ Մշակվել է համակարգի առարկաների տիրույթների բովանդակության ստուգման և մշտադիտարկման ընթացակարգ: Պարբերաբար ստուգվել են ըստ խմբերի առարկայական տիրույթներում դասախոսությունների առկայությունը, արդյունքների մասին պարբերաբար տեղեկացվել է ամբիոններին, և տրամադրվել են հաշվետվություններ,
 - ✓ Ապահովվել է համակարգի այցելությունների ամենշաբաթյա վիճակագրության մշակումը և առաքումը ԳՊՀ աշխատակազմի պաշտոնական էլեկտրոնային փոստերով,
 - ✓ Մշակվել և տպագրվել է «E-Library. GSU» էլեկտրոնային գրադարանի մուտքային տվյալներով ցուցապաստառ, գրադարանի համալրման աշխատանքների, ամբիոնների հետ աշխատանքների հարցերի վերաբերյալ ԳՊՀ կենտրոնական գրադարանում ամբիոնների գործավարների մասնակցությամբ կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ, ընթացքի մեջ է դրվել ամբիոնների կողմից գրքերի տրամադրման գործընթացը, մշակվել են փաստաթղթերի վերջնական տարբերակները,
 - ✓ «E-Library. GSU» համակարգում մշակվել է էլեկտրոնային գրադարաններ բաժինը (http://library.gsu.am/?page_id=2325), որտեղ տեղադրվել է 635 հղում,
 - ✓ Ակտիվ աշխատանքներ են իրականացվել ինչպես հայալեզու, այնպես էլ օտարալեզու գրքերի շտեմարանների որոնման, գրքերի ներբեռնման ուղղությամբ:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում ենք իրականացնել հետևյալ աշխատանքներն՝ ըստ ոլորտների.

- ✓ ԳՊՀ բոլոր կայքերի և տեղեկատվական համակարգերի՝ www.gsu.am, www.student.gsu.am, www.career.gsu.am, www.elearning.gsu.am, www.library.gsu.am, www.phone.gsu.am սպասարկում, անգլերեն և ռուսերեն էջերի պարբերական համալրումներ, ֆեյսբուքյան և թուիթերյան էջերի, ԳՊՀ «Youtube» տեսահարթակի համալրում և սպասարկում,
- ✓ ԳՊՀ մոբայլ հավելվածի մշակում, որը հասանելի կլինի Google Play Market-ում և հնարավորություն կտա հեռախոսի միջոցով օպերատիվ տեղականալ ԳՊՀ նորություններին, հայտարարություններին, ինպես նաև մուտք գործել այլ ենթադոմենային կայքերի տիրույթներ,
- ✓ «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում),
- ✓ «E-Learning. GSU» համակարգի կատարելագործում (գլխավոր էջի նոր դիզայն, անվտանգությանն ուղղված ծրագրային նոր միջոցների ներդրում, էջերի համալրում, վեբինարների, վիրտուալ սեմինարների և թեստավորման անցկացման հնարավորությունների ուսումնասիրում և ինտեգրում, նոր ծրագրային մոդուլների մշակում և կիրառում),
- ✓ «E-Library. GSU» էլեկտրոնային գրադարանի կատարելագործում, գրքերի համալրման գործում աջակցության ցուցաբերում, գրադարանի աշխատակիցներին «Գրադարանավար» օգտատերի տիրույթի կառավարման ենթահամակարգի ուսուցում, կիրառման հարցերում խորհրդատվությունների տրամադրում,
- ✓ «Examination. GSU» համակարգով քննությունների նախապատրաստում և կազմակերպում,
- ✓ «Web» դիզայնի նորագույն լուծումներին համահունչ ԳՊՀ համացանցային www.gsu.am կայքի նոր տարբերակի նախագծում և մշակում,
- ✓ Կայքերի CMS ադմինիստրատորի բովանդակության կառավարման համակարգերի կատարելագործում:

**Թվային տվյալներ www.gsu.am կայքի այցելությունների վերաբերյալ
(ըստ HotLog.ru ծառայության)**

Ամիս	Այցելություններ (2013-2014)	Դիտումներ (2013-2014)	Այցելություններ (2014-2015)	Դիտումներ (2014-2015)
Սեպտեմբեր	7232	28285	3268	29931
Հոկտեմբեր	5456	19287	2614	20636
Նոյեմբեր	4915	16448	2361	17061
Դեկտեմբեր	4537	16188	2421	16112
Հունվար	7457	28314	3774	30217
Փետրվար	6342	20528	4054	24390
Մարտ	4739	14218	2943	16334
Ապրիլ	4565	14154	2758	15679
Մայիս	5222	18206	2748	18157
Հունիս	6551	21998	3179	21028

Հուլիս	2830	10160	1678	9057
Օգոստոս	2544	8941	1987	11854

«E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման վերաբերյալ տվյալներ

«E-Learning. GSU» տիրույթ	Ժամանակահատվածը		
	31.08.2013թ.	31.08.2014թ.	31.09.2015թ.
«Ուսանող» օգտատերի անվանական տիրույթ	99	150	156
«Դասախոս» օգտատերի անվանական տիրույթ	150	163	176
«Առարկա» ուսուցման փաթեթների տիրույթ	842	1960	2191

«E-Learning. GSU» համակարգի ուղեցույցերի դիտումներ

	(31.08.2013-31.08.2014թթ.)	(01.09.2014-31.08.2015թթ.)
Դասախոսի ուղեցույց (https://www.youtube.com/watch?v=J4HvSvXVSZM)	395	104
Ուսանողի ուղեցույց (https://www.youtube.com/watch?v=gB-tcuZvvd8)	1156	1044

«E-Learning. GSU» համակարգի այցելությունների թվի բաշխումը՝ ըստ օգտատերերի

Օգտատեր	Ժամանակահատված	
	(31.08.2013-31.08.2014թթ.)	(01.09.2014-31.08.2015թթ.)
Դասախոս, ուսանող	308419	118461
Ադմինիստրատոր	29298	5850
Ընդհանուր այցելությունների թիվը	339717	124011

*Վ. Կ. Ավետիսյան, Մ. Ա. Հովհաննիսյան՝
ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների
բաժնի ծրագրավորողներ*

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ,
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), որը հիմնադրվել է Գավառի պետական համալսարանում 2012 թվականին Եվրոպական Միության «Տեմպուս-ԱՐԱՐԱՏ» ծրագրի շրջանակներում, նպատակ ունի ապահովել բուհում իրականացվող բարձրագույն կրթական ծրագրերի համապատասխանությունը փոփոխվող աշխատաշուկայի պայմաններին: Կենտրոնն ակտիվորեն շարունակել է իր գործունեությունը նաև 2014-2015 ուսումնական տարում:

Կենտրոնի հիմնական խնդիրն է առաջարկվող կրթական որակավորումների վերաբերյալ համալսարանի և աշխատաշուկայի միջև ակտիվ երկխոսության խթանումը, շրջանավարտների կարիերայի զարգացմանն աջակցությունը:

2014-2015 ուսումնական տարում Կենտրոնի հիմնական աշխատանքներն ուղղված են եղել ուսանողների զբաղվածությունն ապահովող գործընթացների իրականացմանը, ինչը նպատակ է հետապնդում բարձրացնել ուսանողների և շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում՝ գիտելիքների շարունակական հարստացման ճանապարհով: Այս նպատակով Գավառի պետական համալսարանը պարբերաբար իրականացնում է սոցիալական գործընկերության ծրագրեր, համագործակցում գործատուների, տնտեսավարող սուբյեկտների, տարբեր ոլորտներում կայացած և հարուստ աշխատանքային փորձ ունեցող մասնագետների հետ, ովքեր տարբեր ձևաչափերով կազմակերպված հանդիպումների, սեմինար-քննարկումների, բաց դասերի, ակնարկային դասախոսությունների և վարպետության դասերի միջոցով իրենց գիտելիքներն ու սոցիալապես օգտակար փորձն են փոխանցում ԳՊՀ ուսանողներին:

Գավառի պետական համալսարանի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված համագործակցության հուշագրի հիման վրա բուհի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար Հայաստանի գործատուների հանրապետական միությանը կից գործող Գործարարության դպրոցի կողմից կազմակերպվեց սեմինար-դասընթաց կարիերայի պլանավորման վերաբերյալ: Հետաքրքիր և ուսանելի քննարկման արդյունքում բացահայտվեցին աշխատանքի ընդունվելու համար հարցազրույցին բարեխիղճ նախապատրաստվելու, պատշաճ ներկայանալու, հնչած հարցերին գրագետ պատասխանելու վերաբերյալ մանրամասներ, տրվեցին օգտակար խորհուրդներ:

Ուսանողները ծանոթացան նաև աշխատանքի տեղավորման գործակալությունների, աշխատանք առաջարկող համացանցային կայքէջերի գործունեությանը:

Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանը վարպետության դաս անցկացրեց բուհի ուսանողների համար: Պարոն Մակարյանը լսարանին ներկայացրեց Հայաստանի գործատուների հանրապետական միության հիմնադրման պատմությունը, որդեգրած առաքելությունը, գործունեության հիմնական ուղղությունները և համագործակցության ոլորտները: Դասի շրջանակում

բանախոսն անդրադարձավ աշխատանքի ընդունելիս գործատուների ներկայացրած պահանջներին, թվարկեց այն ակնկալիքները, որոնց պետք է համապատասխանի աշխատանքի ընդունվողը:

Հաշվետու ուստարում համալսարանում կազմակերպվեց նաև բաց դաս-քննարկում՝ «Ապահովագրությունը՝ 21-րդ դարի հրամայական» թեմայով, որը վարում էր, «Գարանտ Ինշուրանս» ապահովագրական ընկերության ներկայացուցիչ պարոն Մնացական Սարգսյանը:

Պարոն Սարգսյանը բովանդակալից շնորհանդեսի ձևով լսարանին ներկայացրեց ապահովագրական գործընթացի էությունը, Հայաստանի Հանրապետությունում դրա կայացման պատմությունը, ՀՀ ապահովագրական շուկայում, «Գարանտ Ինշուրանս»-ի և, առհասարակ, ապահովագրական գործակալների դերը, ապահովագրության տեսակները, օրենսդրական և կազմակերպատիրավական հիմքերը:

«Օրանժ. Արմենիա» ընկերության հետ կնքած համագործակցության հուշագրի շրջանակներում համալսարանում իրականացվում են տարաբնույթ ծրագրեր: Հաշվետու ուստարում Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ դասընթաց, «Ինչպե՞ս գրել ռեզյումե և մասնակցել հարցազրույցի» թեմայով, որը վարում էր «Օրանժ. Արմենիա» ընկերության մարդկային ռեսուրսների բաժնի հավաքագրման գծով մասնագետ Մարիաննա Բրոյանը: Դասընթացին մասնակցում էին ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի տարբեր բաժինների ուսանողներ, ովքեր բուհն ավարտելուց հետո կանգնելու են աշխատանքի ընդունվելու խնդրի առջև: Դասընթացի ընթացքում ներկայացվեցին ռեզյումե գրելու հարմար և ընդունված տարբերակները՝ կարևորելով աշխատանքի ընդունվելու գործընթացում հարցազրույցին մասնակցելու փուլը:

Կենտրոնի աշխատանքային խումբը մշակում է հարցաշարեր և հավաքագրում տվյալներ շրջանավարտներից, գործատուներից և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից՝ աշխատաշուկայի կարիքները բացահայտելու նպատակով: Գործատուների և ուսանողների շրջանում պարբերաբար անցկացվում են հարցախույզեր:

Տվյալների բազա մշակող խումբը այդ հարցաշարերի արդյունքների ամփոփման հիման վրա ձևավորում է տվյալների հենք:

Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR – Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը» ծրագրի շրջանակում ստեղծվել է շրջանավարտների տվյալների էլեկտրոնային շտեմարան, որը յուրօրինակ հարթակ է գործատուների համար՝ իրագեկվելու ԳՊՀ վերջին տարիների տարբեր մասնագիտությունների տեղի շրջանավարտների մասին և թափուր հաստիք առաջանալու դեպքում նրանց հրավիրելու համապատասխան աշխատանքի:

Այսպիսով, ձևավորվում է համալսարանի շրջանավարտ-գործատու փոխադարձ կապի նոր մշակույթ, որը պետք է արմատավորվի և տարեցտարի ընդլայնի շահագրգիռ գործատուների ու կայքում գրանցված շրջանավարտների շրջանակը: Այս պահին կայքում գրանցված է ԳՊՀ 629 շրջանավարտ:

Իրականացնելով բուհի ուսանողների և գործատուների միջև ամուր կապի ամրապնդմանն ուղղված իր առաքելությունը՝ Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ակտիվորեն

շարունակելու է իր աշխատանքները նաև հաջորդ ուսումնական տարում և այդ նպատակով մշակել է նոր գործողությունների ծրագիր՝ 2015-2016 ուսումնական տարվա համար:

*Լ. Գ. Թոռչյան՝
ԳՊՀ հանալսարան-գործատու
համագործակցության, շրջանավարտների և
կարիերայի կենտրոնի համակարգող*

**ԳՊՀ ԱՐԻԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրները առավել արդյունավետ լուծելու նպատակով շարունակում է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատողների և ուսանողների համար:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով արհեստակցական կազմակերպության և համալսարանի ռեկտորի միջև կնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիր:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական կազմակերպությունը առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների և ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհեստակցական կազմակերպությունը իր միջոցներից օգնության կարգով համալսարանի աշխատակիցներին հատկացրել է 1 միլիոն 285 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը և ուսանողական խորհուրդը դասախոսների և բուհի վարչական աշխատակազմի հետ միասին իրականացրել են ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների սոցիալ-մշակութային, ինտելեկտուալ զարգացմանը ուղղված ծրագրեր:

2015 թվականի գարնանը կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ, ինչպես նաև համալսարանի մինի ֆուտբոլի և ձեռքի գնդակի առաջնություններ:

2015 թվականին ուսանողական խորհուրդը կազմակերպել է ուսանողական ամանօրյա միջոցառումների շարք համալսարանի չորս ֆակուլտետներում:

ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը շարունակում է ակտիվ համագործակցությունը ՀՀ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

Արհեստակցական կազմակերպությունը իր կանոնադրական գործառույթներին համապատասխան այսուհետ ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերմանը, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծմանը:

***Լ. Գ. Սիրունյան՝
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության
նախագահ***

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ Ուսանողական գիտական ընկերությունը և Ուսանողական խորհուրդը, կազմակերպել են ուսանողական գիտաժողովներ, տարբեր թեմաներով քննարկումներ, սեմինարներ, գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ, սատարել են ուսումնական, հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնություններին, նպաստել ուսանողների իմացական, ստեղծագործական, կազմակերպական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, նրանց իրավունքների իրականացմանը:

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմիններն ակտիվորեն փոխգործակցել են ՀՀ այլ բուհերի ուսանողական կառույցների, դպրոցների, քոլեջների և այլ կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում բուհի Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը հանդես են եկել հետևյալ նախաձեռնություններով.

- 2014-2015 ուստարում ԳՊՀ 4 ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպվել է «ԳՊՀ ինտելեկտուալները» խորագիրը կրող մրցաշար: Մրցույթի նպատակն էր խթանել ուսանողների մոտ ընթերցասիրությունը, հետաքրքրասիրությունը, տրամաբանելու, վերլուծելու, արագ կողմնորոշվելու հմտությունները, ինչպես նաև զարգացնելու թիմային աշխատանքի ոգին:

- Դպրոց-բուհ, քոլեջ-բուհ համագործակցության ծրագրերի շրջանակում մարզի դպրոցների աշակերտների և ուսուցիչների՝ համալսարան այցելությունների ընթացքում դպրոցահասակների համար կազմակերպվել են «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղեր:

- 2014թ. սեպտեմբերի 28-ին կազմակերպվել է ցերեկույթ՝ նվիրված հայոց բիբլիական ժողովրդին և հայ անհատին: Միջոցառման ընթացքում մայր հայրենիքին ձոնվեցին բազմաթիվ հայրենասիրական երգեր ու բանաստեղծություններ, հայ մանուկներն իրենց պարային կատարումներով զարդարեցին տոնը:

- 2014թ. հոկտեմբերի 2-ին կազմակերպվել է ՈՒԳԸ անդամների ժողով՝ նվիրված ԳՊՀ ՈւԳԸ գործող կազմի աշխատանքների 4-ամյակին, որի ընթացքում ներկայացվել են 2013-2014թթ. նախաձեռնած և իրականացրած ծրագրերի արդյունքները:

2014թ. հոկտեմբերի 22-ից 25-ը Երևանի պետական համալսարանում կազմակերպվել էր «Ուսանողական ինքնակառավարման զարգացման և երիտասարդական կազմակերպությունների նորարարական աշխատանքային մեթոդները» խորագիրը կրող համաժողով՝ նվիրված բուհի հիմնադրման 95 և Ուսանողական խորհրդի հիմնադրման 20-ամյակներին: Համաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել Գավառի պետական, Երևանի պետական, Արցախի պետական համալսարանների պատվիրակներ, ինչպես նաև Ռուսաստանի, Բելոռուսի, Վրաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի բուհերի և կրթական այլ հաստատությունների ներկայացուցիչներ: Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում

էին Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը, Որակի ապահովման բաժնի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պատասխանատու Արմինե Գրիգորյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարփի Մկրտչյանը, Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության նախագահներ Ավետիք Նանագուլյանը և Նունե Միրիբյանը, ՈՒԽ անդամներ Գոռ Դավթյանը և Սուրեն Ամիրխանյանը: Համաժողովի շրջանակում երիտասարդները հյուրընկալվեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, որտեղ հանդիպում ունեցան ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանի հետ, այցելեցին Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ), որտեղ հանդիպեցին կենտրոնի տնօրեն Ռուբեն Թոփչյանի հետ և հարցադրումների միջոցով փորձեցին պարզել կրթական ոլորտում որակի ապահովման ուղղությամբ իրականացվող քաղաքականության հիմնական ուղղությունները:

• 2014թ. նոյեմբերի 5-ին և 6-ին բուհի առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպվել է ինտերակտիվ դաս, որի ընթացքում ներկայացվել է ամերիկացի պետական, քաղաքական գործիչ Աբրահամ Լինքոլնի նամակն իր որդու ուսուցչին, մեկնաբանվել են նամակում տեղ գտած բոլոր պատգամներն ու խնդրանքները:

• 2014թ. նոյեմբերի 15-ին կազմակերպվել է Ուսանողի միջազգային օրվան նվիրված ցերեկույթ, որը նպատակ ուներ ներկայացնել տոնի նախապատմությունը, անդրադառնալ Գավառի պետական համալսարանի ուսանողական կյանքի անցյալին, ներկային և ապագային:

• 2014թ. նոյեմբերի 16-ին և 21-ին Ուսանողական գիտական ընկերությանը կից գործող Ստեղծագործողների ակումբը կազմակերպել է հուշ-ցերեկույթներ՝ նվիրված անվանի դերասան Միեր Մկրտչյանին և նշանավոր հայ բանաստեղծ, քնարերգու և հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանին:

• Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում Բանասիրական ֆակուլտետի դեկանատի և Ուսանողական խորհրդի համատեղ ջանքերով կազմակերպվել է բուհի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր Արա Առաքելյանի «20-րդ դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայական վեպը. Թոմաս Ման» մենագրության շնորհանդեսը:

• 2014թ. նոյեմբերի 30-ին Ուսանողական գիտական ընկերությանը կից գործող Ստեղծագործողների ակումբի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված հայոց դարավոր պատմությանն ու անվանի հայորդիներին:

• Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է գեղեցիկ ցերեկույթ՝ «Աշնան վերջին շունչը» խորագրով: ՈւԽ-ականները բովանդակալից տեղեկություններ են հաղորդել տոների խորհուրդների և նշանակության մասին, անդրադարձել են Ողջույնի, Երախտագիտության, Հետախույզի համաշխարհային օրերին, Իտալիայում նշվող Խաղողի փառատոնին, չինական «Միջին աշնանը», Հալոուինին, Դիվալիին, Ռոշ Հաշանային և աշնանային այլ տոների, ցուցադրվել են դրանց մասին պատմող տեսանյութեր:

• 2014 թ. դեկտեմբերի 4-ին ՌԳԸ ներկայացուցիչներն այցելել են Գավառի ավագ դպրոց և ոչ միայն փոխգործակցության նոր եզրեր են նախանշել, այլև օգնել են աշակերտներին՝ մասնագիտական կողմնորոշման հարցում:

• 2014 թ. դեկտեմբերի 7-ին կազմակերպվել է կինոդիտում-քննարկում՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 26-րդ տարելիցին:

• 2015 թ. փետրվարի 22-ին ԳՊՀ ընթերցասրահում կազմակերպվել է հայոց լեզվի արդի հիմնախնդիրներին նվիրված կլոր սեղան-քննարկում:

• Ս.թ. մարտի 12-ին Ուսանողական գիտական ընկերությանը կից գործող Հայրենատերերի ակումբը հանդիպում էր կազմակերպել Արցախյան գոյամարտի մասնակից, բանաստեղծ Հովհաննես Միրիբյանի հետ:

• Ս.թ. ապրիլի 25-ին Ուսանողական գիտական ընկերությունը Հունամիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմության և Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնների հետ համատեղ կազմակերպել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

• Ս.թ. ապրիլի 26-ին կազմակերպվել է գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, որի ընթացքում ուսանողները պատմական ամփոփ ակնարկով ներկայացրել են 1870-1925-ական թվականներին հայոց երկրում տիրող իրավիճակը:

• Ս.թ. ապրիլի 30-ին կազմակերպվել է Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված հուշ-ցերեկույթ, որի ընթացքում հանդիսատեսի դատին ներկայացվեց նաև Համաստեղի «Երնեկ այն օրերուն» պատմվածքի մոտիվներով պատրաստված բեմադրությունը՝ ուսանողների կատարմամբ:

• Ս. թ. օգոստոսի 14-ից 20-ը Գավառի պետական համալսարանի թիմը մասնակցել է «Համաբուհական բանակում - 2015»-ին:

Արցախի Տող գյուղում անցկացվող բանակումին մասնակցում էին ավելի քան 100 ուսանողներ Հայաստանի, Արցախի և Ջավախքի տարբեր բուհերից և հասարակական միավորումներից: Ծրագիրը նպատակ ուներ գիտահանրամատչելի սեմինարների, ինտելեկտուալ խաղերի, ազգային երգ ու պարերի միջոցով համախմբել ՀՀ բուհերում, Ջավախքում և Արցախում սովորող երիտասարդներին, նրանց ներկայացնել հայոց պատմամշակութային արժեքները և մայր բնության անձեռակերտ կոթողները:

Գավառի պետական համալսարանից բանակումին մասնակցում էին Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Շահանե Գրիգորյանը, նույն բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գևորգ Սերոբյանը, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Վլադիմիր Ղասաբօղլյանը, Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Հովեյանը, Ֆինանսների բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Վարդան Գարեյանը:

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները 2015-2016 ուսումնական տարում ծրագրել են շարունակել իրենց գործունեությունը կրթադաստիարակչական, գիտահետազոտական, արտաքին կապերի ակտիվացման և այլ ուղղություններով:

• Ընթացիկ ուսումնական տարում ևս ԳՊՀ ուսանողական կառույցները ռեկտորատի, դեկանատների, բուհի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցելով՝ կշարունակեն զարգացման ծրագրերի իրականացումը:

• Կկազմակերպվեն ՀՀ տոներին և հիշատակի օրերին նվիրված տարաբնույթ միջոցառումներ և բաց դասեր.

• Հուշ-ցերեկույթներ՝ նվիրված հայ և օտարազգի գրողներին.

• Ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ.

- Բանավեճեր, ֆիլմերի դիտում-քննարկումներ, գրքերի քննարկումներ.
- Հայրենասիրական միջոցառումներ, հանդիպումներ արցախյան հերոսամարտի մասնակիցների, ինչպես նաև հերոսի մահով ընկած նահատակների ընտանիքի անդամների հետ.
- Ճանաչողական այցեր տարբեր գիտական կառույցներ, գիտահետազոտական ինստիտուտներ.
- Բազմաբնույթ միջոցառումներ ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների աշակերտների և քոլեջների ուսանողների մասնակցությամբ, այդ թվում՝ ինտելեկտուալ մրցույթներ:
- Դպրոց-բուհ համագործակցության ամրապնդման շրջանակում կիրականացվեն փոխայցելություններ մարզի դպրոցներ, կկազմակերպվեն մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ աշակերտների հետ:

Ա. Ս. Նանագույան՝

ԳՊՀ Ուսանողական խորհրդի նախագահ,

Ն. Ա. Միրիբյան՝

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ

**ԳՊՀ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2014-2015
ՈՒՏԱՐՎԱ ԶԱՇԿԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2015-2016 ՈՒՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՅԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ուսումնական տարում տնտեսատեխնիկական անձնակազմն իրականացրել է իր գործառույթներից բխող միջոցառումներ, ԳՊՀ ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացրել Համալսարանի տնտեսական, տեխնիկական և սպասարկման ոլորտում ԳՊՀ-ում կատարվող աշխատանքների և ծրագրերի վերաբերյալ, աջակցել է Համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի համապատասխան դրույթների կենսագործմանը, ապահովել է ներհամալսարանական պատշաճ տնտեսվարումը, սպասարկել և արդիականացրել է համալսարանի համակարգչային տեխնիկան, ստորաբաժանումներում ապահովել է ինտերնետ կապը, ինչպես նաև իրականացրել է իր կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

2014թ. սեպտեմբերին հաստատվեց Համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2014-2015 ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը:

Ըստ պլանի՝ կազմակերպվել է ավելի քան 18 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, դրանց օպերատիվ լուծման միջոցները:

Համալսարանի տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է հետևյալ բաժինների ուժերով.

- ✓ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ծրագրավորողներ, Համալսարանի կայքէջի սպասարկման և այլ մասնագետներ),
- ✓ տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցապաններ, սանտեխնիկ, բուժքույր և այլ մասնագետներ),
- ✓ տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),
- ✓ սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, համակարգվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

2014-2015 ուսումնական տարվա համար բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

Ուսումնագիտական գործընթացն անխափան ապահովելու նպատակով անհրաժեշտ նյութերով և սարքերով ապահովվել են Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները՝ համաձայն ԳՊՀ գնումների պլանի:

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել է Համալսարանի նյութատեխնիկական բազան: Սահմանված կարգով ձեռք են բերվել գրեմական պիտույքներ, ԳՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով:

Ձեռք են բերվել համակարգչային պահեստամասեր, տպիչներ, գրատախտակներ, մարզական գույք, ուսումնաօժանդակ նյութեր: Գնվել է նաև շինանյութ, տնտեսական ապրանքներ:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Ավարտվել են ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի քիմիայի նոր լաբորատորիայի հիմնանորոգման աշխատանքները, ստացվել են քիմիայի, աշխարհագրության և ֆիզիկայի լաբորատոր սարքավորումներ և նյութեր: Ներքին հարդարման աշխատանքներ են կատարվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում:

Հիմնանորոգվել է Համալսարանի հանրակացարանի առաջին հարկի միջանցքը, կառուցվել է լոգարան, ճաշարան՝ վերջինս համալրելով անհրաժեշտ կենցաղային սարքավորումներով: Հիմնանորոգվել են նաև արտասահմանյան բուհերից ԳՊՀ եկած ուսանողների համար նախատեսված սենյակներ:

ԳՊՀ բնագիտական և հումանիտար մասնագիտությունների մասնաշենքերի տանիքները մասնակի վերանորոգվել են:

ԳՊՀ տրանսպորտային միջոցներով իրականացվել են բազմաթիվ ուղերթներ, միաժամանակ, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի, գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների, ինչպես նաև արտասահմանյան հյուրերի սպասարկման և գիտաժողովների կազմակերպման համար օգտագործվել են այլ կազմակերպություններից վարձված տրանսպորտային միջոցները:

Պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով կտեղադրվեն 12 նոր տեսախցիկ, հսկիչներին կտրամադրվեն ժամանակակից տեխնիկական միջոցներ, ծառայողական հագուստ:

ԳՊՀ մասնաշենքերում ամենօրյա աշխատանքներ են կատարվել նաև սանիտարական մաքրության պահպանման առումով: Դրան օժանդակել են ձեռք բերված նոր, արդյունավետ սարքավորումները: Հետևողական աշխատանքների արդյունքում սանիտարական մաքրության վիճակը Համալսարանի մասնաշենքերում հասցվել է պատշաճ մակարդակի:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման ծավալուն աշխատանքներ:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

Համալսարանի կաթսայատան միջոցով ջեռուցվում են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել բոլոր մասնաշենքերում և կաթսայատանը: Վերակառուցվել և վերանորոգվել են ջրատաքացուցիչ կաթսաները, նորացվել են ինքնաաշխատ (ավտոմատ) հսկման համակարգերը:

Համալսարան էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ ինչպես տրանսֆորմատորային ենթակայաններում, այնպես էլ բուհի մասնաշենքերում՝ լսարաններում, լաբորատորիաներում ու միջանցքներում նորմալ լուսավորություն ապահովելու և լաբորատոր դասընթացների անցկացման համար անհրաժեշտ սարքերն աշխատանքային բնականոն վիճակում պահելու ուղղությամբ:

2015 թվականի ձմռանը կավարտվեն Համալսարանի տարածքի լուսավորությունը պատշաճ կերպով ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Համալսարանում ներքին և արտաքին որակյալ ու անխափան կապն ապահովելու նպատակով 2013 թվականի տարեվերջին «Ռոստելեկոմ» կազմակերպության կողմից ներդրվել է նոր, ժամանակակից թվային ավտոմատ հեռախոսակայան և հեռախոսացանց: Տարվա ընթացքում Համալսարանի հեռախոսակապն աշխատել է անխափան:

Համալսարանի փաստաթղթաշրջանառությունը ներկայումս կազմակերպվում է «Mulberry» ծրագրով, որն ապահովում են ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիների բաժնի աշխատակիցները: 2014 թվականից գործարկվել է նաև նամակագրության ներքին շրջանառության էլեկտրոնային համակարգը:

Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական գործունեության զարգացման հիմնական ռազմավարական ուղղություններն են՝

1. բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները բոլոր մասնաշենքերում.

➤ իրականացնել մասնաշենքերի տեխնիկական փուլային փորձաքննություն, ձևավորել հիմնանորոգման և վերակառուցման տարբերակված պլան և ապահովել դրա իրականացումը,

➤ պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ, պարբերական վերակառուցումներ և վերանորոգումներ, արդիականացում և համապատասխանեցում կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի զարգացման պահանջներին, որակյալ կրթության ապահովման հրամայականին,

➤ ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով և սարքավորումներով,

➤ ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան,

➤ շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով տեղադրել խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաներ,

2. ապահովել Համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան.

✓ գնահատել Համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների, և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ ֆակուլտետների,

✓ ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ ճյուղային զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ Համալսարանի և դոնոր կազմակերպությունների ներդրումներից,

✓ զարգացնելով և ընդլայնելով արտադրական գործընկեր կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել նոր համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջների բավարարմանը (գործնական օրինակ է ԳՊՀ Էկոլոգիայի գերազանցության կենտրոնը),

✓ նպաստել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի, ինչպես նաև առանձին գործատու կազմակերպությունների ու բարերար անհատների միջոցներով, կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան, առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման նախաձեռնություններին.

3. ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ Յամալսարանի բոլոր ֆակուլտետներում:

❖ մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր իրատեսական պլան և Յամալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով Յամալսարանի և դոնոր կազմակերպությունների, անհատների ներդրումները,

❖ ստեղծել Յամալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,

❖ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի ապագայի հարցը,

❖ օգտագործել արտաքին հնարավորությունները՝ Յամալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար,

❖ շարունակել զարգացնել Յամալսարանի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ հիմնական շեշտը դնելով համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունների վրա.

4. ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը Յամալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում.

➤ զարգացնել Յամալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործունեությունը,

➤ զարգացնել Յամալսարանի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման կազմակերպման համար,

➤ կատարելագործել ուսուցման համացանցային հենքով էլեկտրոնային համապիտանի համակարգը (E-Learning.GSU.am, E-Library.GSU.am)՝ ապահովելով ուսումնական նյութերի շարունակական համալրում և արդիականացում,

➤ կատարելագործել ուսանողական համացանցային պորտալը (students.gsu.am)՝ կցված համացանցային-ուսուցման համակարգին՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը Յամալսարանի բոլոր ուսանողների համար: Անհատականացված պորտալը կծառայի ուսանողին նաև բուհն ավարտելուց հետո,

➤ խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը Յամալսարանի հետազոտական ծրագրերում, նախագծերում և մագիստրոսական ավարտական աշխատանքներում:

Նախատեսված ռազմավարական խնդիրների լուծումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը Համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

Ա. Հ. Ապրոյան՝

ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր

**2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՍՍԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ**

01.09.2014 Թ. ՇՆՈՐՀԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Սեպտեմբերմեկյան դողանջների ներքո Գավառի պետական համալսարանում մեկնարկեց 2014-2015 ուսումնական տարին:

Ավանդույթի համաձայն՝ բուհում կազմակերպվել էր տոնական միջոցառում՝ նվիրված գիտելիքի, գրի և դպրության օրվան:

Ցերեկույթին ներկա էին Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար, Գավառի պետական համալսարանի խորհրդի նախագահ Հրանուշ Հակոբյանը, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանը, ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական համակազմի ներկայացուցիչներ, ծնողներ, հյուրեր:

Գիտելիքի օրը նշանավորվեց բուհի ուսանողների համար կազմակերպված հայրենասիրության և արիության դասով, որը վարեցին տիկին Հրանուշ Հակոբյանը և պարոն Պողոս Պողոսյանը:

**17.09.2014 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ» ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Եվրոպական Միության «Tempus IV. LaMANCHE. Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում» ծրագրի շրջանակում 2014թ. սեպտեմբերի 7-13-ը Բուլղարիայի Դոբրիչի միջազգային համալսարանական քոլեջում կազմակերպվել էր «Երիտասարդ առաջնորդների ակադեմիա» խորագրով սեմինար:

Սեմինարին մասնակցեցին ներկայացուցիչներ Ֆրանսիայից, Պորտուգալիայից, Մեծ Բրիտանիայից, Հունաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից և Հայաստանից:

Գավառի պետական համալսարանից սեմինարին մասնակցեցին ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ավետիք Նանագուլյանը և Տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսանող, ուսանողական խորհրդի փոխնախագահ Արեգ Սինանյանը:

**25.09.2014 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ԵՍ «TEMPUS. HEN-GEAR» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

2014թ. սեպտեմբերի 24-ին Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR-Բարձրագույն կրթության ցանցը՝ Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակության համար» ծրագրի շրջանակում ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հերթական աշխատանքային հանդիպումը:

Հանդիպմանը Գավառի պետական համալսարանից մասնակցում էին ԳՊՀ պրոռեկտոր, միջազգային կապերի պատասխանատու Արսեն Ապրոյանը և ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ծրագրի աշխատանքային 3.1 փաթեթի պահանջների համաձայն մշակված էլեկտրոնային հարցաթերթերի բովանդակության վերաբերյալ հարցեր:

**25.09.2014 Թ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՅԵՐՈՒՄ ՍՈՎՈՐԱԾ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎ**

Կայացավ Գավառի պետական համալսարանի միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած ուսանողների հաշվետու ժողովը:

ԳՊՀ Տնտեսագիտական և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողներ Շուշան Խաչատրյանը, Աշխեն Գևորգյանը, Լևոն Արզումանյանը և Անի Հովեյանը բովանդակալից շնորհանդեսների միջոցով ներկայացրին Իտալիայի Տուշիայի, Իսպանիայի Վալենսիայի պոլիտեխնիկական, Լեհաստանի Պոզնանի Ադամ Միսկևիչի անվան համալսարաններում 10 ամսից 2 տարի ժամկետներով ուսումնառության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, խոսեցին տվյալ բուհի պատմության, գործող ֆակուլտետների, կրթական համակարգի առանձնահատկությունների, առկա կրթական ծրագրերի, ուսումնասիրած դասընթացների, ուսումնառությանը զուգահեռ կազմակերպված պրակտիկաների, արտալսարանային միջոցառումների և մշակութային ծրագրերի մասին:

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ավետիք Նանագուլյանը և Տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսանող, ուսանողական խորհրդի փոխնախագահ Արեգ Սինանյանն անգլերեն և հայերեն լեզուներով ներկայացրին եվրոպական Միության «Tempus. LaMANCHE» ծրագրի շրջանակում 2014թ. սեպտեմբերի 7-13-ը Բուլղարիայի Դոբրիչի միջազգային համալսարանական քոլեջում կազմակերպված «Երիտասարդ առաջնորդների ակադեմիա» խորագրով սեմինարին իրենց մասնակցության արդյունքները:

Հանդիպման վերջում իսպանական կրթական համակարգի վերաբերյալ ելույթ ունեցան նաև Իսպանիայի Կոռունյայի համալսարանից Գավառի պետական համալսարանում վեցամսյա ժամկետով ուսումը շարունակելու հնարավորություն ստացած ուսանողներ Մանուել Ֆերնանդեզ Կորգոն և Ադրիան Գարսիա Նունյեզը:

25.09.2014 Թ. ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Դպրոցականների 2014 թվականի ամառային հանգստի կազմակերպման միջգերատեսչական հանձնաժողովի անունից Գավառի պետական համալսարանին հանձնվեց շնորհակալագիր՝ ս. թ. հունիսի 20-ից օգոստոսի 16-ը Հանքավանի և Ծաղկածորի ճամբարներում դպրոցականների 2014 թվականի ամառային հանգստի պետական ծրագրի իրականացմանը ցուցաբերած աջակցության և դրսևորած պատրաստակամության համար:

26.09.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS. PACT» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2014թ. սեպտեմբերի 21-24-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում կայացավ եվրոպական Միության «TEMPUS. PACT-Կովկասյան տարածաշրջանում գիտահետազոտական նախագծերի մասնակիցների գիտական ներուժի վերապատրաստում» ծրագրի երրորդ աշխատանքային փաթեթի վերաբերյալ աշխատաժողով: Այն կրում էր “Train The Trainer” խորագիրը:

Հանդիպման նպատակն էր մասնակիցներին փոխանցել դրամաշնորհային ծրագրեր նախապատրաստելու վերաբերյալ գիտելիքներ, զինել անհրաժեշտ մեթոդներով, գործիքներով, հմտություններով ու կարողություններով:

Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը ներկայացնում էին ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի

միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը և Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Անահիտ Մարգարյանը:

28.09.2014 Թ. ՄԵՆՔ ՔՈ ԶԱՎԱԿՆ ԵՆՔ, ՀԱՅԱՍՏԱՆ...

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպել էին ցերեկույթ՝ նվիրված հայոց բիբլիական ժողովրդին ու հայ անհատին:

Միջոցառման մասնակիցները ոգեկոչեցին այն հայրենասեր հայորդիներին, ովքեր իրենց անջնջելի հետքն են թողել հայոց բազմադարյա պատմության էջերում, մայր հայրենիքին ձոնվեցին բազմաթիվ հայրենասիրական երգեր ու բանաստեղծություններ, հայ մանուկները իրենց պարային կատարումներով զարդարեցին տոնը:

03.10.2014 Թ. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանին, նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանին և ՀՀ Գեղարքունիքի փոխնարգապետ Անդրանիկ Հակոբյանին:

Գավառի պետական համալսարանում պարոն նախարարը հանդիպեց բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական համակազմի ներկայացուցիչների հետ, պատասխանեց վերջիններիս հարցերին, ծավալվեց հետաքրքիր, բովանդակալից և ուսանելի քննարկում:

08.10.2014 Թ. ԲՈՒՀՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

«Ընտանիքի տարվա» կապակցությամբ անցկացվող միջոցառումների շրջանակում, Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողները՝ բուհի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանի գլխավորությամբ, ԳՊՀ ընթերցասրահում քննարկեցին հայ գրականության անվանի գրողներից Ալեքսանդր Շիրվանզադեի «Մելանիա», «Եվգինե» և Գրիգոր Տեր-Գրիգորյանի «Ամեն ինչ կամ ոչինչ», «Գարնան անձրև» ստեղծագործությունները: Իսկ Բնագիտական ֆակուլտետում «Ընտանիքի տարվա» շրջանակում կազմակերպվեց ժիրայր Անանյանի պիեսների քննարկում:

08.10.2014 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻՆ՝ «ԻՆՉՊԵՄ ԲԱՐԵՓՈՒՆԵԼ ՍԱՀՄԱՆԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

«AM» իրավաբանական ընկերության կողմից հայտարարված «Ինչպե՞ս բարեփոխել Սահմանադրությունը» ուսանողական մրցույթում, որին մասնակցեցին նաև Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները, երրորդ հաղթական հորիզոնականը զբաղեցրեց բուհի Իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Պայծառ Քոչարյանը, ում ՀՀ Սահմանադրական դատարանի անունից պատվոգիր և մրցանակ հանձնեց ՍԴ նախագահի ավագ խորհրդական Անահիտ Մանասյանը:

09.10.2014 Թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

2014թ. հոկտեմբերի 8-ին Երևանի «Անի Պլազա» հյուրանոցի դահլիճում կազմակերպվել էր հանդիպում Հայ կրթական հիմնարկության ներկայացուցիչների, բարերարների և հիմնարկության կրթաթոշակային ծրագրում ընդգրկված ուսանողների հետ: Հանդիպմանը ներկա էր նաև Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը: Բուհի հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի, գիտական խորհրդի, պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի, ուսանողների և ծնողական համայնքի անունից խորին երախտագիտություն հայտնեց Հայ կրթական հիմնարկության խորհրդին՝ ծավալած ազգանվեր գործունեության համար, և հանձնեց շնորհակալագիր:

10.10.2014 թ. ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԹԻՄԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ Ջինիշյան հիշատակի հիմնադրամի «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակում գործող Ուսանողական ծրագրային թիմի հաշվետու հանդիպումը ԳՊՀ դասախոսների և ուսանողների հետ:

ՈւԾԹ անդամները բովանդակալից շնորհանդեսներով և հետաքրքիր տեսանյութերով ներկայացրին 2013-2014 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը՝ անդրադառնալով հաշվետու տարում իրականացրած դրամաշնորհային ծրագրերին, նախաձեռնություններին, կազմակերպած սեմինար-քննարկումներին, գազաթնաժողովներին, խոսեցին ծրագրերի ելքային արդյունքների, գրանցած հաջողությունների և ձեռքբերումների մասին, պատասխանեցին ներկաներին հետաքրքրող հարցերին և իրենց շնորհակալությունը հայտնեցին բոլոր գործընկերներին և աջակիցներին:

10.10.2014 թ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Գավառի քաղաքային գրադարանում կազմակերպվել էր ցերեկույթ՝ նվիրված Արշիլ Գորկու ծննդյան 110-ամյակին:

Միջոցառմանը մասնակցում էր Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը՝ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը, ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի՝ միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, Իսպանիայի Կորունայի համալսարանից Գավառի պետական համալսարանում ուսումը շարունակելու հնարավորություն ստացած ուսանողներ Մանուել Ֆերնանդեզ Կորգոն և Ադրիան Գարսիա Նունյեզը:

Միջոցառման մասնակիցները հանդիսականներին բովանդակալից շնորհանդեսի ձևով ներկայացրին գեղանկարչության հայազգի վարպետի կյանքը և գործունեությունը, մեջբերեցին գուսան Շերամի բանաստեղծություններից, կատարեցին դրանց հիման վրա գրված երգեր:

11.10.2014 թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

2014թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում կայացավ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի Արտասահմանյան

գրականության ամբիոնի վարիչ Արա Առաքելյանի ղոկտորական ատենախոսության պաշտպանությունը:

Ատենախոսության թեման էր «20-րդ դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայական վեպը (ժանրային առանձնահատկությունները և պոետիկայի պրոբլեմները Թոմաս Մանի վեպերում)»:

Բանասիրական գիտությունների ղոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության պաշտպանությունը զուգորդվեց գիտական հարցուպատասխանով, թեմային համապատասխան քննարկումներով:

11.10.2014 Թ. ՄԵՂԱԼ՝ ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

2014թ. հոկտեմբերի 5-ից 10-ը Բուլղարիայի Հանրապետության Ռուսե քաղաքի Անգել Կանչևի անվան համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. New LeAGUe- Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի երրորդ աշխատաժողովը:

Աշխատաժողովին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և բուհի ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

Աշխատաժողովի ընթացքում ծրագրին մասնակից բուհերը ներկայացրին կատարած աշխատանքները՝ ըստ համապատասխան աշխատանքային փաթեթների:

Հաշվի առնելով 2010 թվականից Ռուսեի համալսարանի հետ Գավառի պետական համալսարանի գործակցության, ուսանողների և դասախոսների ակադեմիական փոխանակման հաջողված փորձը՝ Ռուսեի համալսարանի ռեկտոր Հրիստո Բելոնը Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանին շնորհեց մեղավ՝ արդյունավետ համագործակցության համար:

17.10.2014 Թ. ԱԿՏԻՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 16-ին Գավառի «Քյավառ» հեռուստաընկերության հանդիսությունների սրահում կայացավ Ջինիշյան հիշատակի հիմնադրամի «Ակտիվ երիտասարդները՝ հանուն փոփոխության» ծրագրի տարեկան հաշվետու հանդիպումը:

Հանդիպմանը ներկա էին Գավառի պետական համալսարանի ուսանողներ, ծրագրի մասնակիցներ, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ շահառուներ:

Աշխատանքային թիմի անդամները բովանդակալից շնորհանդեսներով և հետաքրքիր տեսանյութերով ներկայացրին 2013-2014 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը՝ անդրադառնալով հաշվետու տարում իրականացրած նախաձեռնություններին, կազմակերպած սեմինար-քննարկումներին, խոսեցին հետազոտությունների, բացահայտած խնդիրների, դրանց լուծման հնարավոր ուղիների, ծրագրերի ելքային արդյունքների, ձեռքբերումների և հետագա անելիքների մասին:

18.10.2014 Թ. ԲԵՐՔԻ ՏՈՆ ԳՎՎԱՌՈՒՄ

«Վորլդ Վիժն. Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի, «Գեղարեգ» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Քյավառ» հեռուստաընկերության համատեղ ջանքերով Գավառում կազմակերպվեց Բերքի փառատոն:

Գավառի պետական համալսարանի, Գավառի մանկատան, Գավառի ավագ դպրոցի, Գավառի հարակից համայնքների հիմնական դպրոցների, «Վորլդ Վիժն. Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի, Ջինիշյան հիշատակի

հիմնադրամի և այլ հաստատությունների պատվիրակները հատուկ նախատեսված տաղավարներում ներկայացրին հայոց ազգային խոհանոցը, մասնավորապես Նոր Բայազետի ավանդական և ոչ ավանդական ուտեստները, մշակաբույսերը, բանջարեղենները և մրգերը:

Գավառի պետական համալսարանը ևս մասնակցում էր փառատոնին՝ ներկայանալով իր յուրօրինակ «բերք ու բարիքով»: ԳՊՀ տաղավարում ցուցադրվեցին ավելի քան 20 տարվա ընթացքում բուհի դասախոսական անձնակազմի ջանքերով տպագրված մենագրություններ, դասագրքեր, գիտական հոդվածների ժողովածուներ, ԳՊՀ ամենամյա հաշվետվություններ և տեղեկատվական թերթիկներ, ստացած պատվոգրերը, գավաթները, մեդալները, հուշամեդալները, հավաստագրերը և այլ պարգևներ:

Միջոցառման ավարտին Գավառի պետական համալսարանին շնորհվեց շնորհակալագիր և հուշանվեր:

19.10.2014 Թ. «ՌՈՒՄԱՑ ԼԵՁՎԻ ՕՐ» ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

2014թ. հոկտեմբերի 15-ից մեկնարկեց Ռուսաստանի Դաշնության «Ռուսաց լեզու» նպատակային ծրագրի շրջանակում, Ռոսստրուդնիչեստվոյի և Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան համատեղ ջանքերով իրականացվող և արդեն ավանդական դարձած «Ռուսաց լեզվի օրեր» նախաձեռնությունը, որը 2014 թվականին նվիրված էր ռուս գրողներ Միխայիլ Լերմոնտովի ծննդյան 200 և Աննա Ախմատովայի ծննդյան 125-ամյակներին:

Նախաձեռնության շրջանակում ս.թ. հոկտեմբերի 19-ին Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Մոսկվայի Մ. Շոլոխովի անվան պետական հումանիտար համալսարանի դասախոս Օլգա Անդրեևնա Դավիդովային և Ռուսական նոր համալսարանի Ռուսաց լեզու և հրատարակչական գործ ամբիոնի վարիչ Մարինա Յուրևնա Անտրոպովային, ովքեր բուհի բանասիրական ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար կարդացին դասախոսություններ՝ «Ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում» և «Ակտիվ գործընթացները ռուսաց լեզվում (բառակազմական ասպեկտով)» թեմաներով:

19.10.2014 Թ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՐԵԿԵՑԻԿ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔ

Եվրոպական Միության «Tempus. LaMANCHE» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի՝ ծրագրի աշխատանքային խմբի անդամներ, Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստ Լիլիթ Թոռչյանը և Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարփի Մկրտչյանը ներկայացրին շնորհանդես-հաշվետվություններ՝ կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնման և կառավարման վերաբերյալ:

Շնորհանդեսի միջոցով ներկայացվեցին ծրագրի նպատակը, պայմանները, կրթական համակարգի բաղադրիչները, պահանջները, ժամանակակից կրթության մարտահրավերները, կրթական քաղաքականության հեռանկարային ուղղությունները, փոփոխությունների համար անհրաժեշտ նախապայմանները և այլն:

22.10.2014 Թ. ՄԵԿՆԱՐԿԵՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

2014թ. հոկտեմբերի 22-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեցին «Ռուսանողական ինքնակառավարման զարգացման և երիտասարդական կազմակերպությունների նորարարական

աշխատանքային մեթոդները» խորագիրը կրող համաժողովի աշխատանքները նվիրված բուհի հիմնադրման 95 և Ուսանողական խորհրդի հիմնադրման 20-ամյակներին:

Համաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել Գավառի պետական, Երևանի պետական, Արցախի պետական համալսարանների պատվիրակներ, ինչպես նաև Ռուսաստանի, Բելոռուսի, Վրաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի բուհերի և կրթական այլ հաստատությունների ներկայացուցիչներ:

Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում էին Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը, Որակի ապահովման բաժնի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պատասխանատու Արմինե Գրիգորյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարփի Մկրտչյանը, Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության նախագահներ Ավետիք Նանագուլյանը և Նունե Միրիբյանը, ՌԻԽ անդամներ Գոռ Դավթյանը և Սուրեն Ամիրխանյանը:

23.10.2014 Թ. ԳՊՀ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼՆԵՐԸ

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությունը՝ Պատմություն բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհիներ Աննա Սաղաթեյանի և Անի Օհանյանի նախաձեռնությամբ, Հրաչյա Աճառյանի անվան լսարանում կազմակերպել էր «ԳՊՀ ինտելեկտուալները» խորագիրը կրող մրցույթը:

Մրցույթի նպատակն էր խթանել ուսանողների մոտ ընթերցասիրությունը, հետաքրքրասիրությունը, տրամաբանելու, վերլուծելու, արագ կողմնորոշվելու հմտությունները, ինչպես նաև զարգացնելու թիմային աշխատանքի ոգին:

23.10.2014 Թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՈՐԻՋՈՆՆԵՐ

2014թ. հոկտեմբերի 22-ին մեկնարկած Ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների երևանյան համաժողովի աշխատանքային երկրորդ օրվա օրակարգի համաձայն՝ հայ և արտասահմանցի երիտասարդները հյուրընկալվեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, որտեղ հանդիպում ունեցան ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանի հետ:

Երիտասարդներն այցելեցին նաև Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ), որտեղ հանդիպեցին կենտրոնի տնօրեն Ռուբեն Թոփչյանի հետ և հարցադրումների միջոցով փորձեցին պարզել կրթական ոլորտում որակի ապահովման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը:

24.10.2014 Թ. ԸՆՏԱՆԻՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է

Ընտանիքի տարվան ընդառաջ, Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կազմակերպվեց հետաքրքիր սեմինար-քննարկում՝ «Հոգեբանական առանձնահատկությունները նախաամուսնական շրջանում և ամուսնական զույգի ընտրության մեխանիզմները» թեմայով, որը նպատակ ուներ երիտասարդներին ծանոթացնել ամուսնաընտանեկան փոխհարաբերությունների հոգեբանական կողմին, ներընտանեկան սոցիալական դերերին:

24.10.2014 Թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿԸ՝ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԼԱ ԿՈՌՈՒՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դեկան Մարտին Ավագյանը 2014 թվականի սեպտեմբերի 12-ից հոկտեմբերի 12-ն ընկած

Ժամանակահատվածում Եվրոպական Միության «Erasmus Mundus. Tempo» դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում եղել է Իսպանիայի Թագավորության Լա Կոռունայի համալսարանում, որտեղ հանդես է եկել դասախոսություններով, ինչպես նաև կատարել է գիտահետազոտական աշխատանք և ձեռք բերել համաձայնություն՝ «Գիտական հորիզոն 2020»-ի շրջանակում Իսպանիայի Լա Կոռունայի համալսարանի հետ համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

25.10.2014 Թ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՍԱՆ ԱՌԱՐԿԱ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար «Ինֆորմացիայի տեսության և ինֆորմացիայի պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով դասախոսություն կարդաց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի Ինֆորմացիայի տեսության և իմացական մոդելների բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Հարությունյանը:

30.10.2014 Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ԻՄՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՍԵԼՈՆԱ ՔԱՂԱՔ

2014թ. հոկտեմբերի 25-29-ը Իսպանիայի Բարսելոնայի Պոմպեու Ֆարա համալսարանում տեղի ունեցավ «Tempus. PACT» ծրագրի երրորդ աշխատաժողովը, որին մասնակցեց ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:
Աշխատաժողովի օրակարգում ընդգրկված էին հարցեր ծրագրի ընթացիկ հաշվետվությունների, սեպտեմբեր ամսին Վրաստանում կազմակերպված վերապատրաստման արդյունքների, ծրագրի համացանցային պաշտոնական կայքէջի վերաբերյալ:

01.11.2014 Թ. ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում հյուրընկալվել էին Գավառի Գեորգի Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի աշակերտները:
Հանդիպումը կազմակերպվել էր «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Գոհար Բաղեյանի նախաձեռնությամբ:
Նախապես մշակված հատուկ ծրագրի համաձայն՝ աշակերտների համար դասախոսություններ կարդացին բուհի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հենրիկ Մելիքյանը և ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Խուրշուդյանը՝ անդրադառնալով կրթական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաներին, համակարգչային ցանցերի նախագծման, ստեղծման և շահագործման հիմնահարցերին:

01.11.2014 Թ. ՆԱՐԵԿԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՑ ԴԱՍ

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի և դեկանատի համատեղ ջանքերով կազմակերպվեց բաց դաս՝ նվիրված նարեկագիտությանը:

Հանդիպմանը ներկա էին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը, ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ և ուսանողներ: Միջոցառման մասնակիցները ներկայացրին Վերածննդի հայ գրականության հիմնադիր Գրիգոր Նարեկացու կյանքն ու գրական գործունեությունը՝ մասնավորապես շեշտը դնելով անգերազանց ստեղծագործության՝ «Մատյան ողբերգության» պոեմի վրա: ԳՊՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նորայր Ղազարյանը ներկայացրեց դիտարկումներ միստիկ գրողի ծննդյան տարեթվի, «Մատյան ողբերգության» պոեմում արծարծված գաղափարների, մարդու և մարդկության փրկության, մեղքի մեկնաբանման վերաբերյալ և պատասխանեց ուսանողների կողմից հղված հարցերին:

02.11.2014 Թ. ՏՈՒՐԻՉՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԺԱՍԱՆԱԿԻ ՊԱՅԱՆՁ

2014թ. հոկտեմբերի 27-31-ը Ուկրաինայի Օդեսա քաղաքում «Սևծովյան տարածաշրջանի տուրիզմի ուղիներ» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ հանդիպում՝ «Տուրիզմը՝ որպես սևծովյան տարածաշրջանի զարգացման հիմնական գործոն» խորագրով:

Հայաստանից ծրագրին անդամակցում է միայն Գավառի պետական համալսարանը, որը հիշյալ աշխատաժողովին գործուղել էր ԳՊՀ միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանին և Բնագիտական ֆակուլտետի աշխատակից Մարինե Հովհաննիսյանին:

Աշխատանքային հանդիպման ընթացքում հյուրընկալող երկրի ծրագրային թիմի անդամները ներկայացրին Ուկրաինայի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր էկոլոգիական և տնտեսական նկարագիրը, որին հաջորդեցին մասնակից կազմակերպությունների, այդ թվում՝ ԳՊՀ պատվիրակների ելույթները: Հունաստանից հրավիրված փորձագետների կողմից կատարվեցին վերլուծություններ, հնչեցին առաջարկություններ:

05.11.2014 Թ. ԻՆՏԵՐՎԿՏԻՎ ՂԱՍ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը հանդես էր եկել նախաձեռնությամբ՝ բուհի առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպելու ինտերակտիվ դաս:

Նախաձեռնության շրջանակում ԳՊՀ ՌԻԳԸ նախագահ, Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի ուսանողուհի Նունե Միրիբյանը Տնտեսագիտական և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողներին ներկայացրեց ամերիկացի պետական, քաղաքական գործիչ Աբրահամ Լինքոլնի նամակն իր որդու ուսուցչին, ընթերցեց և հերթով մեկնաբանեց նամակում տեղ գտած բոլոր պատգամներն ու խնդրանքները:

Նամակի ընթերցումից հետո ուսանողներին հանձնարարվեց ներկայացնել սեփական դիտարկումները ինչպես անձի ամենակարևոր առաջին տասը բարոյական արժեքների, այնպես էլ, որպես ԳՊՀ ուսանող՝ ունեցած սպասելիքների և ակնկալիքների մասին:

05.11.2014 Թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS. ARMENQA» ԾՐԱԳՐԻ 2-ՐԴ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

2014թ. հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 2-ը Գերմանիայի Հանրապետության Օսնաբրուկի բարձրագույն դպրոց-կիրառական գիտությունների համալսարանում տեղի ունեցավ «TEMPUS. ARMENQA» ծրագրի երկրորդ աշխատաժողովը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցում էր պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին ծրագրի աշխատանքային փաթեթներում նախատեսված գործողությունների, դրանց կատարման ժամանակացույցի, աշխատանքային խմբերի և առկա խնդիրների վերաբերյալ հարցեր:

07.11.2014 թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՍ «TEMPUS. VERITAS» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2014թ. նոյեմբերի 2-ից 6-ը Գերմանիայի Հայդելբերգ քաղաքում Եվրոպական Միության «TEMPUS. VERITAS» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ հանդիպում՝ «Փաստերի բացահայտում և ճանապարհային քարտեզի մշակում» թեմայով:

Հանդիպմանը ներկա էին գործընկեր բուհերի ներկայացուցիչներ Հայաստանից, Ավստրիայից, Շվեդիայից, Իսպանիայից, Գերմանիայից և Մեծ Բրիտանիայից: Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում էին ԳՊՀ միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

Աշխատանքային հանդիպման ընթացքում Գերմանիայի Հայդելբերգ, Ավստրիայի Բաֆ Սպա և Իսպանիայի համալսարանների պատվիրակները ներկայացրին կրթական երրորդ աստիճանի վերաբերյալ իրենց փորձը և պատասխանեցին ներկաների հարցերին:

08.11.2014 թ. ԵՍ «TEMPUS-ATHENA» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2014թ. նոյեմբերի 2-6-ը Պորտուգալիայի Հանրապետության Կոիմբրայի համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «TEMPUS. ATHENA - Կայուն և ինքնավար բարձրագույն կրթական համակարգերի խթանումը Արևելյան հարևանության տարածքում» ծրագրի երկրորդ աշխատաժողովը, որին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

Աշխատաժողովին համակողմանի քննարկման առարկա դարձան բուհերի ֆինանսական կայունության և ինքնավարության ապահովման հարցերը:

09.11.2014 թ. ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՀԱՄԱՁԱՅՆ...

Գավառի պետական համալսարանի մեծ դահլիճում կայացավ արդեն ավանդույթ դարձած հերթական հանդիպումը բուհի ռեկտորատի և 2014թ. ուսումնական տարում ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետ ընդունված ուսանողների ու նրանց ծնողների միջև:

Այդօրինակ հավաքները նպատակ ունեն առաջին կուրսեցիներին ներկայացնելու բուհում ներդրված կրեդիտային համակարգի բաղադրիչները, էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգի սկզբունքները, ԳՊՀ էլեկտրոնային «E-Library. GSU» գրադարանից օգտվելու հիմնական պահանջները, ուսանողների կարգապահական կանոնները, հանրապետական և միջազգային համագործակցության ծրագրերը և այլն:

12.11.2014 թ. ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՍՐՑՈՒՅԹՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ

Կայացավ Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպված ներֆակուլտետային ինտելեկտուալ խաղերի հերթական փուլը:

Մրցեցին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, Հաշվապահական հաշվառում և Ֆինանսներ բաժինների ուսանողները՝ երեք խմբով:

Հնչեցին տրամաբանական տարաբնույթ հարցեր, ինչպես նաև տեսա- և կատակ հարցեր, որոնց թիմային ակտիվ և միասնական քննարկման արդյունքում տրվեցին հետաքրքիր պատասխաններ:

13.11.2014 Թ. ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանին, ով վարպետության դաս վարեց բուհի ուսանողների համար:

Պարոն Մակարյանը լսարանին ներկայացրեց ՀԳՀՄ հիմնադրման պատմությունը, որդեգրած առաքելությունը, գործունեության հիմնական ուղղությունները և համագործակցության ոլորտները, անդրադարձավ աշխատանքի ընդունելիս գործատուների ներկայացրած պահանջներին, թվարկեց այն ակնկալիքները, որոնց պետք է համապատասխանի աշխատանքի ընդունվողը, աշխատաշուկայի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման պատասխանատու գործում մեծապես կարևորեց բուհերի դերակատարությունը:

14.11.2014 Թ. ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՎ ՊԱՅԱՆՁՈՒՄ ԵՆՔ...

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի առաջին կուրսի ուսանողները՝ դեկանատի աջակցությամբ, կազմակերպել էին հուշ-ցերեկույթ՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ:

Ուսանողները հետադարձ հայացք օգեցին դեպի անցյալ, երբ հայոց ազգին հարկադրել էին բռնել Դեր-Չորի ճանապարհին ու գնալ դեպի անհայտություն: Առաջին կուրսեցիները պատմական հակիրճ ակնարկով ներկայացրին 1880-1925-ական թվականների դեպքերը, անդրադարձան Օսմանյան Թուրքիայի վարած հայատյաց քաղաքականությանը, խոնարհվեցին հայոց անմեղ նահատակների հիշատակի առջև:

15.11.2014 Թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվել էր Ուսանողի միջազգային օրվան նվիրված միջոցառում:

Ուսանողները դահլիճին ներկայացրին տոնի նախապատմությունը, խորհրդանշական կերպով անդրադարձան Գավառի պետական համալսարանի ուսանողական կյանքի անցյալին, ներկային և ապագային:

Միջոցառման շրջանակում կայացավ նաև արդեն ավանդույթ դարձան «ԳՊՀ լավագույն կուրս» և «ԳՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունները:

ԳՊՀ յուրաքանչյուր ֆակուլտետից մեկ ուսանող և մեկ կուրս ճանաչվեցին լավագույնն ու արժանացան հավաստագրերի:

16.11.2014 Թ. ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄՅԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերությանը կից գործող Ստեղծագործողների ակումբի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ՝ նվիրված անվանի դերասան Միեր Մկրտչյանին:

Ուսանողները խորին երախտագիտությամբ և մեծ սիրով ներկայացրին տաղանդաշատ հայորդու կյանքի պատմությունը՝ անդրադառնալով նրա մանկությանը, պատանեկությանն ու հանճարեղ դերասանի կայացման փառահեղ ուղուն:

Ցուցադրվեցին հատվածներ ֆիլմերից, որոնցում արվեստագետը կերտել է անկրկնելի և անմոռաց կերպարներ:

18.11.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՏԵՄՊՈՒՄ. GOVERN» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2014թ. նոյեմբերի 12-16-ը Եվրոպական Միության «ՏԵՄՊՈՒՄ. GOVERN - Ինքնավարության և հաշվետվողականության խթանում բարձրագույն կրթության ոլորտում. Բոլոնիայի սկզբունքներին համահունչ՝ արդյունավետ փոփոխությունների կառավարման արդի համակարգի զարգացում» ծրագրի շրջանակում Իտալիայի Պալերմոյի համալսարանում տեղի ունեցավ վերապատրաստում:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, Որակի ապահովման բաժնի մասնագետներ Անուշ Ոսկանյանը և Արմինե Գրիգորյանը:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին ուսանողակետորոն ուսուցման մեթոդաբանությունը, մոտեցումները, ինչպես նաև տեղեկատվական տարբեր տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները՝ ըստ տարիքային խմբերի, ներկայացվեց ուսումնական գործընթացում գործատուների, ներքին և արտաքին այլ շահառուների ներգրավման եվրոպական փորձը:

21.11.2014 Թ. ՆԵՐԿԱՅԱՑԿԵՑԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2014թ. հոկտեմբերի 1-ից 31-ը Իտալիայի Կա-Ֆոսկայի համալսարանում անցած վերապատրաստման և «Ռուսաց լեզու» առարկայի դասավանդման ընթացքի վերաբերյալ հաշվետվությամբ հանդես եկավ ԳՊՀ Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ռուզաննա Սարգսյանը:

ԳՊՀ դասախոսը բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական անձնակազմի անդամներին ներկայացրեց իտալական կրթական համակարգը, համեմատական զուգահեռներ անցկացրեց հայկական և իտալական նախադպրոցական, միջնակարգ, բուհական և հետբուհական կրթական աստիճանների միջև, նշեց դրանց առավելությունները և բացթողումները, անդրադարձավ Կա-Ֆոսկայի համալսարանի կրթական ծրագրերին, գնահատման համակարգին, գործող ֆակուլտետներին, առարկայացանկին, թվարկեց ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում կիրառված ուսուցման ժամանակակից, փոխգործուն մեթոդները, որոնց միջոցով ուսանողներին ներկայացվել են դասախոսություններ ռուսերենի բառակազմության և քերականության վերաբերյալ:

21.11.2014 Թ. ԱՇՆԱՆ ԵՎ ՄԻՐՈՒ ԵՐԳՉԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ

Բուհի Բանասիրական ֆակուլտետի ՈՒԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ՝ նվիրված նշանավոր հայ բանաստեղծ, քնարերգու և հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանին:

Ցերեկույթի մասնակիցները հոգեպարար երաժշտության հնչյունների ներքո ներկայացրին Տերյանի կյանքն ու գրական գործունեությունը, մեջբերումներ կատարեցին աշնան երգչի բանաստեղծական ժողովածուներից:

22.11.2014 Թ. ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում Բանասիրական ֆակուլտետի դեկանատի և Ուսանողական խորհրդի համատեղ ջանքերով կազմակերպվել էր բուհի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր Արա Առաքելյանի «20-րդ դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայական վեպը. Թոմաս Ման» մենագրության շնորհանդեսը:

28.11.2014 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS. PICASA» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Իտալիայի Հանրապետության Ջենովա քաղաքում տեղի ունեցավ Եվրոպական Միության «TEMPUS.PICASA-Բուհերի միջազգայնացման խթանում Արևելյան Հարևանության երկրներում մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրի երրորդ աշխատաժողովը:

Քննարկվեցին համալսարանների միջազգայնացման գործընթացին ներքին և արտաքին շահառուների ներգրավման ձևերն ու միջոցները:

Աշխատաժողովին մասնակցեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը, ովքեր ներկայացրին Գավառի պետական համալսարանի փորձը, նշեցին, որ բուհն իրականացնում է 15 միջազգային ծրագիր և այդ ծրագրերի շրջանակում համագործակցում եվրոպական բուհերի հետ: Նրանք կարևորեցին միջազգայնացման դերը թե՛ բուհերի կրթական ծրագրերի արդիականացման, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների զարգացման ու բազմազանեցման, ուսանողների և դասախոսների փոխանակման, թե՛ համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացման տեսանկյուններից:

30.11.2014 Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԲԻԼԻՍԻ ՔԱՂԱՔՈՒՄ

2014թ. նոյեմբերի 26-ից 29-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում տեղի ունեցավ Եվրոպական Միության «Սևծովյան տարածաշրջանի զբոսաշրջության ուղիներ» (Tourism Paths of the Black Sea Region Project) ծրագրի հերթական աշխատանքային հանդիպումը՝ «Սևծովյան տարածաշրջանում գյուղական տուրիզմի զարգացումը՝ որպես արտագաղթի կանխման հիմնական միջոց» թեմայով:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, ԳՊՀ աշխատակիցներ Սիրանուշ Խաչատրյանը և Մարինե Հովհաննիսյանը:

Նրանք ներկայացրին շնորհանդես՝ Գեղարքունիքի մարզում գյուղական տուրիզմի առկա վիճակի, ոլորտի զարգացմանը նպաստող կրթական միջավայրի ձևավորման, նրա զարգացման ուղղությունների վերաբերյալ:

30.11.2014 Թ. ԱՇՆԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՈՒՆՉԸ...

Գավառի պետական համալսարանը «ցտեսություն» ասաց տարվա ամենագունագեղ եղանակին՝ ոսկեթերթ Աշնանը:

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել էր գեղեցիկ ցերեկույթ՝ «Աշնան վերջին շունչը» խորագրով:

Ուխ-ականները բովանդակալից ձևով տեղեկություններ հաղորդեցին տոների խորհուրդների և նշանակության մասին, անդրադարձան Ողջույնի, Երախտագիտության, Հետախույզի համաշխարհային օրերին, Իտալիայում նշվող Խաղողի փառատոնին, չինական «Միջին աշնանը», Հալոուինին, Դիվալիին, Ռոշ Հաշանային և աշնանային այլ տոների, ցուցադրվեցին դրանց մասին պատմող տեսանյութեր:

30.11.2014 թ. ՈՎ ՀԱ՛Յ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՃԱՄՓՈ՛ՐԴ ԴԱՐԵՐԻ...

Հաղթական քոչարիի հնչյունների ներքո մեկնարկեց ԳՊՀ ՈՒԳԸ-ին կից գործող Ստեղծագործողների ակումբի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումը՝ նվիրված հայոց դարավոր պատմությանն ու անվանի հայորդիներին:

ԳՊՀ ուսանողները, տոգորված հայրենասիրական անպարտ ոգով, ի լուր ամենքի հայտարարեցին, որ դարերի ճամփորդ Հայաստանը Հայկն ու Տիգրան Մեծն է, Սասունցի Դավիթն ու Վարդան զորավարը, Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին ու Դավիթ Անհաղթը, Նարեկացին ու Սայաթ-Նովան, Կոմիտասն ու Մարտիրոս Սարյանը, Իսրայել Օրին ու Րաֆֆին, Հովհաննես Թումանյանն ու Վահան Տերյանը, Վիկտոր Համբարձումյանն ու Արամ Խաչատրյանը, Հայաստանը հայ երեխան է ու պատանին, գյուղացին ու գիտնականը:

04.12.2014 թ. ԳՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ - ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

2014թ. նոյեմբերի 28-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գերազանցիկ շրջանավարտ, նույն ֆակուլտետի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Նինա Վալերիի Պոտապովան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեման էր «Ն. Ն. Բերբերովայի ստեղծագործությունների գեղարվեստական ինքնատիպությունը»:

04.12.2014 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոց-բուհ կապի ամրապնդման ծրագրի շրջանակում ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախագահ, Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Նունե Միրիբյանը, Տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող Բաբկեն Ղարաբաղցյանը, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի երրորդ կուրսի ուսանողուհի Անի Հովեյանը, ՀՄՖ Պատմություն բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհի Աննա Սաղաթեյանը եղան Գավառի ավագ դպրոցում:

Հանդիպման ընթացքում ԳՊՀ պատվիրակները տասնմեկերորդ և տասներկուերորդ դասարանների աշակերտներին ներկայացրին ԳՊՀ հիմնադրման պատմությունը, գործունեության ռազմավարական ուղղությունները, համագործակցության միջազգային շրջանակները, բուհի ձեռքբերումները, գործող կրթաթոշակային ծրագրերը, ուսանողական կյանքի հետաքրքիր դրվագներ, պատասխանեցին աշակերտներին հուզող հարցերին:

05.12.2014 թ. ԵՎՐԱՍԻՎԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի, Տնտեսագետների ակումբի և դեկանատի համատեղ ջանքերով կազմակերպվել էր սեմինար-քննարկում՝ նվիրված Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հեռանկարներին:

ԳՊՀ ուսանողները ներկայացրին և՛ Եվրոպական Միության, և՛ Մաքսային Միության գործունեության շրջանակները, գործառույթները, Մաքսային Միությանն անդամագրվելու առավելությունները, կատարվեցին վերլուծություններ:

05.12.2014 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻՆԵՐԸ ՀԱՆՂԵՍ ԵԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ

2014թ. դեկտեմբերի 4-5-ը Երևանի պետական համալսարանի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ հոբելյանական գիտաժողով՝ նվիրված ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին:

Գիտաժողովին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի շրջանավարտ Մարիամ Կողպեցյանը և Աշխարհագրություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Գոհար Հովհաննիսյանը, ովքեր հանդես եկան «ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի համալիր վերլուծություն» և «ՀՀ Գեղարքունիքի մարզի երկրաբանագեոմորֆոլոգիական բնական հուշարձանները» թեմաներով զեկուցումներով:

06.12.2014 Թ. ՀՐԱՆՏ ՀԱԿՈՒՅԱՆԸ ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴ

Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Երևանի պետական համալսարանի կրոնի պատմության և տեսության ամբիոնի հիմնադիր վարիչ, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 87-ամյակին ընդառաջ լույս տեսավ «Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ» գիրքը, որը մի լուսավոր հուշապատում է իր հայրենիքին ու մայր ժողովրդին անմնացորդ սիրով և նվիրումով ծառայած բացառիկ հայրորդու մասին:

06.12.2014 Թ. ԲԱՑ ՂԱՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆԻՆ

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողների և ԳՊՀ դասախոս Վարսիկ Ներսիսյանի նախաձեռնությամբ «Արևմտահայերեն» դասընթացի շրջանակում կազմակերպվել էր արևմտահայերենին նվիրված բաց դաս:

Ապագա բանասերները թեմայի շրջանակում անդրադարձան արևմտահայերենի առանձնահատկություններին, միայն այդ լեզվին բնորոշ բառապաշարին, համեմատական զուգահեռներ անցկացրին արևմտահայերենի և արևելահայերենի միջև՝ ներկայացնելով մի շարք բառերի արևմտահայերեն և արևելահայերեն համարժեքները:

07.12.2014 Թ. ՄԵԿ ՕՐ, ՈՐ ԶԳՎԵՑ 26 ՏԱՐԻ...

ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր կինոդիտում-քննարկում՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 26-րդ տարելիցին:

Բնագիտական ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Ջուլիետա Հարությունյանը լսարանին ներկայացրեց Հայաստանի ֆիզիկա-աշխարհագրական դիրքի, սեյսմոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվություն: Ցուցադրվեց 1988 թվականի դեկտեմբերի 7-ին հայ ժողովրդին պատուհասած աղետալի երկրաշարժի և դրան հաջորդող փրկարարարական աշխատանքների մասին պատմող կարճամետրաժ ֆիլմ: Ներկայացվեցին երկրաշարժի ժամանակ պաշտպանվելու անհրաժեշտ քայլերը:

07.12.2014 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻՆ՝ ՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ 2-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԻ ԴԻՊԼՈՄԱԿԻՐ

2014թ. նոյեմբերի 19-23-ը Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքում Ռուսաց լեզու և գրականություն դասավանդողների միջազգային և ռուսաստանյան ասոցիացիաների (ԾԸԿՀԽ, ՀԿԿՀԽ) նախաձեռնությամբ անցկացվեց Ռուսաց լեզվի և գրականության համաշխարհային 2-րդ փառատոնի եզրափակիչ փուլը, որին հնարավորություն էր ստացել մասնակցելու նաև ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի Ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողուհի Մարինե Պողոսյանը:

Արդեն բուհում կազմակերպված շնորհանդես-հաշվետվության շրջանակում ԳՊՀ ուսանողուհին պրոֆեսորադասախոսական անձնակազմին և ուսանողներին ներկայացրեց փառատոնին իր մասնակցության արդյունքները:

13.12.2014 թ. ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴՑԻՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների միջև իրականացվող համագործակցության ծրագրի շրջանակում բուհ այցելեցին Գավառի Գեորգի Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտները՝ դպրոցի «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Գոհար Բաղեյանի գլխավորությամբ:

Նախապես մշակված օրակարգի համաձայն՝ աշակերտները հանդիպեցին Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի, պրոռեկտոր Նելլի Կուտուբյանի, բնագիտական ֆակուլտետի ղեկան Մարտին Ավագյանի, ռեկտորատի մյուս անդամների հետ, լսեցին Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հենրիկ Մելիքյանի դասախոսությունը:

Աշակերտները մասնակցեցին Բնագիտական ֆակուլտետում կազմակերպված ուսանողական գիտաժողովին, որը նվիրված էր ինֆորմատիկայի արդի հիմնախնդիրներին:

13.12.2014 թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի ուսանողների, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի համատեղ ջանքերով կազմակերպել էր ուսանողական գիտաժողով՝ նվիրված ինֆորմատիկայի արդի հիմնախնդիրներին:

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները ներկայացրին զեկուցումներ՝ հաշվողական համակարգերի դասակարգման, զարգացման միտումների, մնացորդային դասերի համակարգի, վիրտուալ իրականության վերաբերյալ, պատասխանեցին ներկաների հարցերին:

13.12.2014 թ. ՄԵԿ ՕՐ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանում հյուրընկալվել էին Մեծ Մասրիկի դպրոցի աշակերտները և մանկավարժական կոլեկտիվի ներկայացուցիչներ՝ դպրոցի տնօրեն պարոն Ատոմ Հակոբյանի գլխավորությամբ:

ԳՊՀ հյուրերը հանդիպեցին բուհի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, դիտեցին բուհի մասին պատմող տեսաֆիլմ:

Հանդիպմանը հաջորդեց ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպված ինտելեկտուալ խաղը՝ աշակերտների մասնակցությամբ, որի ընթացքում վերջիններս ցուցաբերեցին մեծ ակտիվություն և թիմային աշխատանքի կարողություն:

14.12.2014 թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՆՐԷՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆԸ

Գավառի պետական համալսարանի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է ներֆակուլտետային գիտաժողով՝ նվիրված տնտեսության մեջ մանրէների կիրառությանը:

16.12.2014 թ. ԵՄ «TEMPUS. LAMANCHE» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

2014թ. դեկտեմբերի 15-16-ը Երևան քաղաքում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. LAMANCHE» ծրագրի հերթական աշխատանքային հանդիպումը:

Հանդիպման նպատակն էր ամփոփել ծրագրի շրջանակում հայաստանյան բուհերի կողմից կատարված աշխատանքների հերթական փուլը և քննարկել ծրագրի զարգացման հետագա ուղիները:

Գավառի պետական համալսարանից հանդիպմանը մասնակցում էին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և Ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

Ներկայացվեց ԳՊՀ շնորհանդես-հաշվետվությունը՝ ԵՄ «TEMPUS.LAMANCHE» ծրագրի շրջանակում բուհի իրականացրած աշխատանքների վերաբերյալ:

18.12.2014 թ. ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ԷՐԱՍՍՈՒՄ +» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գավառի պետական համալսարանի ռեկտորատի ընդլայնված նիստի շրջանակում ԳՊՀ միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը ներկայացրեց շնորհանդես Եվրոպական Միության «Էրասմուս +» ծրագրի վերաբերյալ:

Սիրանուշ Խաչատրյանը ԳՊՀ աշխատակազմին և ուսանողներին ներկայացրեց ծրագրի էությունը, պլանավորվող երեք հիմնական գործողությունների համապատասխան բաղադրատարրերը, ծրագրային և գործընկեր երկրներին, անդրադարձավ ծրագրային ուղղություններին, ակադեմիական փոխանակման ծրագրերով սովորելու և գիտահետազոտական աշխատանք կատարելու նպատակով ուսանողներին և դասախոսներին տրամադրվող կրթաթոշակներին, կրեդիտային շարժունությանը, համատեղ և կառուցվածքային ծրագրերի տարածաշրջանային առաջնահերթություններին և այլն:

20.12.2014 թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳՊՀ 17-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Մեկնարկեցին Գավառի պետական համալսարանի 17-րդ ամենամյա գիտաժողովի աշխատանքները:

Լիազումար նիստում Ռուզաննա Հակոբյանը ներկայացրեց «Ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն» թեմայով զեկուցում՝ նախապատրաստված իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանի հետ համահեղինակությամբ:

Լիազումար նիստի ավարտից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին հինգ մասնագիտական բաժանմունքներում:

**25.12.2014 Թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ԲՈՒՀԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ**

2014թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի կողմից հրապարակվեցին բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի չափանիշների համաձայն՝ բուհերի դասակարգման արդյունքները:

Գավառի պետական համալսարանը բուհերի ազգային վարկանիշավորման համակարգում զբաղեցրեց երկրորդ հորիզոնականը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանից հետո, երկու կրթական աստիճանում՝ բակալավրիատում և մագիստրատուրայում, երեք և ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի շարքում:

**20.01.2015 Թ. ԵՍ «TEMPUS. HEN-GEAR» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱՎԱՆ
ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցավ «TEMPUS. HEN-GEAR» ծրագրի հերթական աշխատաժողովը, որին մասնակցեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

Աշխատաժողովի ընթացքում ելույթ ունեցան մասնակից բուհերի ռեկտորները, ովքեր կարևորեցին ծրագրի նպատակները, հայաստանյան համալսարանների շրջանավարտների զբաղվածության ապահովմանը միտված արդի կառուցակարգերի մշակումն ու գործարկումը, ՀՀ-ում «ALMA-LAUREA» իտալական միջհամալսարանական կոնսորցիումի փորձի ուսումնասիրումն ու տեղայնացումը:

27.01.2015 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒԻՅԻՆ՝ ՀԱՂԹԱՎԱՆ ԵՌՅԱՎՈՒՄ

2015թ. հունվարի 26-ին կազմակերպված գեղեցիկ տոնակատարության շրջանակում ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակն անփոփեց իր գործունեության 6-ամյակը:

Միջոցառման ընթացքում հայտարարվեցին «Ինչպես խթանել ֆինանսական միջնորդությունը ՀՀ-ում» թեմայով «Լավագույն ուսանողական աշխատանք» մրցույթի հաղթողների անունները:

Հաղթական եռյակում էր նաև Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ալիտա Ղարաբաղյանը, ով արժանացավ պատվոգրի և դրամական խրախուսանքի:

27.01.2015 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՍ «TEMPUS. VERITAS» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎՈՒՄ

2015թ. հունվարի 26-ին և 27-ին Երևանի Վ. Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «Tempus. Veritas» (Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ներդրում՝ հիմնված զալցբուրգյան սկզբունքների վրա) ծրագրի հերթական աշխատաժողովը, որին Գավառի պետական համալսարանից մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ԳՊՀ Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Զաքոյանը, Բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Մարինե Բաղայանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին Հայաստանի Հանրապետությունում հետբուհական կրթական ծրագրերի, թեկնածուական և դոկտորական աշխատանքների իրականացման որակի ապահովման չափանիշները, կիրառվող գործիքները:

29.01.2015 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «TEMPUS-PACT» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2015թ. հունվարի 25-28-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում տեղի ունեցավ «TEMPUS-PACT» ծրագրի հերթական` 4-րդ աշխատանքային հանդիպումը:

Հանդիպումը կազմակերպվել էր Վրաստանի Իլիայի պետական համալսարանում և նպատակ ուներ հստակեցնելու երիտասարդ մասնագետների վերապատրաստման ու գիտական հետազոտությունների ծրագրի վերաբերյալ հարցեր:

07.02.2015 Թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS. New LeAGUe» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

2015թ. փետրվարի 2-ից 5-ը Դանիայի տեխնիկական համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. New LeAGUe» ծրագրի հերթական աշխատաժողովը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

Օրակարգի համաձայն` ներկայացվեց Եվրոպական Միության «Erasmus+» ծրագիրը, քննարկվեցին ծրագրի նպատակները, բաղադրիչները, մասնակցության պայմաններն ու ժամկետները:

Որպես մարդու իրավունքներին նվիրված լրացուցիչ կրթական ծրագիր` քննարկվեց Գավառի պետական համալսարանի կողմից իրականացված «Իրավունք բոլորի համար» դասընթացը:

07.02.2015 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Ամփոփվեցին «Լավագույն ուսանող-2014» հանրապետական մրցույթի արդյունքները:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 38 ուսանողներ համապատասխան անվանակարգերում ճանաչվեցին լավագույնը և արժանացան մրցանակների:

Լավագույն ուսանողների շարքում էին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի ուսանողուհի Էմմա Լազյանը և Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի մագիստրատուրայի ուսանող Մարգար Հովհաննիսյանը, ովքեր մագիստրոսի կրթական ծրագրով հումանիտար և բնագիտական ոլորտների անվանակարգերում զբաղեցրին 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը:

13.02.2015 Թ. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՒԻ ՀԵՏՔԵՐՈՎ. . .

2015թ. փետրվարի 12-ին Սևանի Վազգենյան դպրանոցում կազմակերպվել էր գեղեցիկ տոնակատարություն՝ նվիրված Սուրբ Վարդանանց զորավարների և 1036 վկաների հիշատակության օրվան:

Միջոցառումը կազմակերպվել էր դպրանոցի, Սևանի համայնքային մշակույթի կենտրոնի և «Սևանի երիտասարդական ակումբ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և նպատակ ունեւ հանրության շրջանում բարձրացնելու ազգային տոների և հիշատակության օրերի դերը:

Տոնակատարությանը մասնակցեց Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը՝ ի դեմս Հունանիտար մասնագիտությունների և Տնտեսագիտական ֆակուլտետների ղեկաններ Հալետ Ղաջոյանի և Սամվել Ամիրխանյանի, ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախագահ, Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Նունե Միրիբյանի, ՈւԳԸ անդամներ, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Աննա Սաղաթեյանի և Հեռակա ուսուցման ֆակուլտետի Կենսաբանություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Թագուհի Սահակյանի:

13.02.2015 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS.ATHENA» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2015թ. փետրվարի 10-ից 12-ը Նիդերլանդների Թագավորության Ամստերդամի համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS.ATHENA» ծրագրի հերթական աշխատաժողովը՝ «Մարդկային ռեսուրսների կառավարում և անձնակազմի կարողությունների զարգացում» խորագրով:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

Ներկայացվեց Ամստերդամի համալսարանի, ինչպես նաև գործընկեր այլ կազմակերպությունների փորձը մարդկային ռեսուրսների ներգրավման, արդյունավետ գործող անձնակազմի ձևավորման, աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացման, հաստատության բոլոր ստորաբաժանումների փոխհամաձայնեցված աշխատանքի ապահովման, անձնակազմի գործունեության իրավական, տնտեսատեխնիկական, ֆինանսական, կազմակերպական հիմքերի ապահովման ոլորտներում:

14.02.2015 Թ. ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Կայացավ Գավառի պետական համալսարանի կառավարման բարձրագույն մարմնի՝ խորհրդի նիստը:

Խորհուրդը լսեց ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2013-2014 ուսումնական տարվա գործունեության և 2014 թվականի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ:

Խորհրդի անդամների ուշադրությանը ներկայացվեց ԳՊՀ 2014 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը, որին հաջորդեց ԳՊՀ 2015 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ քննարկումը:

Լսելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավական կարգավիճակը փոխելու մասին հարցը՝ ԳՊՀ խորհուրդը որոշեց հավանություն տալ բուհի կարգավիճակի վերակազմակերպման և համալսարանին հիմնադրամի կարգավիճակ շնորհելու առաջարկին: Որոշվեց դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ միջնորդելով սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրամի վերակազմավորելու հարցը:

20.02.2015 Թ. ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կայացավ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղ-մրցաշարի հերթական փուլը Սարուխան գյուղի դպրոցների՝ Ս. Մակարյանի անվան թիվ 1, Մ. Խոստեղյանի անվան թիվ 2 և Հ. Խաչատրյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցների աշակերտական խմբերի միջև:

Դպրոցականները մեծ ոգևորությամբ պատասխանեցին հնչած հարցերին և ցուցադրված տեսահարցերին:

Բուհական օրն ավարտվեց ԳՊՀ Վարչամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանում շրջայցով:

22.02.2015 Թ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՎԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Գավառի պետական համալսարանի ընթերցասրահում, ԳՊՀ գրադարանի և Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր կլոր սեղան-քննարկում՝ նվիրված հայոց լեզվի արդի հիմնախնդիրներին:

Քննարկումը կազմակերպվել էր Մայրենի լեզվի միջազգային տոնի կապակցությամբ:

Քննարկման էին դրված ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից հրատարակված «Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ. Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր» հոդվածների ժողովածուում առաջ քաշված լեզվական հիմնախնդիրները:

01.03.2015 Թ. ԳՊՀ-ՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ԼԵՁՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում կայացավ մայրենի լեզվի արդի հիմնախնդիրներին նվիրված կլոր սեղան-քննարկման հերթական փուլը:

Քննարկման ընթացքում ուսանողներն անդրադարձան ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից հրատարակված «Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ. Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր» հոդվածների ժողովածուում առաջ քաշված լեզվական հիմնախնդիրներին, մասնավորապես՝ հայերենի ուսուցմանը, լեզվագործածությանը, հեռուստատեսային լեզվին:

04.03.2015 Թ. ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՄԻՋՔՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2015թ. մարտի 3-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 5 ուսանողներ մասնակցեցին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում կազմակերպված միջբուհական ուսանողական գիտաժողովին:

Գիտաժողովը կրում էր «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության արդի հիմնախնդիրները» խորագիրը և նվիրված էր քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրվան:

Գիտաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել ՀՀ 13 բարձրագույն ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանի

ուսանողներ, ովքեր լիազուսար ցուցանում են հետո ոլորտում առկա խնդիրները քննարկեցին «Կառավարում և տնտեսագիտություն», «Տեխնոլոգիաներ» և «Գիտամեթոդական հիմնախնդիրներ» խորագրերով ենթաբաժանմունքներում:

04.03.2015 Թ. ԳԴՅ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

2015թ. փետրվարի 25-ին Գավառի պետական համալսարանի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ռուզաննա Սարգսյանը Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում գործող ԲՈՅ-ի 059 «Սլավոնական լեզուներ» մասնագիտական խորհուրդում (ԺԳ.00.02 Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ռուսաց լեզու) մասնագիտությամբ) հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեման էր «Փոխակարգումը որպես Հայաստանում ռուս բանասիրության ֆակուլտետների ուսանողների լեզվական և փոխհատուցային կոմպետենցիաների ձևավորման միջոց»:

06.03.2015 Թ. ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂԵՐ ՔՈԼԵՋՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կայացավ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» մրցաշարի հերթական խաղը՝ Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի և Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսանողական թիմերի միջև:

Ինտելեկտուալ մրցույթին ուսանողները մեծ ոգևորությամբ պատասխանեցին հնչած հարցերին և ցուցադրված տեսահարցերին: Թե՛ս պայքարի արդյունքում հաղթեց Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսանողական թիմը:

07.03.2015 Թ. ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿՈՒՆԵՆԱ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

2015թ. մարտի 6-7-ը Երևանի պետական համալսարանի Ծաղկաձորի ուսումնասիրողական բազայում կայացավ բուհերում լրատվական ծառայությունների և հանրային կապերի հիմնախնդիրներին նվիրված սեմինար-քննարկում:

Սեմինարը կազմակերպվել էր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ ու կրում էր «Հանրային կապերը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում» խորագիրը:

Սեմինարի նպատակն էր քննարկել բուհերի կողմից հանրության հետ տարվող աշխատանքների հիմնական ուղղությունները և վերհանել ոլորտում առկա խնդիրները՝ առաջարկելով լուծման համապատասխան ուղիներ:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի, Գավառի, Հայաստանի պետական տնտեսագիտական, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական, Հայաստանի պետական ճարտարագիտական, Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային, Հայաստանի ազգային ազդարային, Հայաստանի ֆրանսիական, Հայաստանի ամերիկյան, Ռուս-Հայկական (սլավոնական), Վանաձորի պետական համալսարանների մամլո պատասխանատուներ:

Օրակարգի համաձայն՝ ՀՀ բուհերի պատվիրակները ներկայացրին իրենց համալսարաններում լրատվության տարածման գործիքակազմը, կարևորեցին 21-րդ դարում բուհի պատշաճ ներկայացվածությունը համացանցային հարթակում և

քննարկեցին բուհերի PR ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացման կառուցակարգեր:

Սեմինարի արդյունքները ներկայացվեցին ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների խորհրդին, որի կողմից բուհերի PR պատասխանատուների մշակած գործողությունների ծրագիրն արժանացավ հավանության:

12.03.2015 Թ. ԱՅՍՕՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴՆ Է ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԸ

Կայացավ ԳՊՀ ՈԻԳԸ-ին կից գործող Հայրենատերերի ակումբի անդրանիկ հանդիպումը:

Ակումբի առաջին հյուրն էր բանաստեղծ, Արցախյան գոյամարտի մասնակից Հովհաննես Միրիբյանը, ով ներկաների հետ կիսվեց Արցախյան ազատամարտի թանկ հուշերով, պատմեց դրվագներ իր մարտական ուղուց՝ նշելով, որ այսօրվա երիտասարդն է հայրենիքի պաշտպանը:

14.03.2015 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS. RETHINK» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2015թ. մարտի 9-12-ը Ուկրաինայի Հանրապետության Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում տեղի ունեցավ Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK» ծրագրի հերթական աշխատաժողովը, որին Գավառի պետական համալսարանից մասնակցեց պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

Աշխատաժողովի ընթացքում համագործակից համալսարանների պատվիրակները ներկայացրին հաշվետվություններ բուհերի գործունեության մասին:

14.03.2015 Թ. ՇՆՈՐՀԱՎՈՐ ԶԵՐ ՏՈՆԸ, ՍԻՐԵԼԻ՝ ՄԱՅՐԵՐ. . .

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված կանանց, մայրության և գեղեցկության միամսյակին:

Ուսանողները ներկայացրին տոնի նախապատմությունը, պատմեցին տարբեր երկրներում տոնը նշելու հետաքրքիր սովորույթների մասին: Միջոցառման ընթացքում ուսանողները հուզիչ բանաստեղծություններ և երգեր ձոնեցին կանանց և աղջիկներին: Հնչեցին գնահատանքի, խոնարհումի խոսքեր՝ ուղղված հայ մայրերին:

15.03.2015 Թ. ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է. . .

Կայացավ Եվրոպական Միության ուսանողների ակադեմիական փոխանակման ծրագրով Իսպանիայից Գավառի պետական համալսարանում վեցամսյա ժամկետով ուսումը շարունակելու հնարավորություն ստացած ուսանողներ Մանուել Ֆերնանդեզ Կորգոյի և Ադրիան Գարսիա Նունյեզի հաշվետու հանդիպումը բուհի պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի ներկայացուցիչների հետ:

Իսպանիայի Կոռունայի համալսարանի ուսանողները լսարանի ուշադրությանը ներկայացրին Գավառի պետական համալսարանում իրենց ուսումնառության վերաբերյալ շնորհանդես-հաշվետվություն՝ անդրադառնալով յուրաքանչյուր առարկայի շրջանակում ձեռք բերված ելքային կրթական արդյունքներին, կատարած հետազոտություններին, Հայաստանի ողջ տարածքով կազմակերպված գիտաճանաչողական էքսկուրսիաներին, խորին երախտագիտություն հայտնեցին դասախոսներին և բոլոր համալսարանականներին՝ իրենց փոխանցած գիտելիքների, ջերմ ընդունելության, ամիսներ շարունակ ցուցաբերած ծնողական ուշադրության, հոգատար վերաբերմունքի համար:

Լսարանը մեծ խանդավառությամբ դիտեց Կոռունայի համալսարանի պատվիրակների պատրաստած տեսանյութը՝ վերջին վեց ամիսների ընթացքում Հայաստանում ուսումնառության և կատարած ճանապարհորդությունների վերաբերյալ:

**19.03.2015 Թ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում կայացավ բուհի աշխատակազմի և ուսանողների հանդիպումը Հայաստանում գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (Deutscher Akademischer Austausch Dienst - DAAD) ներկայացուցիչների հետ:

Հանդիպման նպատակը համալսարանականներին գերմանիայում կրթության և գիտական հետազոտության հնարավորությունների, կրթաթոշակային ծրագրերի ներկայացումն էր:

**21.03.2015 Թ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ERASMUS MUNDUS. HERMES»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանը 2012 թվականից անդամակցում է Եվրոպական Միության «ERASMUS MUNDUS. HERMES» միջազգային ծրագրին, որի շրջանակում բուհի ուսանողները և դասախոսները հնարավորություն են ստանում կրթությունը շարունակելու և գիտական հետազոտություն կատարելու եվրոպական առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2015-2016 ուսումնական տարվա համար Գավառի պետական համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանը (Գերմանիայի Ֆրանկֆուրտի Վիադրինա համալսարան), դասախոսներ Գայանե Միրիբյանը (Գերմանիայի Ֆրանկֆուրտի Վիադրինա համալսարան), Ռիտա Սիդելնիկովան (Բուլղարիայի Սոֆիայի համալսարան), Գայանե Սարգսյանը (Իտալիայի Վենետիկի համալսարան), ուսանողներ Մարիամ Սուքիասյանը (Իտալիայի Սալերնոյի համալսարան), Նարեկ Արևշատյանը (Իտալիայի Սալերնոյի համալսարան), Նորիկ Համբարձումյան (Իտալիայի Սալերնոյի համալսարան), Տիգրան Չանդոյանը (Բուլղարիայի Սոֆիայի համալսարան), Արտեմ Հակոբյանը (Գերմանիայի Ֆրանկֆուրտի Վիադրինա համալսարան) հետազոտական – մանկավարժական աշխատանք են կատարելու և սովորելու են եվրոպական բուհերում:

Հավելենք, որ Հունաստանի Աթենքի համալսարանի բակալավրիատի ուսանողուհի Ֆանուրիա Կոնստանտինի (բանասեր) իրենց կրթությունը կշարունակի Գավառի պետական համալսարանում:

21.03.2015 Թ. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ՀԱՅ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, գրականագետ, ՀՀ Գրողների միության Գեղարքունիքի մարզային կենտրոնի ղեկավար Նորայր Ղազարյանի և բանաիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվել էր գրական ցերեկույթ՝ մվիրված Հայոց եղեռնի 100-ամյա տարելիցին:

Նորայր Ղազարյանը հանդիսականներին ներկայացրեց հայ գրականության մեջ թեմայի արտացոլման ամփոփ նկարագիրը, անդրադարձավ Հայաստանում և Սփյուռքում ստեղծագործած հեղինակների՝ եղեռնի թեմայով գրված բանաստեղծություններին և երկերին:

26.03.2015 Թ. ՈՒՍՈՒՄՆԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Եվրոպական Միության «Twinning – Հայաստանի բարձրագույն կրթության հզորացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նատակով» ծրագրի փորձագետներ, մշտական խորհրդատու Կարլ Յոլմին և Արևելյան Ֆինլանդիայի համալսարանի ավագ համակարգող, կարճաժամկետ խորհրդատու Թոմի Հափանիմին:

Այցի նպատակն էր բուհի աշխատակազմի հետ քննարկելու ուսումնառության վերջնարդյունքների մշակման և գնահատման սկզբունքները, մասնագիտական կրթական ծրագրերի ակնկալվող ելքային արդյունքների ձեռքբերման կառուցակարգերը:

26.03.2015 Թ. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՈՒՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գավառի պետական համալսարանում քննարկվեցին զբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ Գեղարքունիքի մարզում, ներկայացվեցին «Գավառ տուր ինֆո» կենտրոնի գործունեության նպատակներն ու հիմնական ուղղությունները:

«Գավառ տուր ինֆո» կենտրոնի համակարգողներ, ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրոսներ Շուշան Խաչատրյանը և Վարդան Գարեյանը բովանդակալից շնորհանդեսի ձևով ներկայացրին մարզում կենտրոնի իրականացրած ծրագրերը, անդրադարձան տարածաշրջանում զբոսաշրջության ոլորտի հիմնախնդիրներին և զարգացման հնարավորություններին, կարևորեցին ՀՀ Գեղարքունիքի մարզում առկա պատմամշակութային արժեքները, բնական հուշարձանները զբոսաշրջիկներին պատշաճ ներկայացնելու և համապատասխան ենթակառուցվածքներ ապահովելու անհրաժեշտությունը:

27.03.2015 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՄ «TEMPUS. ARARAT» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Գերմանիայի Կոբլենց քաղաքի Լանդաու համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. ARARAT» ծրագրի հերթական աշխատաժողովը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին բուհի Ակադեմիական քաղաքականության վարչության միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը և ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ավետիք Նանագուլյանը:

Աշխատանքային եռօրյակի ընթացքում համագործակից բուհերի, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանի պատվիրակները ներկայացրին շնորհանդեսներ՝ անդրադառնալով համալսարան-գործատու համագործակցության մեթոդներին ու կառուցակարգերին, այդ ոլորտում ուսանողների ներգրավվածության ապահովման խնդիրներին:

27.03.2015 Թ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Բուհում հյուրընկալվել էին Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական և դասախոսական կազմի ներկայացուցիչները՝ քոլեջի տնօրեն պարոն Գագիկ Գևորգյանի գլխավորությամբ, և Սևանի պետական քոլեջի ներկայացուցիչները՝ փոխտնօրեն պարոն Սլավիկ Խաչատրյանի ուղեկցությամբ:

Այցի շրջանակում ԳՊՀ հյուրերը եղան բուհի՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանում, հանդիպեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, շրջեցին բուհի գրադարանում, ընթերցասրահում, համակարգչային ռեսուրս

կենտրոնում, ինչին հաջորդեց արդեն ավանդույթ դարձած «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղը:

01.04.2015 Թ. ԿԱՐԻԵՐԻԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Գավառի պետական համալսարանի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված համագործակցության հուշագրի հիման վրա բուհի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար ՀԳՀՄ-ին կից գործող Գործարարության դպրոցի կողմից կազմակերպվեց սեմինար-դասընթաց կարիերայի պլանավորման վերաբերյալ:

Սեմինարի ընթացքում ՀԳՀՄ Գործարարության դպրոցի դասընթացավար Զարեհ Մակարյանը ուսանողներին ներկայացրեց CV և Resume հասկացությունների էությունն ու բովանդակային տարբերությունները, անդրադարձավ CV-ի բաղադրիչ բաժիններին, դրանցում տեղեկատվության հստակ ձևակերպման անհրաժեշտությանը, մատնանշեց այն կարևոր կետերը, որոնք պետք է պահպանել CV-ին կազմելիս:

Հետաքրքիր և ուսանելի քննարկման արդյունքում բացահայտվեցին աշխատանքի ընդունվելու համար հարցազրույցին բարեխիղճ նախապատրաստվելու, պատշաճ ներկայանալու, հնչած հարցերին գրագետ պատասխանելու վերաբերյալ մանրամասներ, տրվեցին օգտակար խորհուրդներ:

Դասընթացի ավարտին մասնակիցները ստացան հավաստագրեր:

03.04.2015 Թ. ԵՄ «TEMPUS. RETHINK» ԾՐԱԳԻՐԸ Ի ՆՊԱՍՏ ԳՊՀ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ

ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը բուհի գիտական խորհրդին ներկայացրեց ս. թ. մարտի 9-ից 12-ը Ուկրաինայի Հանրապետության Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում տեղի ունեցած Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK – Կրթության բարեփոխում՝ գիտելիքների միջազգային փոխանակման միջոցով» ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ մանրամասներ, նշվեց, որ աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հարցեր կրկնակի դիպլոմների շնորհմամբ կրթական ծրագրի իրականացման վերաբերյալ:

03.04.2015 Թ. ԿԱՏԱՐՎԱԾՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդում քննարկվեցին բնագիտական ֆակուլտետում կատարված աշխատանքները, և հստակեցվեցին անելիքները:

Գերմանիայի Կոբլենց քաղաքի Լանդաու համալսարանում կայացած Եվրոպական Միության «TEMPUS. ARARAT» ծրագրի հերթական աշխատաժողովին ԳՊՀ մասնակցության մասին զեկուցեցին բուհի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը և ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ավետիք Նանագուլյանը: Ներկայացվեցին աշխատանքային եռօրյակի ընթացքում քննարկված հարցերը՝ համալսարան-գործատու համագործակցության ոլորտում ուսանողների ներգրավվածության ապահովման խնդիրների վերաբերյալ:

04.04.2015 Թ. «ԳՐԱԳԵՏ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ»

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի, Ուսանողական ծրագրային թիմի համատեղ ջանքերով և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի

Ֆինանսավորմամբ բուհի ուսանողների համար իրականացվել է «Գրագետ փաստաթղթաշրջանառություն» ծրագիրը:

Ծրագրի շրջանակում կազմակերպվեց տեղեկատվական դասընթաց, որը վարեցին Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի գիտական խորհրդի անդամներ Դավիթ Կարապետյանը և Հայկազ Շահնազարյանը:

05.04.2015 Թ. Քրիստոս յարեալ ի մեռելոց,

Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի. . .

Գավառի պետական համալսարանում ձևավորված գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ բուհի ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները Սուրբ Հարության տոնը և տոնին նախորդող ճրագալույցը նշեցին ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ: Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցված պատարագից հետո երիտասարդները շտապեցին համալսարան՝ կազմակերպելու Սուրբ Ջատկի տոնակատարություն՝ հավատարիմ մնալով զատկական բոլոր ավանդույթներին:

08.04.2015 Թ. ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐԸ՝ ՄԵՐՕՐՅԱ ՀԵՐՈՍ

Ամփոփվեցին ԳՊՀ ՈՒԳԸ-ին կից գործող Հայրենատերերի ակումբի նախաձեռնությամբ և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Մերօրյա հերոսը» խորագրով շարադրությունների մրցույթի արդյունքները:

Ուսանողական ծրագրային թիմի աշխատանքները համակարգող Վարդուհի Բադալյանը նշեց, որ մրցույթի հաղթողներն ընտրվել են համացանցային քվեարկության և մասնագիտական հանձնաժողովի քննարկումների արդյունքում:

Որպես մերօրյա հերոս ներկայացվեց Հայոց բանակի զինվորը: Ընթացվեցին լավագույն աշխատանքներից հատվածներ: Հաղթողները ստացան պատվոգրեր և նվերներ, իսկ բոլոր մասնակիցները՝ շնորհակալագրեր:

09.04.2015 Թ. ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆՔ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ

ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՈՒՂՂՎԱԾ ՈՃԻՐ

Գավառի պետական համալսարանի ուսանողների համար դասախոսություն կարդաց ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Նորթրիջ համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս, ծագումով մուսալեռցի Վահրամ Շամասյանը, ով դատապարտեց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն և վաղեմության ժամկետ չունեցող հանցագործություն:

10.04.2015 Թ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դեկանատի և Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր արդի աշխարհում տեղեկատվական համակարգերի ունեցած դերակատարությանը նվիրված գիտաժողով:

ԳՊՀ Կենսաբանության բաժնի 3-րդ, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 1-ին, նույն բաժնի 3-րդ, Դեղագործական քիմիա բաժնի 2-րդ, Սերվիս բաժնի 2-րդ կուրսերի ուսանողները բովանդակալից շնորհանդեսների և տեսանյութերի ձևով ներկայացրին զեկուցումներ՝ ժամանակակից բժշկության, դեղագործության,

գրասաշրջության և սերվիսի ոլորտներում տեղեկատվական համակարգերի ներդրման, նորագույն տեխնոլոգիաների կիրառման և նորարարությունների վերաբերյալ:

16.04.2015 Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻԳԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերության, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմության և Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնների նախաձեռնությամբ կազմակերպվել էր ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Գիտաժողովի ընթացքում բուհի Հայոց լեզու և գրականություն ու Պատմություն բաժինների ուսանողները հանդես եկան զեկուցումներով՝ անդրադառնալով գրականության մեջ Հայոց մեծ եղեռնի թեմայի ներկայացմանը, մեկդարյա վաղեմություն ունեցող սոսկալի ոճի պատմական հետևանքներին, Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը, Մոսկվայի, Սևրի պայմանագրերի մի շարք դրույթներին, Վանի ինքնապաշտպանական մարտերին, Հայկական հարցի վերաբերյալ կայացած քննարկումներին, Վիլսոնի իրավարար վճռին:

18.04.2015 Թ. «ԱՐԹՆԱՑՐԵՔ ՀՈԳԻՆԵՐԸ»

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բոլոր ծրագրերն ունեին մարդկության դեմ ուղղված սոսկալի հանցագործության մասին առաջադեմ աշխարհին հիշեցնելու և դատապարտելու նպատակ:

Ձեռնարկված բազմաթիվ և բազմաբնույթ միջոցառումները ներկայացվում են ԳՊՀ ուսանողներին:

Հիշատակման են արժանի «Քեզ հետ Հայաստան» համերգաշարը՝ արտասահմանյան կոլեկտիվների և անհատ կատարողների մասնակցությամբ, «100 համերգ» ծրագիրը՝ աշխարհի լավագույն սրահներում հայաստանյան կոլեկտիվների և անհատ կատարողների մասնակցությամբ, թեմատիկ ցուցադրությունները միջազգային հարթակներում, ցուցահանդեսները աշխարհի թանգարաններում, այդ թվում Իտալիայի Վիտորիանո թանգարանում, հայ բիբլիական ժողովրդին և Հայոց ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողովներ Հայաստանում և արտերկրում, բազում ստեղծագործական նախագծեր, ինչպես օրինակ՝ Սերժ Թանկյանի «System of a Down» խմբի համերգաշարը՝ «Արթնացրե՛ք հոգիները» խորագրով:

18.04.2015 Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ԾԱՆՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպվեցին բաց դասեր՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար դասը վարեց բուհի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը:

Դասի ընթացքում քննարկվեցին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 29-ի նիստում ընդունված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի դրույթները:

18.04.2015 Թ. 1.500.000 ԱՆԱՎԱՐՏ ԱՂՈԹՔ...

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանատի և բուհի դասախոս, Գավառի երաժշտական դպրոցի տնօրեն տիկին Արփինե Զարգարյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր գրական-երաժշտական հուշ-ցերեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) բաժնի ուսանողները և Գավառի երաժշտական դպրոցի սաները ասմունքեցին, երգեցին և պարեցին՝ հուզելով դահլիճին, հնչեցին երաժշտական կատարումներ դաշնամուրով, ջութակով և հայոց ծիրանափողով: Ուսանողները ոգեկոչեցին այն հայորդիներին, ովքեր զոհ գնացին մեկդարյա վաղեմություն ունեցող եղկելի ոճրին և թողեցին 1.500.000 անավարտ աղոթք:

22.04.2015 Թ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ «Խաղաղության դաս» խորագիրը կրող ցերեկույթ:

Ցերեկույթը կազմակերպել էր ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալլա Բագոյանը՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) բաժնի առաջին կուրսի ուսանողների մասնակցությամբ, և նվիրված էր մանկական գրքի միջազգային օրվան, միաժամանակ, Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակի նախօրյակին կոչ էր՝ ապահովելու երեխաների խաղաղ մանկություն, ազգերի և պետությունների խաղաղ համակեցություն:

23.04.2015 Թ. ԲԱՑ ԴԱՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված բաց դաս, որը կազմակերպել էր Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը՝ դեկան Համլետ Ղաջոյանի նախաձեռնությամբ:

Դասի ընթացքում Իրավագիտության ամբիոնի լաբորանտ Անի Ամիրյանը ներկայացրեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 29-ի նիստում ընդունված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի դրույթները:

24.04.2015 Թ. ՀԻՇՈՒՄ, ՀԻՇԵՑՆՈՒՄ ԵՎ ՊԱՀԱՆՁՈՒՄ ԵՆՔ

Գավառի պետական համալսարանում կայացավ «Հիշում ենք, հիշեցնում և պահանջում» խորագրով պաստառների և ձեռարվեստի այլ աշխատանքների ցուցադրության բացումը, որի վիրտուալ ցուցադրությունը և աշխատանքների գնահատումը տեղի ունեցավ համալսարանի համացանցային կայքում:

Այա համալսարանի դասախոսներն ու ուսանողները քայլերթ կատարեցին դեպի Գավառի կենտրոնական հրապարակ և գլուխ խոնարհեցին Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողի առջև՝ միանալով հիշատակման ու դատապարտման հզոր ու այլևս՝ անկասելի շարժմանը:

24.04.2015 Թ. ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ՝ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Մեկնարկեց Գավառի պետական համալսարանի կողմից հայտարարված «Հիշում, հիշեցնում և պահանջում ենք» խորագրով պաստառների մրցույթը:

Պաստառները նվիրված էին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին և հայ ժողովրդի վերածննդին:

Քվեարկությունը շարունակվեց մինչև ս. թ. ապրիլի 29-ը:

25.04.2015 Թ. ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Գավառի պետական համալսարանում հյուրընկալվել էին Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը և «Ծիծեռնակ» հրատարակչության տնօրեն Անուշ Վարդանյանը:

Նրանք համալսարանականներին ներկայացրին «Հայ բանաստեղծները եղեռնի մասին» բանաստեղծությունների ժողովածուն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

25.04.2015 Թ. ԱԿՈՒՆՔԻ ԴՊՐՈՑՆ ԷՐ ՈԳԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔԸ

Գավառի պետական համալսարանում հյուրընկալվել էին Գեղարքունիքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոցի 10-րդ Ա դասարանի աշակերտները:

Նրանք կազմակերպել էին գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Միջոցառման ընթացքում հնչեցին ազգային և հայրենասիրական երգեր, կատարվեցին խորխտ ու առնական հայկական պարեր, բեմադրվեցին առանձին հատվածներ հայ գրողների ստեղծագործություններից:

26.04.2015 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ ԵՄ «TEMPUS ARARAT» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ս. թ. ապրիլի 20-24-ը Ավստրիայի Հանրապետության Գրաց քաղաքում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS ARARAT - Հայկական համակարգման գործակալություն «համալսարան-գործատու»» ծրագրի հերթական աշխատաժողովը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին բուհի՝ «TEMPUS ARARAT» ծրագրի աշխատանքային խմբի անդամներ, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը և Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հայարփի Մկրտչյանը:

Աշխատաժողովի նպատակն էր մշակել Որակավորումների ոլորտային շրջանակի (Sectorial Qualification Framework - SQF) օրինակելի մեթոդաբանություն, որը ընդհանուր կլինի բոլորի համար:

26.04.2015 Թ. ՕՐ ՈԳԵԿՈՉՄԱՆ . . .

ԳՊՀ ՈՒԳԸ-ին կից գործող ստեղծագործողների ակումբի կողմից կազմակերպվել էր գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Միջոցառման մասնակիցները պատմական ամփոփ ակնարկով ներկայացրին 1870-1925-ական թվականներին հայոց երկրում տիրող իրավիճակը, երիտթուրքերի կողմից հայ ազգի՝ նախապես մշակված և գազանաբար իրականացված սպանդի վերաբերյալ դրվագներ:

29.04.2015 Թ. ԳՊՀ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ «ԾԱՂԿԱՅԱԿԱՔ»- ԻՆ

2010 թվականից ի վեր՝ ապրիլի 24-ից օրեր անց Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ և «ՎիվաՍել-USU» ընկերության աջակցությամբ Հայոց ցեղասպանության գոհերի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կազմակերպվում է «Ծաղկահավաք», որին ակտիվորեն մասնակցում են նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները: Նախաձեռնության խորհուրդը ծաղիկներին «երկրորդ կյանք» հաղորդելն էր, դրանց լուռ դեսպաններ դարձնելը, ինչպես նաև դրանք բնապահպանական վերամշակման միջոցով կրկին օգտագործելու առաքելությունը:

Հաշվետու տարին ևս բացառություն չէր:

30.04.2015 Թ. ԱՆՑՅԱԼԻ ՉԱՅՆԸ . . .

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության հերթական նախաձեռնությունը ևս Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին էր նվիրված:

Հուշ-ցերեկույթի շրջանակում ուսանողները պատմական ամփոփ ակնարկով անդրադարձան 1914-1916 թթ. արևմտահայ գաղթականների մոլորյալ քարավանների ընթացքին, որը ձգվում էր Երզրունից Դերջան, Երզնկա ու Խարբերդ, Մալաթիա, Հալեպ, մինչև արևահոտ Դեր Ջոր: Հանդիսատեսի դատին ներկայացվեց Համաստեղի «Երնեկ այն օրերուն» պատմվածքի մոտիվներով պատրաստված բեմադրությունը՝ ուսանողների կատարմամբ:

01.05.2015 Թ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ «TEMPUS GOVERN» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ս. թ. ապրիլի 16-30-ն ընկած ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանում տեղի ունեցան վերապատրաստումներ Եվրոպական Միության «TEMPUS-GOVERN. Ինքնավարության և հաշվետվողականության խթանում. Բարձրագույն կրթության ոլորտում Բոլոնիայի սկզբունքներին համահունչ արդյունավետ փոփոխությունների կառավարման արդի համակարգի զարգացում» ծրագրի շրջանակում:

Վերապատրաստումներն անցկացվեցին ապրիլի 16-ին, 22-ին և 30-ին ԳՊՀ պրոռեկտորներ Ն. Կուտուզյանի և Ա. Ապրոյանի կողմից:

03.05.2015 Թ. ԱՎԱՐՏՎԵՑ «ՀԻՇՈՒՄ ԵՄ, ՀԻՇԵՑՆՈՒՄ ԵՎ ՊԱՅԱՆՁՈՒՄ» ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԸ

Գավառի պետական համալսարանում ամփոփվեցին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Հիշում են, հիշեցնում և պահանջում» պաստառների մրցույթի արդյունքները:

Մրցույթին մասնակցեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների գրեթե բոլոր կուրսերը:

Նախապես մշակված ընթացակարգի համաձայն՝ մրցույթի հաղթողները համապատասխանաբար «Հիշում են և պահանջում», «Խոնարհում սրբադասված նահատակներին», «Վերածնունդ», «Պատմական ընդգրկում» և «Հատուկ մրցանակ» անվանակարգերում ընտրվեցին առցանց և ավանդական քվերակությունների արդյունքների, ինչպես նաև մասնագիտական հանձնաժողովի գնահատականների հիման վրա:

Մնացած բոլոր պաստառները ներկայացրած կուրսերը արժանացան շնորհակալագրերի:

Անհատ մասնակիցների շրջանում «Հատուկ մրցանակ»-ների արժանացան Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Չատիկյանը, Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանող Արսեն Բոշյանը, Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Աիդա Ասրիբաբայանը:

06.05.2015 Թ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԳՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2015թ. ապրիլի 29-ից մայիսի 2-ը Գավառի պետական համալսարանում կազմակերպվեց «Ծրագրի մշակման գործիքներ» խորագիրը կրող վերապատրաստման դասընթաց:

Դասընթացը կազմակերպվել էր Եվրոպական Միության «TEMPUS. PACT» ծրագրի շրջանակում և նպատակ ուներ վերապատրաստման մասնակիցներին ներկայացնելու դրամաշնորհային ծրագիր գրելու բոլոր անհրաժեշտ մեթոդներն ու գործիքները:

08.05.2015 Թ. ՄԵՆՔ ԵՂԵԼ ԵՆՔ, ԿԱՆՔ ՈՒ ԿԼԻՆԵՆՔ...

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դեկանատի և Բանասիրական ֆակուլտետի Օտար լեզուների ամբիոնի դասախոս Աննա Մովսիսյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին և հայ ժողովրդի վերածննդին:

Ցերեկույթի ընթացքում հնչեցին հայ ժողովրդի պատմությանն ու վերածննդին նվիրված բանաստեղծություններ հայերեն և անգլերեն լեզուներով, երաժշտական ու պարային կատարումներ, ցուցադրվեցին մարդկության դեմ ուղղված ամենասոսկալի ոճրագործությունը պատկերող տեսանյութեր, անգլերեն լեզվով բեմադրվեց Պերժ Զեյթունցյանի «Մեծ լռություն» ստեղծագործությունից մի դրվագ:

09.05.2015 Թ. ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ... ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ...

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված մայիսյան եռատոնին:

Ուսանողները պատմական անդրադարձ կատարեցին 1941-1945 թվականներին, ներկայացրին պատերազմի ընթացքում տարբեր ուղղություններով ծավալված մարտական դրվագները: Ցուցադրվեցին «Մեծ հայրենական»-ի վերաբերյալ տեսանյութեր, հնչեցին հաղթական ելքով պատերազմի խրոխտ ոգով պարուրված երգեր և բանաստեղծություններ:

10.05.2015 Թ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

2015թ. մայիսի 6-8-ը Գավառի պետական համալսարանում տեղի ունեցան վերապատրաստումներ Եվրոպական Միության «TEMPUS-GOVERN» ծրագրի շրջանակում:

Եռօրյա վերապատրաստումները վարեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և Ակադեմիական քաղաքականության վարչության Որակի ապահովման բաժնի մասնագետ Արմինե Գրիգորյանը:

**12.05.2015 Թ. ԲՈՒՅԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ**

ԵՊՀ-ում տեղի ունեցավ Եվրամիության «Տեմպուս.ATHENA-Աջակցություն Եվրոպական հարևանության տարածքի բուհերի ինքնավարության ու կայունության ամրապնդմանը» ծրագրի երկօրյա ֆորումը:

Ֆորումը նվիրված էր Հայաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի բուհական համակարգի ինքնավարությանը և կայունությանն առնչվող մարտահրավերներին, դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին, առկա խնդիրների համեմատական վերհանմանն ու վերլուծությանը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը, վարչության մեթոդիստներ Լիլիթ Թոռչյանը, Կարինե Մարուխյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

Ծրագրին անդամակցող եվրոպական բուհերի պատվիրակները ներկայացրին իրենց փորձը, զարգացման ծրագրերը, ինչպես նաև հանդես եկան համապատասխան առաջարկություններով:

**14.05.2015 Թ. ԵՐԵՎԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ**

Հայաստանի քաղաքամայր Երևանը վերածվել էր Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մայրաքաղաքի:

2015թ. մայիսի 14-ին Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մեկնարկեց Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովն ու Բոլոնիայի գործընթացի 4-րդ քաղաքական ֆորումը, որին մասնակցում են 47 երկրներից ու միջազգային կազմակերպություններից շուրջ 500 պատվիրակներ, այդ թվում 20 երկիր ներկայացված է նախարարների մակարդակով:

Գավառի պետական համալսարանից գագաթաժողովին և քաղաքական ֆորումին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը:

**14.05.2015 Թ. ՆՈՐ ՈՐԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ**

2015թ. մայիսի 12-14-ը Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «TEMPUS VERITAS» ծրագրի աշխատաժողովը՝ հայաստանյան ու եվրոպական տարբեր բուհերի և հաստատությունների պատվիրակների մասնակցությամբ, «Award Criteria and Quality standards in PhD education» խորագրով:

Ծրագրին մասնակցեցին հայաստանյան 11 բուհեր, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանը, ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարությունը, Որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) և «Կրթության կառավարում» հասարակական կազմակերպությունը:

Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում էին պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Զաքոյանը, Բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Մարինե Բադալյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

Աշխատաժողովի նպատակն էր մշակել բարձրագույն կրթության 3-րդ մակարդակի՝ ասպիրանտուրայի որակի նոր ստանդարտները և աստիճանաշնորհման չափորոշիչները:

15.05.2015 Թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS. GOVERN» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2015թ. մայիսի 12-14-ը Երևանի Մխիթար Զերացու անվան պետական բժշկական համալսարանում կայացավ աշխատաժողով Եվրոպական Միության «TEMPUS. GOVERN» ծրագրի շրջանակում, որը կրում էր «Ռազմավարական և ենթակառուցվածքային ղեկավարում» խորագիրը և վերաբերում էր ծրագրի աշխատանքային երրորդ փաթեթին:

Գավառի պետական համալսարանից հանդիպմանը ներկա էին բուհի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, Որակի ապահովման բաժնի մասնագետներ Արմինե Գրիգորյանը և Մանանե Զակոբյանը:

17.05.2015 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԷՔՍԿՈՒՐՍԱՎԱՐՆԵՐ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի Սերվիսի բաժնի առաջին կուրսի ուսանողներն իրենց ուժերը փորձեցին որպես էքսկուրսավարներ:

Նախաձեռնությունը ԳՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Գայանե Սարգսյանինն էր:

«Ռուսաց լեզու» առարկայի շրջանակում ուսանողները ռուսերենով պատրաստել էին զեկույցներ Գավառի պետական համալսարանի, Գավառ քաղաքի տեսարժան վայրերի՝ Զրաչյա Բունիաթյանի անվան Գավառի պատկերասրահի և Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաբերյալ, որոնք ներկայացվեցին քաղաքով կատարված շրջայցի ընթացքում:

17.05.2015 Թ. ԶԵՐԹԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՄ «TEMPUS. PACT» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2015թ. մայիսի 14-16-ը Երևանի պետական համալսարանում Եվրոպական Միության «TEMPUS. PACT - Project Actors Capacity Training in Caucasus՝ Կովկասյան տարածաշրջանում գիտական ներուժի (գիտահետազոտական նախագծերի մասնակիցների) վերապատրաստում» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր աշխատանքային հանդիպում՝ ծրագրի հայաստանյան և Եվրոպական գործընկեր բուհերի ու կազմակերպությունների միջև:

Աշխատաժողովը կազմակերպվել էր Գավառի պետական համալսարանի և Երևանի պետական համալսարանի համագործակցության արդյունքում և կրում էր «Ծրագրի մշակման գործիքներ» խորագիրը:

20.05.2015 Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԶԵՏՔԵՐՈՎ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում ձևավորված ավանդույթի համաձայն՝ 2015թ. մայիսի 18-ին ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ճանաչողական այց Զայաստանի Զանրապետության Կենտրոնական բանկ:

Բուհի տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսների և Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման բաժնի ուսանողները եղան ԶԶ ԿԲ թանգարանում,

շրջեցին Հայաստանի դրամաշրջանառության պատմության, ՀՀ արժույթի, դրամանիշերի և թղթադրամների ստեղծման գործընթացի, դրամի պաշտպանական հատկանիշների, կեղծիքների բացահայտման առկա մեթոդների մասին պատմող ցուցասրահներով:

27.05.2015 Թ. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՅԱՆՁ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում կազմակերպվել էր հանդիպում Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժնի ռեգիոնալ գործառույթների կառավարիչ Օգսեն Գյուլնազարյանի հետ, որի ընթացքում բանախոսի կողմից ներկայացվեցին «Բիզնեսի կառավարում» և «Սերվիս և հյուրասիրություն» թեմաներով դասընթացներին մասնակցելու հնարավորությունները:

29.05.2015 Թ. ԳԻՏԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

2015թ. մայիսի 28-ին Գավառի պետական համալսարանի Տուրիզմի ակումբի անդամները հանդես էին եկել նախաձեռնությամբ՝ գիտաճանաչողական էքսկուրսի շրջանակներում տոնելու Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորման օրը:

Ուսանողները՝ բուհի բնագիտական ֆակուլտետի Աշխարհագրության ամբիոնի լաբորանտ Լալա Սկրտչյանի հետ միասին, առավոտ կանուխ ուղևորվեցին դեպի Սարդարապատ, որտեղ մեծ խանդավառությամբ մասնակցեցին կազմակերպված միջոցառումներին, շրջեցին համալիրի թանգարանի ցուցասրահներով:

Հաջորդ կանգառը Մուսա լեռան բարձունքն էր, որը հաղթահարելուց հետո համալսարանականները գլուխ խոնարհեցին Մուսա լեռան հերոսամարտի հուշակոթողի առջև:

02.06.2015 Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՄ «TEMPUS-PACT» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2015թ. մայիսի 27-ից հունիսի 1-ը Ավստրիայի Վիեննա քաղաքում գործող «Դիե Բերատեր» խորհրդատվական կառույցում տեղի ունեցավ «Tempus. Pact» ծրագրի հինգերորդ աշխատաժողովը, որին մասնակցեց ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

Աշխատաժողովի օրակարգում ընդգրկված էին հարցեր ծրագրի ընթացիկ հաշվետվությունների, ս. թ. մայիսի 14-16-ը Երևանում կազմակերպված վերապատրաստման արդյունքների, ծրագրի համացանցային պաշտոնական կայքէջի վերաբերյալ: Վերապատրաստման նպատակն էր մասնակիցներին փոխանցել դրամաշնորհային ծրագրեր կազմելու վերաբերյալ գիտելիքներ, զինել անհրաժեշտ մեթոդներով, գործիքներով, հմտություններով ու կարողություններով:

03.06.2015 Թ. ԱՊԱԳԱ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԸ՝ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի նախաձեռնությամբ բուհի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողները հերթական պրակտիկական անցան Բյուրականում:

Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում ուսանողները ծանոթացան Բյուրականի խոշոր աստղադիտակի՝ ZTA-2.6 - 2.6մ Կասեգրեյնի ռեֆլեկտորի աշխատանքին, տեղեկացան, որ այն նախագծվել է Բագրատ Հովհաննիսյանի կողմից դեռևս խորհրդային Ռուսաստանի LOMO ասոցիացիայում և աշխատում է 1976 թվականից:

Այնուհետև այցելեցին Վիկտոր Համբարձումյանի անվան տուն-թանգարան՝ շրջելով աշխարհահռչակ գիտնականի կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցասրահներով:

05.06.2015 Թ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ KINDLE ԸՆԹԵՐՑԻՉՆԵՐԸ՝ ԳՊՀ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի տնօրեն Ներսես Հայրապետյանին:

Հանդիպումը կազմակերպվել էր ԱՄՆ դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի կողմից իրականացվող «Շրջիկ դասագրքեր» ("Traveliry textbooks") ծրագրի շրջանակում, ԳՊՀ Օտար լեզուների ամբիոնի նախաձեռնությամբ՝ ի դեմս ամբիոնի վարիչ Գայանե Բդեյանի:

«Շրջիկ դասագրքեր» ծրագրի շրջանակում Համալսարանի գրադարանին նվիրաբերվեցին 2 KINDLE ընթերցիչ, անգլալեզու հարմարեցված և Audio-գրքեր, որոնք ոչ միայն նախատեսված են «Անգլերեն լեզու» բաժնի ուսանողների, այլև լեզուն սովորել ցանկացողների համար:

10.06.2015 Թ. ԵՄ «TEMPUS.LeAGUe» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ՝ ԳՎԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS.LeAGUe» ծրագրի հերթական աշխատաժողովը:

Հայաստանյան գործընկերներից հանդիպմանը մասնակցեցին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետ Կարինե Կոստանյանը, «Erasmus+»-ի Հայաստանի ազգային գրասենյակի ղեկավար Լանա Կառլովան, Հայաստանի ազգային ազրարային, Ռուս-հայկական (Սլավոնական), Վանաձորի պետական համալսարանների, Ցկյանս կրթության հայաստանյան լիգայի ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի օրակարգի համաձայն՝ ԵՄ «TEMPUS.LeAGUe» ծրագրի ԳՊՀ աշխատանքային խմբի անդամ Լիլիթ Թոռչյանը բովանդակալից շնորհանդեսի ձևով ներկայացրեց շարունակական կրթության նպատակներն ու ձևերը, ԳՊՀ-ի կողմից ֆորմալ կրթությանը զուգահեռ ներքին և արտաքին շահառուների համար իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերը:

Ծրագրի անդամ-պետությունների պատվիրակների կողմից թեմայի շրջանակում ներկայացվեցին զեկուցումներ:

14.06.2015 Թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՈՒՄ

2015թ. հունիսի 9-ին Ռուսաստանի Դաշնության քաղաքամայր Մոսկվայի հայկական տաճարային համալիրի Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպություն եկեղեցում կայացավ «Հայաստանի Հանրապետություն» պատմական հանրագիտարանի հեղինակ, գլխավոր խմբագիր Սամվել Հակոբյանի և հանրագիտարանի համահեղինակ, խմբագիր, Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Արտեմ Հակոբյանի հանդիպումը թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Եզրաս Ներսիսյանի հետ:

Հանրագիտարանի գլխավոր խմբագիր Սամվել Հակոբյանը, ԳՊՀ ուսանող Արտեմ Հակոբյանը և պարոն Նովոպաշինը մշակութային անգնահատելի ժառանգության ստեղծման, հայ-ռուսական բարեկամության ամրապնդման համար Մոսկվայի թոշակառուների, պատերազմի և աշխատանքի վետերանների, զինված ուժերի և իրավապաշտպան մարմինների քաղաքային խորհրդի նախագահության հրամանով ՌԴ Ռուսական գրչության ակադեմիայի փոխնախագահ, պետական մշակութային քաղաքականության հարցերով դաշնային խորհրդի անդամ, իշխան Վալերիյ Նարինյանի կողմից պարգևատրվեցին «Պատվելի Սերգիյ Ռադոնեժսկու ծննդյան 700-ամյակի» հուշամեդալներով:

18.06.2015 Թ. ԳՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Գավառի պետական համալսարանի և Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորականների միության համագործակցության ծրագրի շրջանակում ՀՀ Երկրապահ կամավորականների միության վարչության նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի հրամանով ՀՀ Երկրապահ կամավորականների միության Գավառի տարածքային բաժանմունքի նախագահ Աշոտ Գասպարյանի կողմից Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ԳՊՀ աշխատակիցներ, միության անդամ, ազատամարտիկ Ռուբիկ Խաչատրյանը, ՀՀ ԵԿՄ Գավառի երիտասարդ երկրապահների տարածքային բաժանմունքի նախագահ, ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակից Գնել Գևորգյանը պարգևատրվեցին «Հայաստանի երկրապահ» հուշամեդալներով:

Տիկին Հակոբյանը հայրենամաստ գործունեության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մայրություն» հասարակական կազմակերպության կողմից պարգևատրվեց նաև «Մայրական երախտագիտություն» հուշամեդալով:

19.06.2015 Թ. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՆՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՈՒՐԿԱ

2015թ. հունիսի 19-ին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում մեկնարկեց Եվրոպական Միության «TEMPUS. LaMANCHE» ծրագրի ազգային կոնֆերանսը:

Կոնֆերանսին մասնակցեցին ինչպես հայաստանյան, այնպես էլ Եվրոպական երկրներից գործընկեր բուհերի ներկայացուցիչներ, ովքեր քննարկեցին բուհերում բովանդակային և կառուցվածքային փոփոխությունների տարբեր ուղղություններ:

Գավառի պետական համալսարանի պատվիրակության կազմում էին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտորներ Նելլի Կուտուզյանը և Արսեն Ապրոյանը, բուհի ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, հիշյալ վարչության մեթոդիստ Լիլիթ Թոռչյանը, ԱԲՎ ՈԱԲ մասնագետ Արմինե Գրիգորյանը, ԳՊՀ ուսանողական խորհրդի փոխնախագահ Արեգ Սինանյանը:

Գավառի պետական համալսարանի ինֆորմատիզացման կառուցակարգերի և գործիքների մասին շնորհանդես-զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

20.06.2015 Թ. ԵՄ «TEMPUS. LaMANCHE» ԾՐԱԳՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. LaMANCHE» ծրագրի ազգային կոնֆերանսը:

Կոնֆերանսին ներկա էին գործընկերներ Հայաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Պորտուգալիայից և Մեծ Բրիտանիայից, ովքեր համախմբվել էին՝ քննարկելու բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնման և կառավարման վերաբերյալ հարցեր:

Աշխատաժողովի օրակարգի համաձայն՝ ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը, Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարանի պատվիրակ Արուսյակ Աբրահամյանը ներկայացրին համապատասխանաբար «Գավառի պետական համալսարանում փոփոխությունների նախաձեռնում և կառավարում», «Ուսանողների կառավարում և ինքնակառավարում», «Բուհերի և ոչ առևտրային ու հասարակական կազմակերպությունների, մասնավոր սեկտորի միջև համագործակցության հիմնախնդիրները կրթության միջազգայնացման պայմաններում» թեմաներով շնորհանդես-զեկուցումներ, որոնց հաջորդեց բովանդակակից քննարկում:

26.06.2015 Թ. ԿԱՅԱՅԱՎ ԵՄ «TEMPUS. ARMENQA» ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

2015թ. հունիսի 21-ից 25-ը Շվեդիայի Լինչոպինգի համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «TEMPUS. ARMENQA - Ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների իրականացում Հայաստանում (ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում)» ծրագրի երրորդ աշխատաժողովը:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցում էին պրոռեկտորներ Նելլի Կուտուզյանը, Արսեն Ապրոյանը և բուհի ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին Շվեդիայի և Եվրոպական մի շարք երկրների որակավորումների ազգային շրջանակի մակարդակները, դրանց բաղադրիչները, կիրարկման ոլորտները:

Աշխատաժողովի ավարտին ներկայացվեցին ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 2015-2020 թթ. ռազմավարական հիմնական ուղղությունները, ինչին հաջորդեց «TEMPUS. ARMENQA» ծրագրի շրջանակում հայաստանյան բուհերի հաշվետվությունների ներկայացումը:

27.06.2015 Թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՏԱԼԻՆԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանում ձևավորված ավանդույթի համաձայն՝ ներկայացվեց հերթական շնորհանդես-հաշվետվությունը՝ ԳՊՀ միջազգային ծրագրերի շրջանակում Եվրոպական առաջատար բուհերում համալսարանի դասախոսների անցած վերապատրաստումների արդյունքների վերաբերյալ:

ԳՊՀ ռեկտորատի ընդլայնված նիստի ընթացքում բուհի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ռուզաննա Սարգսյանը բովանդակակից շնորհանդեսի միջոցով ներկայացրեց Եվրոպական Միության «Erasmus Mundus. Humeria» ծրագրի շրջանակում 2015թ. ապրիլի 19-ից մայիսի 3-ը Էստոնիայի Տալինի համալսարանում անցած վերապատրաստման արդյունքները:

05.07.2015 Թ. ԲԱՐԻ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ՝ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Գավառի պետական համալսարանում ձևավորված գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ հուլիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը,

քսաներեքամյա բուհը կյանք ճանապարհեց առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների 18-րդ սերնդին:

Շրջանավարտներին օրհնության խոսք հղեց Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի տեղապահ քահանա Տեր Գնել Մարտիրոսյանը:

Հավաստագրեր ստացան ԳՊՀ «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացը հաջողությամբ ավարտած և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Ուսանողական ծրագրային թիմի ակտիվ ուսանողները:

ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի հարյուրավոր շրջանավարտներ բուհի ռեկտոր տիկին Ռուզաննա Հակոբյանի, ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ պարոնայք Թաթուլ Ասոյանի, Մարտին Ավագյանի, Սամվել Ամիրխանյանի և Համլետ Ղաջոյանի ձեռամբ ստացան իրենց կրթության վկայագրերը:

12.07.2015 թ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «TEMPUS. HEN-GEAR» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR» ծրագրի շրջանակում Իսպանիայի Թագավորության Գրան Կանարիայի Լաս Պալմասի համալսարանում ս. թ. հուլիսի 7-ից 9-ը տեղի ունեցավ ծրագրի հերթական աշխատաժողովը, որին մասնակցեցին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

Աշխատաժողովի ընթացքում ելույթ ունեցան մասնակից բուհերի ներկայացուցիչները, ովքեր կարևորեցին ծրագրի նպատակները, հայաստանյան համալսարանների շրջանավարտների զբաղվածության ապահովմանը միտված ժամանակակից կառուցակարգերի մշակումն ու գործարկումը, ՀՀ-ում «ALMA-LAUREA» միջհամալսարանական կոնսորցիումի փորձի ուսումնասիրումն ու տեղայնացումը:

12.08.2015 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ`ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ

Ամփոփվեցին Հայ կրթական հիմնարկության կողմից 2015-2016 ուսումնական տարվա համար հայտարարված կրթաթոշակային մրցույթի արդյունքները:

Գավառի պետական համալսարանից մրցույթին մասնակցության հայտ էր ներկայացրել 20 ուսանող, որոնցից անցկացված 2 փուլերի արդյունքում հաղթող ճանաչվեցին 4-ը:

22.08.2015 թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՋՈԿԱՏԸ` «ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ - 2015»-Ի ՄԱՍՆԱԿԻՑ

Գավառի պետական համալսարանի թիմը ս. թ. օգոստոսի 14-ից 20-ը մեծ ոգևորությամբ մասնակցեց «Համաբուհական բանակում - 2015»-ին:

Նախաձեռնությունը կյանքի էր կոչվել Երևանի պետական համալսարանի ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի, Ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության համատեղ ջանքերով և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Ծրագիրը նպատակ ուներ գիտահանրամատչելի սեմինարների, ինտելեկտուալ խաղերի, ազգային երգ ու պարերի միջոցով համախմբել ՀՀ բուհերում, Ջավախքում և Արցախում սովորող երիտասարդներին, նրանց ներկայացնել հայոց պատմամշակութային արժեքները և մայրենի բնության անձեռակերտ կրթողները:

Արցախի Տոդ գյուղում անցկացվող բանակումին մասնակցում էին ավելի քան 100 ուսանողներ Հայաստանի, Արցախի և Ջավախքի տարբեր բուհերից և հասարակական միավորումներից:

Գավառի պետական համալսարանից բանակումին մասնակցում էին Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Շահանե Գրիգորյանը, նույն բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գևորգ Սերոբյանը, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Վլադիմիր Ղասաբօղլյանը, Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Յովետյանը, Ֆինանսների բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Վարդան Գարեյանը:

24.08.2015 Թ. ԱՎԱՐՏՎԵՑ «ԲԱՁԵ»-Ի ՀԵՐԹԱՎԱՆ ՍՐԸՆԹԱՅ ՃԱԽՐԸ

Ս. ք. օգոստոսի 17-ից 23-ը Հայաստանի Հանրապետության Ծաղկաձոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանն անցկացվեց արդեն ավանդական դարձած «Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքը:

Հարյուրավոր երիտասարդներ Հայաստանից, Արցախից և սփյուռքից համախմբվել էին հայոց եռագույնի ներքո՝ իրենց մասնակցությունը բերելու բազմաբնույթ մարզական (վոլեյբոլ, շախմատ, սեղանի թենիս, մինի ֆուտբոլ, պարանի ձգում, բազկամարտ, ազգային խաղեր), մշակութային (երգ, պար, նորաձևություն) և ինտելեկտուալ մրցույթների:

«Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքին առանձին ջոկատով մասնակցում էր նաև Գավառի պետական համալսարանի թիմը:

Հավաքին՝ ըստ համապատասխան անվանակարգերի, մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչներ՝ Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ավետիք Նանագուլյանը, Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսների բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Անիկ Հարությունյանը, նույն ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման բաժնի 3-րդ կուրսի ուսանող Սիփան Հակոբյանը, Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Աիդա Ասրիբաբյանը, Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 3-րդ կուրսի ուսանող Գառնիկ Թոռչյանը, նույն կուրսի ուսանողուհի Հասմիկ Մովսիսյանը, 1-ին կուրսի ուսանող Երեմ Սարգսյանը, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Անդրանիկ Ստեփանյանը, Հեռակա ուսուցման ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Իսոյանը:

ԳՊՀ թիմը մարմնջազույնների կազմում վաստակեց մեկ ոսկե, 1 արծաթե և երկու բրոնզե մեդալներ և արժանացավ պատվոգրերի:

25.08.2015 Թ. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՆԱՍԱՐԱՆՈՒՄ

Աշխատանքային այցով ՀՀ Գեղարքունիքի մարզում էր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար պարոն Արմեն Աշոտյանը:

Մարզում կատարած շրջայցի վերջնակետը Գավառի պետական համալսարանն էր, որտեղ պարոն նախարարը հանդիպեց բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական համակազմի ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց հուզող հարցերն ուղղեցին հյուրերին: Նախարարը և մարզպետը, պատասխանելով հնչած հարցերին, նշեցին, որ, հնարավորության դեպքում բարձրացված խնդիրներին կտրվեն համապատասխան լուծումներ:

30.08.2015 Թ. ԿԱՅԱՑՎԱ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Կայացավ 2015-2016 ուսումնական տարում ԳՊՀ առկա ուսուցման հումանիտար, տնտեսագիտական, բանասիրական և բնագիտական ֆակուլտետներ ընդունված ուսանողների և նրանց ծնողների հետ հանդիպումը:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին ԳՊՀ-ում գործող կրեդիտային համակարգի սկզբունքները, ուսանողների կարգապահական կանոնները, սովորողներին ներկայացվող պահանջները, միջազգային համագործակցության ծրագրերը:

ԳՊՀ ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը առցանց ռեժիմում բովանդակալից ներկայացրեց Գավառի պետական համալսարանի էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգից և ԳՊՀ էլեկտրոնային «E-Library. GSU» գրադարանից օգտվելու կանոնները, դրանց ընձեռած հնարավորությունները և առավելությունները:

Ցուցադրվեց բուհի գործունեության մասին պատմող տեսաֆիլմ:

Ուսանողներին բաժանվեցին ֆակուլտետների մասին պատմող տեղեկատվական թերթիկներ:

Յ. Է. Սկրտչյան`

*ԳՊՀ Հանրության հետ կապերի և լրատվության
բաժնի մասնագետ*

**ԳՊՀ-Ի ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ**

<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Ժառայողական</i>	<i>Էլեկտրոնային փոստի հասցե</i>
ԳՊՀ-ի խորհրդի նախագահ Հակոբյան Հրանուշ Հրանտի	0-60-46-02-01 0264-2-57-75	minister@mindiaspora.am
ԳՊՀ ղեկավար Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	0-60-46-02-01	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուսուզյան Նելլի Ալբերտի	0-60-46-04-03	n.kutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	0-60-46-12-64	a.aproyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթև Արտիկի	0-60-46-12-44	fphilology@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	0-60-46-12-55	fnsociences@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	0-60-46-12-70	fhumanities@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	0-60-46-12-66	feconomics@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	0-60-46-12-90	fptedu@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	0-60-46-12-42	academicpolicy@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Նանագուլյան Ավետիք Ստեփանի	0-60-46-12-70	a.nanagulyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Բաղայան Մարինե Միքայելի	0-60-46-12-40	fphilology@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերզոյան Մարիամ Նորիկի	0-60-46-12-60	feconomics@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	0-60-46-12-70	fhumanities@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վոլոդյայի	0-60-46-12-50	fnsociences@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	0-60-46-12-46	gnumner@gsu.am
Կադրերի և հատուկ բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	0-60-46-12-41	hr@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	0-60-46-12-49	union@gsu.am
Ավագ պարետ Զաքոյան Տարիել Հրաչիկի	0-60-46-12-86	commandant@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	8
Միջազգային համագործակցություն.....	39
Դասախոսների գործուղումներ.....	109
Ուսումնագիտական աշխատանքներ.....	115
Բանասիրական ֆակուլտետ.....	134
Բնագիտական ֆակուլտետ.....	154
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	177
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	194
Հեռակա ուսուցման ֆակուլտետ.....	221
Ակադեմիական քաղաքականության վարչություն.....	226
ԳՊՀ գրադարան.....	236
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժին.....	241
Տեղեկատվական համակարգերի զարգացման և սպասարկման աշխատանքներ.....	248
ԳՊՀ Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոն.....	253
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն.....	256
Ուսանողական խորհուրդ և Ուսանողական գիտական ընկերություն.....	257
Տնտեսատեխնիկական գործունեություն.....	261
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ.....	266
Տեղեկատու.....	307

CONTENTS

Projects, Development and Results.....	3
General Information on the University.....	8
International Cooperation.....	39
Business Trips of the Academic Staff.....	109
Educational and Research Activities.....	115
Department of Philology.....	134
Department of Natural Sciences.....	154
Department of the Humanities.....	177
Department of Economics.....	194
Department of Part-Time Education.....	221
Academic Policy Department.....	226
GSU Library.....	236
GSU Public Relations and Information Department.....	241
Activities for IT Development and Service.....	248
GSU University-Employer Cooperation, Alumni and Career Center.....	253
GSU Trade Union.....	256
Student Council and Student Scientific Society	257
Economic-Technological activity.....	261
GSU Memorable Events.....	266
Telephone and E-mail Directory.....	307

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ GAVAR STATE UNIVERSITY

2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ACTIVITY REPORT
OF THE ACADEMIC YEAR 2014-2015

ԳԴՅ
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
Էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU
Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am